

2017

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ



Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. 146 էջ:

Մույն ձեռնարկի նպատակը ներառական կրթության ներդրման ուղղությամբ վերապատրաստում
իրականացնող մասնագետների և հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների
մասնագիտական զարգացման գործընթացին աջակցելն է:
Ձեռնարկը ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով երաշխավորված է գործածության որպես
ուսումնասօժանդակ նյութ:

*Ներառումը սկսվում է ընտանիքում,
շարունակվում դպրոցում*

և

կայանում է հասարակության մեջ:



Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար նախատեսված սույն ձեռնարկը կազմող 3 մոդուլներն ընդգրկում են վերապատրաստման դասընթացի յուրաքանչյուր բաղադրիչի պլանավորումը, դասընթաց վարելու համար անհրաժեշտ բաշխման նյութերը, դասապրոցեսում օգտագործվող վարժությունների ու մեթոդական հնարների նկարագրությունը և այլ օգտակար տեղեկատվական նյութեր: Յուրաքանչյուր մոդուլի անբաժան մաս են կազմում դասավանդման գործընթացում օգտագործվող սլայդները, կարճ տեսաֆիլմերը և այլն: Ձեռնարկում ներկայացված է նաև բառարան, որտեղ ամփոփված են մոդուլներում կիրառվող ներառական կրթության հասկացություններ և **եզրույթներ**:

Նախաբան

Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինության և ուսուցիչների համար նախատեսված «Ներառական կրթություն. ուսումնամեթոդական ձեռնարկը» կազմվել է մոդուլային ուսուցման հիմքով և բաղկացած է համապատասխանաբար 3 մոդուլից:

Մույն ձեռնարկի նպատակը ներառական կրթության ներդրման ուղղությամբ վերապատրաստում իրականացնող մասնագետների և հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների մասնագիտական զարգացման գործընթացին աջակցելն է: Ձեռնարկի մշակման աշխատանքներն իրականացրել է «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը՝ «Առաքելություն Արևելք» դանիական միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, **ԱՄՆ Զարգացման գործակալության** և «Բաց հասարակության հիմնադրամներ» Լոնդոնի գրասենյակի «Վաղ մանկության ծրագրի» (Early Childhood Program) օժանդակությամբ:

Ներառական կրթության իրականացման գործընթացը ներդրվել է փուլերով, և շարունակաբար ընդլայնվել է այդ գործընթացում ընդգրկված դպրոցների ցանցը: Ներառական կրթության իրականացման օրենսդրական և ուսումնամեթոդական դաշտերի շարունակական կատարելագործմամբ հանրակրթության ոլորտում ներդրման գործընթացները ուղեկցվել են դպրոցների մանկավարժական համակազմի պարտադիր վերապատրաստմամբ:

Հանրակրթության ոլորտում ներառական կրթության իրականացման նախաձեռնությունը սկսվել է 2001 թվականից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա: 2005 թվականին՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ներառական կրթությունը դարձավ պետական քաղաքականություն:

2014 թ. դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումով Հայաստանի Հանրապետությունը ամրագրեց համընդհանուր ներառական կրթության անցման քաղաքական կամքը. «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»: Միաժամանակ, ուժը կորցրած ճանաչվեց 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը և ապահովվեց միասնական իրավական դաշտ ներառական կրթության իրականացման համար:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ¹

Ներառական կրթություն - յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումը:

Հատուկ հանրակրթական դպրոց - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև՝ հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:

Կրթության առանձնահատուկ պայմաններ - անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ - ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ - ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն - երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում - անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների ամբողջությունը:

Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ - Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:

Անհատական ուսուցման պլան - հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված

¹ Հասկացությունների և եզրույթների մեծ մասը վերցված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից:

փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

Ուսուցչի օգնական - կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող:

Մանկավարժական աշխատող - սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև՝ մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից:

Ուսուցանող գնահատում - սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացը, ինչպես նաև՝ հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Հայտորոշում - դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումների, թերացումների, թերությունների ու սխալների բացահայտում:

Զարգացման մոտակա գոտի - գործողությունների շրջանակ, որտեղ սովորողը կարողանում է կատարել օգնությամբ:

Համագործակցային ուսուցում/ուսումնառություն - Դասավանդման համակարգված, կանոնակարգված ռազմավարություն, որի դեպքում սովորողների փոքր խմբերը համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ խնդրի լուծման համար:

Փոխներգործուն մեթոդ - Փոխներգործուն մեթոդը ենթադրում է սովորողների ավելի ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ, ինչպես նաև՝ ուսուցման գործընթացում սովորողի ակտիվության գերկայություն:

Ուսուցման մեթոդ - Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Հաշմանդամություն - առողջական խնդիրներ ունեցող անձանց ու շրջակա միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք, որը խոչընդոտում է նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:

Հաշմանդամություն ունեցող անձ - Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, որոնք երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով:

ԶԵՌՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՈՒՂԵԿԻՑ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԱԿ- Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԴՈՒՈՒԲ – սովորողի դիտարկում և ուսումնառության ունակությունների բացահայտում

ԱՈՒՊ – անհատական ուսուցման պլան

ՈՒԳ – ուսուցանող գնահատում

ԽԻԿ – խթանում, իմաստի ընկալում և կշռադատում

ՄՀԿ – մանկավարժահոգեբանական կենտրոն

ՊՈԱԿ – պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՏՀՏ - տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ

ՀՊԶ- հանրակրթության պետական չափորոշիչ

ՄՈՂՈՒԼ 1

«Ներառական կրթություն. կրթություն բոլորի համար»

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման սույն ուղեցույցի 1-ին մոդուլը՝ «Ներառական կրթություն. կրթություն բոլորի համար», նվիրված է ներառական կրթության էության, գաղափարախոսության հիմնադրույթների մեկնաբանությանը: Այն ընդգրկում է ներառական կրթության վերաբերյալ նյութեր՝ առկա կարծրատիպերի հաղթահարման, ՀՀ հանրակրթության ոլորտում ներառական կրթության ներդրման օրենսդրական հիմքերի և ապագա զարգացումների, հաշմանդամության մոդելների, դպրոցում ներառական կրթության մարտահրավերների և այլնի վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼ 1՝ «Ներառական կրթություն. կրթություն բոլորի համար»

1.	Մոդուլի նպատակը	Նպաստել ներառական կրթության հիմնադրույթների ընկալմանը, ներառական կրթության վերաբերյալ առկա կարծրատիպերի հաղթահարմանը, ՀՀ հանրակրթության ոլորտում ներառական կրթության ներդրման օրենսդրական հիմքերի, հաշմանդամության մոդելների և դպրոցում ներառական կրթության մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ գործընթացների պլանավորմանը և այդ գործընթացում թիմային մասնակցության գործողությունների մշակման ամրապնդմանը:
2.	Տևողությունը	540 րոպե, որից 270 րոպեն՝ գործնական, 180 րոպեն՝ տեսական
3.	Դասընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մասնագիտական կրթություն:
4.	Գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարմակարգակի ապահովումն է:
5.	Վերապատրաստման արդյունք 1	Մասնակիցները պատկերացնում են ներառական կրթության էությունը՝ հիմնված կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման վրա:
6.	Կատարման չափանիշները	<p>1. Մասնակիցները ներկայացնում են ներառական կրթությունը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն:</p> <p>2. Մասնակիցները հստակ տարանջատում են ներառական կրթությունը հատուկ և ինտեգրված կրթությունից:</p>
7.	Վերապատրաստման արդյունք 2	Վերապատրաստման մասնակիցները պատկերացնում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության կազմակերպման գործընթացը սոցիալական մոդելի տեսանկյունից:

8.	Կատարման չափանիշները	<p>1. Սովորողները կարողանում են տարբերակել հաշմանդամության սոցիալական և բժշկական մոդելները:</p> <p>2. Մասնակիցները պատկերացնում են սոցիալական մոդելի վրա հիմնված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության կազմակերպման կարգը:</p>
9.	Վերապատրաստման արդյունք 3	<p>Մասնակիցները պատկերացնում են, թե ինչպես հաղթահարեն ներառական կրթության մարտահրավերները իրենց ամենօրյա աշխատանքային գործունեության ընթացքում:</p>
10.	Կատարման չափանիշները	<p>1. Մասնակիցները գիտեն ներառական կրթության հիմնական մարտահրավերների մասին:</p> <p>2. Մասնակիցները կարողանում են ներառական կրթության մարտահրավերները տեղայնացնել իրենց դպրոցի ուսումնական գործընթացներում:</p>

Դաս 45 րոպե	Բովանդակությունը	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր և սլայդներ	Տևողություն
1	<p>Կազմակերպչական աշխատանքներ`</p> <ol style="list-style-type: none"> 1. դասընթացի նպատակը (հակիրճ), 2. մասնակիցների ցուցակ, 3. աշխատանքի ժամանակացույց <p>Ծանոթություն</p> <p>«Սառույցի ջարդում» վերաբերմունքի փոփոխության նպատակով</p> <p>Դասընթացի մասնակիցների ակնկալիքները և մտավախությունները</p>	<p>Դասախոսություն</p> <p>Վարժություններ 1.1, 1.2</p> <p>Վարժություն 1.3</p> <p>Ծառ, ծաղկաման, T-աձև աղյուսակ</p>	<p>Պաստառ 1 Ցուցակ Պաստառ 2</p> <p>«Կետերով թեստ»</p> <p>Պաստառ 3</p>		<p>15 րոպե</p> <p>10 րոպե</p> <p>10 րոպե</p> <p>10 րոպե</p>
2	<p>Հարց. «<i>Ի՞նչ գիտեք ներառական կրթության մասին</i>»: Տեսակետները շարադրվում են պաստառի վրա</p> <p>☀ Միջազգային փաստաթղթերը` որպես ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթությանն անցման նախապայման:</p> <p>☀ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումները և փոփոխությունները որպես օրենսդրական կարևոր նախաձեռնություն:</p> <p>☀ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող</p>	<p>Կարճ շարադրանք Վարժություն 1.4 «Կյանքի գետը»</p> <p>Դասախոսություն</p>	<p>Պաստառ 4</p>	<p>Սլայդ 1-4 Սլայդ 5</p> <p>Սլայդ 6-7</p> <p>Սլայդ 8</p>	<p>10 րոպե</p> <p>20 րոպե</p>

	իրավական ակտերի ընդունումը: ☀ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը:			Սլայդ 9-10	
	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից ամենակարևոր ու շրջադարձային սկզբունքները	Խմբային աշխատանք Վարժություն 1.5	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը	<i>Բաշխման նյութ 1.1</i>	15 րոպե
3	Համընդհանուր ներառման դրական կողմերը: Անցում համընդհանուր ներառականության. ինչպե՞ս է այն կատարվելու:	Ամփոփում-քննարկում Վարժություն 1.6		<i>Բաշխման նյութ 1.2,</i> Սլայդ 11-12	20 րոպե
	Համընդհանուր ներառական կրթությանն անցման մոդելի նկարագրությունը առանձին վերցրած մեկ մարզում Երեխային ցուցաբերվող աջակցության սխեմա	Վարժություն 1.7 Վարժություն 1.8		<i>Բաշխման նյութ 1.3</i> Սլայդ 13	15րոպե
	Ներառական կրթությունը Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում	Խմբային աշխատանք Վարժություն 1.9		<i>Բաշխման նյութ 1.4</i>	10րոպե
4	Ներառական կրթության առկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում			<i>Բաշխման նյութ 1.5</i> Սլայդ 14-15	10րոպե
	Հատուկ, ինտեգրված և ներառական կրթության մասին պատկերացումները	Խմբային աշխատանք Վարժություն 1.10		<i>Բաշխման նյութ 1.6</i> Սլայդ 16-20	10րոպե
	Հաշմանդամության բժշկական և	Զնագնդի մեթոդ		<i>Բաշխման նյութ</i>	15րոպե

	սոցիալական մոդելները	Վարժություն 1.11		1.7 Սլայդ 21-23	
	Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները	Վարժություն 1.12		Սլայդ 24-25	10րոպե
5	Սովորողի և ուսումնառության արդյունքի նկատմամբ հոգածության սխեմատիկ մոդելը	Վարժություն 1.13		Սլայդ 26	20րոպե
	Ներառական կրթության մարտահրավերները դպրոցում	Վարժություն 1.14		<i>Բաշխման նյութ 1. 8</i> Սլայդ 27-29	25 րոպե
6	CLAP-ի մուլտֆիլմի դիտում և քննարկում	Դիտում «Երազ (ուսուցչի վերաբերմունքի մասին)»			10 րոպե
	Ֆիլմ «Ես գնում եմ դպրոց. 10 տարի անց»	Դիտում			20 րոպե
	Անդրադարձ	Ելքի քարտ		<i>Բաշխման նյութ 1. 9,</i> Սլայդ 30-31	15 րոպե

Դաս 45 րոպե	Բովանդակությունը	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր և սլայդներ	Տևողություն
1	Անդրադարձ նախօրոք օրվան	3-2-1 մեթոդ		Սլայդ1-2	10րոպե
	ԿԱՊԿՈՒ երեխաների համար ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի սահմանումը	Կարճ դասախոսություն			5րոպե
	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրները, որոնց դեպքում նրանք կարող են ստանալ	Վարժություն 1.15		<i>Բաշխման նյութ 1. 10</i>	15րոպե

	Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ				
	Գործնական աշխատանք	Վարժություն 1.16		<i>Բաշխման նյութ 1.11</i>	15րոպե
2	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունները	Վարժություն 1.17 Խմբային աշխատանք Խումբ 1,2,3,4,5,6		<i>Բաշխման նյութ 1.12</i>	45րոպե
3	Ուսուցչի օգնական	Դասախոսություն			5րոպե
	Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականությունները	Վարժություն 1.18		<i>Բաշխման նյութ 1.13</i>	40րոպե
4	Սովորողի ուսումնառության արդյունքների վրա ուսուցչի ազդեցության համապատասխան բնութագրիչը	Վարժություն 1.19			25րոպե
	«Մի՛ ասա, այլ օգտագործիր»	Վարժություն 20 Խմբային աշխատանք		Սլայդ 3-4	20րոպե
5	Ինչպես խոսել հաշմանդամության թեմայով	Դասախոսություն		<i>Բաշխման նյութ 1.14</i> Սլայդ 5	10րոպե
	Լեզվի և պիտակների ուժը			Սլայդ 6-8	5րոպե
	Խոսքն ուժ է			Սլայդ 9	10րոպե
	Ոչ ճիշտ բնորոշումներ			Սլայդ 10	10րոպե
	Ի՞նչ է հաշմանդամությունը	Ինքնուրույն աշխատանք		Սլայդ 11	5րոպե
	Խնդիրը հաշմանդամությունը չէ			Սլայդ 12	5րոպե

6	Իրական խնդիրները բացասական վերաբերմունքն ու միջավայրի արգելքներն են			Սլայդ 13	5րոպե
	Նոր մտածելակերպ			Սլայդ 14-15	10րոպե
	Օգտագործի՝ ը «ՄԱԸԴ»-ը և ապա միայն մյուս բառերը			Սլայդ 16	10րոպե
	Հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ շփվելու կանոնները	Խմբային աշխատանք		Սլայդ 17-19	10րոպե
	Անդրադարձ	«Կյանքի գետը»		Սլայդ 20	10րոպե

* Մլայդները ներբեռնելու համար կարող եք այցելել «Հույսի կամուրջ» ՀԿ կայք՝ <http://www.bridgeofhope.am>, «Գրադարան» բաժնի «Գրականություն» ենթաբաժին:

Վարժություն 1.1 Ծանոթության վարժություններ


- 1. Անձանոթ մասնակիցներով համալրված լսարանի համար.**
աշխատանք գույգերով. գույգերը ծանոթանում են միմյանց հետ, այնուհետև փոխադարձաբար ներկայացնում մեկը մյուսին:
- 2. Մասամբ ծանոթ մասնակիցներով համալրված լսարանի համար.**
լսարանը բաժանվում է խմբերի ըստ, օրինակ՝ հորոսկոպի նշանի, տարվա նույն եղանակին (գարուն, ամառ, աշուն, ձմեռ) ծնված լինելու հանգամանքի, քույրերի կամ եղբայրների թվի և այլն: Ներկայացնում են իրենց խմբում, ծանոթանում միմյանց ընդհանրություններին, այնուհետև փոխադարձաբար ներկայացնում միմյանց լսարանին:
- 3. Ծանոթ մասնակիցներով համալրված լսարանի համար.**
լսարանը բաժանվում է 4 հոգանոց խմբերի: Խմբի անդամները միմյանց ներկայացնում են իրենց նախասիրությունները և հետաքրքրությունները (օրինակ՝ սպորտ, երաժշտություն, արհեստ և այլն):

Վարժություն 1.2

Խնդրել մասնակիցներին բաժանվել խմբերի: Խմբի բնութագիրը կարող է տարբեր լինել (փորձառությունը, ծննդավայրը, նախասիրությունները, մասնագիտությունը, ...):

Անդրադարձ. Ինչպե՞ս էիք ձեզ զգում վարժությունը կատարելիս: Ի՞նչ պարզեցիք ձեր խմբի վերաբերյալ: Հիշե՛ք. այս վարժությունից հետո մասնակիցները պետք է առավել անկաշկանդ լինեն:

Վարժություն 1.3 «Մառույցի ջարդում»



Գրիչը թղթից չկտրելով՝ տրված 9 հավասար հեռավորության վրա գտնվող կետերը միացնել ընդամենը 4 ուղիղ գծերով:

Այս վարժության նպատակն է ցույց տալ, որ ցանկացած խնդիր ունի լուծում, եթե ստեղծարար միտքդ, երևակայությունդ դուրս է գալիս քառակուսու սահմաններից:

Դասընթացի մասնակիցների ակնկալիքները և մտավախությունները

Նպատակը՝ Դասընթացի մասնակիցների ակնկալիքների և մտավախությունների բացահայտում:

Ընթացքը՝ Անհատական աշխատանք

Գունավոր թղթերի վրա մասնակիցները գրում են դասընթացի հետ կապված իրենց ակնկալիքները և մտավախությունները: Նախապես պատրաստում ենք պաստառ, որի վրա նկարված է 2 պարկ, մեկը՝ ակնկալիքների, մյուսը՝ մտավախությունների, և դրանք փակցվում են նշված պարկերի վրա: Այս աշխատանքը կամփոփվի դասընթացների վերջին օրը:

Կարող եք պաստառի վրա նկարել ծաղկաման, ծառ կամ պարկ, այնուհետև ճյուղերի, ծաղկամանի կամ համապատասխան պարկի վրա մասնակիցները փակցնում են գունավոր թերթիկները: Մի գույնով պետք է ներկայացվեն ակնկալիքները, մեկ այլ գույնով՝ մտավախությունները: Կարելի է դասընթացի մասնակիցների ակնկալիքները և մտավախությունները ներկայացնել նաև T-աձև աղյուսակի միջոցով:

Վարժություն 1.4 «Կյանքի գետ»

Ցուցում. «Կյանքի գետ» հնարի հիման վրա կառուցվող գաղափարների ալգորիթմը անհրաժեշտ է սկսել կառուցել դասընթացների առաջին օրվանից:

«Կյանքի գետ» հնարի նկարագրությունը



Պաստառին պատկերվում է գետ, որը պայմանականորեն բաժանվում է երեք հատվածների:

Առաջին հատվածում գրվում է «Երեկ», որտեղ մասնակիցներին տրվում է լրացնել հետևյալ ինքնահարցադրումը՝ «Ի՞նչ գիտեմ ներառական կրթության մասին և ի՞նչ եմ արել մինչ օրս այդ ուղղությամբ»: Երկրորդ հատվածում գրվում է «Այսօր», և մասնակիցները պետք է լրացնեն «Ի՞նչ սովորեցի տվյալ օրվա վերապատրաստման շրջանակներում» հարցադրումը, երրորդ տիրույթում գրվում է «Վաղը», որտեղ տրվում է «Որտե՞ղ և ինչպե՞ս կկիրառեմ իմ ստացած գիտելիքներն ու հմտությունները հետագայում»: Հարկ է նշել, որ առաջին հատվածում կգրվեն վերապատրաստման առաջին օրը ներկայացրած մտքերը, իսկ երկրորդ տիրույթում կավելացվեն յուրաքանչյուր օրվա վերապատրաստումից ստացած գիտելիքները: Երրորդ տիրույթը կլրացվի վերապատրաստման վերջին օրը, երբ մասնակիցները կներկայացնեն իրենց մտքերը համապատասխան հարցադրման շրջանակներում:

Այսպես, «Կյանքի գետը» պաստառի վրա աշխատանքը կլինի շարունակական և կկիրառվի վերապատրաստման բոլոր օրերին:

Միջազգային փաստաթղթերը՝ որպես ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթությանն անցման նախապայման

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումն ուղղված է մի շարք միջազգային փաստաթղթերով ՀՀ կողմից ստանձնած և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտավորությունների, մասնավորապես՝ «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթների իրականացմանը: Այն համահունչ է հատուկ կարիքի կրթության վերաբերյալ Սալամանկայի հռչակագրի և Դակարի գործողությունների շրջանակների նպատակադրումներին և **ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» և «Կրթություն 2030. դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչոնի հռչակագիրը:** Միաժամանակ այն բխում է «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի(ՀՕ-246-Ն) դրույթներից: Համընդհանուր ներառական կրթության ներդրման ռազմավարության նպատակադրումները սահմանված են կրթության որակի և մատչելիության ապահովման տեսանկյունից, և բխում են «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքից (ՀՕ-246-Ն): Դրանք են՝

- 1) հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնում՝ անցում կատարելով համընդհանուր ներառական կրթության համակարգին,
- 2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման, գնահատման և դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրում,
- 3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդրում:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ 2030

Պատմական ակնարկ

2015թ. սեպտեմբերին աշխարհի ավելի քան 150 երկրների առաջնորդները ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում մասնակցեցին ՄԱԿ-ի Կայուն զարգացման գազաթնաժողովին՝ պաշտոնապես ընդունելու կայուն զարգացման նոր, հավակնոտ օրակարգը:

ՄԱԿ-ի 193 անդամ պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, համաձայնության եկան «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» խորագրով փաստաթղթի շուրջ, որի մեջ ներառված են հռչակագիրը, կայուն զարգացման 17 նպատակներն ու 169 թիրախները, նպատակների իրականացման

միջոցների ու վերանայված գլոբալ համագործակցությանը վերաբերող բաժինը, ինչպես նաև դիտարկման ու հետագա գործողությունների ծրագրային շրջանակը: 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները: Առաջիկա 15 տարիների ընթացքում՝ առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչինչ չանտեսվի:

Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ) հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) արձանագրած հաջողությունների վրա և նպատակաուղղված են վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Նպատակները՝ ունիվերսալ են և ինտեգրված:

ԿԶՆ չորս նպատակների (ԿԶՆ 1; 4;11;17) 16 թիրախները վերաբերվում են հաշմանդամության հիմնախնդիրներին: ԿԶՆ 4-ը կայուն զարգացման օրակարգի կրթությանը վերաբերող նպատակն է, որը կոչ է անում անդամ պետություններին մինչև 2030թ-ը երաշխավորել հավասար և մատչելի կրթություն՝ կառուցելով ներառական կրթական միջավայր և ապահովելով անհրաժեշտ աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց:

ՄԻՆԶԵՎ 2030 Թ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

- 1. Թիրախ 1.** Մինչև 2030 թվականը ապահովել, որպեսզի բոլոր երեխաները ստանան որակյալ միջնակարգ կամ նախնական մասնագիտական կրթություն՝ ինքնուրույն կյանքի լիարժեք պատրաստված լինելու, կրթության հաջորդ աստիճանում ուսումն արդյունավետ շարունակելու և արժանապատիվ աշխատանքային գործունեությանն անցնելու նպատակով:
- 2. Թիրախ 5.** Մինչև 2030 թվականը ապահովել բոլոր խոցելի խմբերի՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հավասար մասնակցության հնարավորությունը կրթության բոլոր մակարդակներում:
- 3. Կրթության բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ստեղծել որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլորի համար, ներառյալ՝ խոցելի խմբերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց: Կրթության ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, բարեփոխումները, նախաձեռնություններն ու մշակումները պետք է հաշվի առնեն սովորողների առանձին խմբերի և անհատների կարիքները, նախատեսեն դրանց արձագանքման համապատասխան մոտեցումներ:**

**«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումները և փոփոխությունները
որպես օրենսդրական կարևոր նախաձեռնություն**

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով էլ հիմք դրվեց հանրակրթության համակարգում համընդհանուր ներառական կրթությանն անցմանը:

Եվ այսպես, ինչ էլ ասում Օրենքը համընդհանուր ներառական կրթության մասին:

1. Նախ և առաջ օրենքում տրվել են մի շարք կարևոր սահմանումներ, որոնք կանոնակարգում են համընդհանուր ներառական կրթության կազմակերպման գործընթացը: Օրինակ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում տրվել են հետևյալ սահմանումները՝

- *կրթության առանձնահատուկ պայմաններ*
- *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ*
- *ներառական կրթություն*
- *մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ*
- *երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում*
- *մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն*
- *ֆինանսավորման բարձրացված չափաքանակ*
- *անհատական ուսուցման պլան*
- *ուսուցչի օգնական:*

2. Սահմանվել է համընդհանուր ներառական կրթությունը պետական քաղաքականության տեսանկյունից (Օրենքի 4-րդ հոդված)՝

3. Տրվել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գաղափարը (Օրենքի 17-րդ հոդված), ինչպես նաև տրվել է այդ ծառայությունների եռամսկարգակ լինելը (Օրենքի 17.1-րդ հոդված):

4. Սահմանվել են ԿԱՊԿՈՒ այն երեխաների խմբերը, որոնց կրթության կազմակերպման համար հարող է տրամադրվել ֆինանսավորման բարձրացված չափաքանակ (Օրենքի 35-րդ հոդված):

**«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ
կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող իրավական ակտերի ընդունումը**

Օրենքի ընդունումից հետո հաջորդ քայլը եղավ դրանից բխող իրավական ակտերի ընդունումը՝

- *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,*

- *Տարածքային և Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգերը,*
- *Տարածքային և Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը,*
- *մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների սահմանումը,*
- *մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները,*
- *տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը,*
- *երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը,*
- *փոփոխություններ հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության մեջ:*

ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը»:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատվելուց հետո

Համաձայն ժամանակացույցի հանրապետությունում մեկնարկեց անցումը համընդհանուր ներառական կրթության համակարգին: Այն սկսվեց 2016 թվականին Սյունիքի մարզից, որի արդյունքում`

- *ձևավորվել (վերակազմակերպվել) են 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ,*
- *մարզում իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության թեմայով,*
- *հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիքը, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 %-ի հաշվարկով,*
- *կիրառվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը` ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,*
- *վերակազմակերպված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից իրականացվել է աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց:*

2017 թվականի սեպտեմբեր ամսից համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվել է Լոռու և Տավուշի մարզերում, այդ նպատակով ձևավորվել են Վանաձորի, Ստեփանավանի և Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, ինչպես նաև ձևավորվելու է Վանաձորի կենտրոնի մասնաճյուղը` Ալավերդի քաղաքում: Տավուշի մարզում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պատվիրակվել են «Հույսի կամուրջ» ՀԿ-ին` հաշվի առնելով վերջինիս փորձը ներառական կրթության ոլորտում:

Վարժություն 1.5

Լսարանը բաժանել 4 խմբի և հանձնարարել յուրաքանչյուր խմբին ուսումնասիրել և ներկայացնել շրջադարձային մեկ սկզբունք:

Բաշխման նյութ 1.1

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից ամենակարևոր ու շրջադարձային սկզբունքները

Շրջադարձային փոփոխությունների արդյունքում հնարավոր դարձավ երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացումը, որոնք համահունչ են ժամանակակից մարտահրավերների կարգավորմանն ուղղված միջոցառումներին: Դրանք են`

- օրենքի ուժով ամրագրվում է երեխայակենտրոն կրթության կազմակերպման և կրթական ծրագրի իրականացման գործընթացը՝ համաձայն յուրաքանչյուրի կրթության առանձնահատուկ պայմանի և զարգացման առանձնահատկության,
- հատուկ և ներառական կրթությունը դիտվում են ոչ թե առանձին կատեգորիայի տեր անձնաց կրթության ձև, այլ յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, արտակարգ ընդունակությամբ կամ լեզվամշակութային առանձնահատկություններ ունեցող երեխաների համար կրթական ծրագրի մատչելիությունն և յուրաքանչյուրի մասնակցային հնարավորությունն առավելագույնս ապահովելու միջոցառում: Այս մոտեցման հիմքում ենթադրվում է, որ ուսուցիչը պետք է տեսնի երեխայի հնարավորությունները և զարգացնի կրթական հնարավորությունները,
- էականորեն փոխվում է նաև «Հանրակրթության պետական չափորոշիչ» (ՀՊՉ) սահմանումը, որը երեխային ներկայացվող պահանջ լինելու փոխարեն դիտվում է պետության և մանկավարժական կոլեկտիվին ներկայացվող պայման, որոնք պարտավոր են ցանկացած սովորողի հասցնել չափորոշչով սահմանված արդյունքների: Ըստ օրինագծի, ՀՊՉ նպատակն է սահմանել կրթության մատուցվող բովանդակությունն ու պայմանների ապահովումը, որի արդյունքում երեխան կկարողանա առավելագույնս յուրացնել կրթական համապատասխան ծրագիրը և կրթության միջոցով հասնել ապահովվող արդյունքին,
- նախկինում ամրագրված մասնագիտացված աջակցության ծառայությունների համակարգը ընդլայնվել և սահմանվել է որպես «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների», որոնց նպատակն է բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը: Ծառայությունների նման համակարգի ներդրումը նորամուծություն է երկրում, սակայն դա այն երաշխիքներից մեկն է, որը հանգեցնելու է փոխուսուցումների, մեթոդական խորհրդատվության և անհատական ուսուցման կազմակերպման:
Վերոնշյալն ամբողջացվել է որպես երեխայի կրթության կազմակերպման աջակցության համակարգը, որը բաղկացած է կրթությանն օժանդակող ծառայությունների մատուցման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման, գնահատման, մշտադիտարկման և համապատասխան պայմանների ապահովման գործընթացներից,
- երեխայի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, այդ թվում՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կենտրոնացված գնահատումից անցում է կատարելու եռաստիճան գնահատման համակարգի դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում: Հետևաբար էականորեն փոխվելու են նաև ֆինանսավորման մեխանիզմները, բայց ոչ ֆինանսավորման ընդհանուր ծավալները:

Վարժություն 1.6

Ամփոփում- Կարդալ և ծավալել քննարկում «Համընդհանուր ներառման դրական կողմերը հասարակական կյանքի կազմակերպման տարբեր տեսանկյուններից» թեմայով:

Բաշխման նյութ 1.2

Համընդհանուր ներառման դրական կողմերը

Համընդհանուր ներառական կրթության ներկայիս քաղաքականությունը և մեխանիզմները շահեկան են թե կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ մարդու իրավունքների հարգման տեսանկյունից: Մա այն դեպքն է, երբ շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այսպիսով.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը իր փոխարեն չեն որոշում, այլ տրվում է հնարավորություն բացահայտվելու իր բոլոր ունակություններով և դրսևորվելու իր համար հաղթահարելի ձևով: Շեշտը դրվում է երեխայի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերը ուժեղացնել կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը գնահատելու և միջավայր ապահովելու միջոցով: Այսինքն, երեխան ոչ թե ունի «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար: Դրանք կարող են լինել, ֆիզիկական և սոցիալ-մշակութային միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդը և մեթոդաբանությունը, ուսուցողական նյութերի մատչելիությունը և այլն:

Կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամքից կամ իր երեխայի հետ հասարակության շփումից, քանի որ նույն հասարակությունը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը: Ընտանիքի անդամի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի գնահատման գործընթացին անմիջական մասնակցությունը, մասնագետների խորհրդատվությունը և հասարակական վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, հաղթահարել

անելանելիության ու ամոթի բարդույթը և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը: Միաժամանակ, հաղթահարվում է մյուս երեխաների ու նրանց ծնողների մոտ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքը, նրանց իրավահավասարության, վերաբերմունքի և ուսուցման հավասար պայմանների գիտակցման կարծրատիպերի հաղթահարման տեսանկյունից: **Պետությունը աստիճանաբար հաղթահարում է սոցիալական պետության գործառույթն ապահովելու խոչնդոտները**, նվազում է հասարակության շերտավորումը, և դրանով հնարավոր է լինում իրագործել երկրի ստանձնած միջազգային հիմնական պարտավորությունները, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու և ոչ թե նախկինում՝ հատուկ դպրոցների միջոցով, սոցիալական խնդիր լուծելու համար: Երեխաների շրջանում իրավահավասարություն ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը: **Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե հարկատու:**

Հասարակությունը գնում է հոգեբանական առողջացման, նվազում է սոցիալական շերտավորումը, անձի կախյալությունը որոշում կայացնողներից: **Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե հարկատու:**

Բացի այդ, հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակով հատուկ մանկավարժների և ուսուցչի օգնականների հաստիքների ներդնումը ֆինանսական ծախսերի տեսանկյունից խնդիրներ չեն առաջացրել, նույնիսկ որոշ առումներով՝ շահեկան են ու արդյունավետ, հատկապես կեցության, սննդի, տրանսպորտի և այլ ոչ կրթական ծախսերի օպտիմալացման տեսանկյունից:

Անցում համընդհանուր ներառականության. ինչպե՞ս է այն կատարվելու

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, մինչև 2025 թվականը Հայաստանն անցում է կատարում ամբողջական և համընդհանուր ներառական կրթության համակարգի: Սա նշանակում է կրթության համակարգում արմատական

փոփոխություններ՝ սկսած մի շարք իրավական և նորմատիվ կարգերից վերջացրած ընկալումների փոփոխություն:

Կա թյուր տպավորություն, թե ներառական կրթությունը նախատեսված է սուկ ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար, սակայն համակարգի խորքային ընկալումը փաստում է, որ ներառականությունը շատ ավելի լայն գաղափար է, որի հիմքում ընկած է ոչ թե կոնկրետ երեխայի կամ երեխաների խմբի կրթության իրավունքի ապահովումը, այլ յուրաքանչյուր երեխայի կրթական առանձնահատկությունների վրա հիմնված կրթություն ստանալու հիմնարար իրավունքի ապահովումը: Այսինքն՝ եթե ձևակերպելու լինենք ավելի հակիրճ՝ համընդհանուր ներառականության գլխավոր առաքելությունը մեկն է. ստեղծել այնպիսի պայմաններ և միջավայր, որ որևէ երեխա կրթությունից դուրս չմնա:

2017 թվականի դրությամբ՝ ՀՀ-ում գործում է մոտ 250 ներառական դպրոց, որը ընդգրկում է ընդհանուր դպրոցների մոտ 15 տոկոսը:

Անցում կատարել համընդհանուր ներառականության գաղափարին, նշանակում է հրաժարվել առանձին դպրոցներ ներառական դարձնելու գաղափարից և ամբողջ համակարգը պատրաստել ներառականության, այսինքն՝ հանրապետության բոլոր դպրոցներում ապահովել կրթության կազմակերպման ներառականության սկզբունքի ներդրումը: Սա շատ կարևոր քայլ է, որովհետև **ներառական կրթությունը կրթության առանձին տեսակ չէ: Դա կրթության հատկանիշ է, որը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում:** Որքան ավելի շատ է դպրոցում ստեղծված կրթական միջավայրը նպաստում յուրաքանչյուր երեխայի կրթության կարիքի արձագանքմանը՝ անկախ նրանից, թե այդ կարիքն ինչպիսի առանձնահատկությունների վրա է հիմնված, այնքան տվյալ դպրոցն ավելի ներառական է:

Այժմ համակարգը գտնվում է անցումային փուլում, և այս ժամանակահատվածում դեռևս զուգահեռաբար գործելու են ինչպես առանձին ներառական դպրոցները, այնպես էլ հատուկ դպրոցների դեռևս խորհրդային տարիներից ժառանգված համակարգը:

Անցումային փուլ. դեպի համընդհանուր ներառականություն

Հայաստանում որդեգրվել է ըստ մարզերի համընդհանուր ներառականության անցնելու քաղաքականությունը: Մարզ առ մարզ ստեղծվում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, որոնք պետք է աջակցեն դպրոցներին՝ երեխայի կարիքներին համապատասխան կրթական ծառայություններ մատուցելու հարցում:

2016-2017 ուսումնական տարում ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթություն իրականացվել է միայն **Սյունիքի մարզում**: Նոր ուստարվա մեկնարկից՝ **2017թ.** սեպտեմբերից համընդհանուր ներառականության անցումը կապահովվի նաև **Լոռու և Տավուշի** մարզերում: **2018** թվականի սեպտեմբերից ամբողջական ներառականության անցումը պլանավորված է մայրաքաղաք **Երևանում և Արմավիրի մարզում**, այնուհետև գործընթացը կշարունակվի մինչև 2021 թվականը, երբ համընդհանուր ներառական կրթության համակարգը աստիճանաբար կներդրվի ՀՀ բոլոր մարզերում:

Համընդհանուր ներառականությանը զուգահեռ՝ որոշ հատուկ դպրոցներ կշարունակեն գործել՝ ապահովելու համար որոշակի կարիքներ ունեցող երեխաների կրթությունը: Հաստատվել են երեխայի կրթության կարիքների գնահատման նոր չափանիշները, որոնք այժմ փորձարկվում են Սյունիքի մարզում, այնուհետև կներդրվեն նաև ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում: Ներդրվում է կարիքների գնահատման բազմամակարդակ սանդղակ՝ թեթև, միջին, ծանր, խորը որակումներով: Ընտրությունը, թե երեխայի կրթությունը որտեղ է նախընտրելի կազմակերպել, հատուկ, թե՞ սովորական դպրոցում, թողնվում է ծնողի հայեցողությանը, որը ամրագրված է «Հանրակրթության մասին» օրենքում: Հատուկ դպրոցներում սովորելու իրավունք կունենան միայն կրթության կարիքի գնահատման արդյունքում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնց համար դեռևս ընդհանուր հանրակրթական դպրոցում չեն ստեղծվել ուսումնառության անհրաժեշտ և բավարար պայմաններ: Այդ տեսանկյունից առանձնանում են տեսողության և լսողության խորը խանգարումներ ունեցող երեխաները և այլն: Փաստացի՝ այդպիսի երեխայի համար պետությունն առաջարկում է հատուկ կրթություն, ինչպես նաև համընդհանուր ներառական կրթություն՝ սովորական հանրակրթական դպրոցում: Համընդհանուր ներառական կրթության անցման գործընթացի ավարտին նախատեսվում է հատուկ

հանրակրթական ուսումնական հաստատության կարգավիճակում թողնել շուրջ 6 հաստատությունների:

Ուլբե՞ր և ինչպե՞ս են գնահատում. սոցիալական ինտեգրումը՝ գնահատման նախապայման

Համընդհանուր ներառականության անցման շրջանակում ներդրվում է երեխայի կրթության կարիքի գնահատման եռաստիճան համակարգ: Առաջին աստիճանի գնահատումը կատարվում է դպրոցում՝ դպրոցի մանկավարժական ներուժի միջոցով՝ ներգրավելով ծնողին և այլ մասնագետներին: **Երկրորդ աստիճանի գնահատումը** կատարվում է տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության կողմից, իսկ **գնահատման երրորդ աստիճանը իրականացվում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:** «Երեխայի կարիքի գնահատման արդյունքներից ելնելով՝ կազմվում է ուսուցման անհատական պլան: Եթե երեխան ճանաչվում է կրթության առանձնահատուկ միջին, ծանր կամ խորը կարիք ունեցող երեխա, և այդ գնահատականը հավաստվում է տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության կողմից, ապա դպրոցն այդ երեխաների կրթության կազմակերպման համար ստանում է լրացուցիչ ֆինանսավորում: Այն դեպքերում, երբ առաջանում են վիճելի իրավիճակներ, առաջին երկու մակարդակներում արված գնահատման արդյունքների հետ կապված, նախատեսված է բողոքարկման մեխանիզմ. հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպվում է գնահատման երրորդ աստիճանը: Ծնողը պարտադիր մասնակցում է երեխայի կարիքի գնահատման և ուսուցման անհատական պլանի կազմման գործընթացներին:

Մանկավարժահոգեբանական ծառայությունները համալրված են հատուկ մանկավարժներով, հոգեբաններով, սոցիալական մանկավարժներով: Նախատեսվում է, որ մեծ դպրոցները համալրվելու են նման կադրերով, իսկ փոքր դպրոցները կարող են գնահատման ժամանակ այս մասնագետներին հրավիրել տարածքային կենտրոններից:

Կրթությունից դուրս մնացած երեխաների ներառումը

Նկատի ունենալով, որ ժամանակին հատուկ դպրոցները հիմնականում տեղակայվել են Երևանում, մարզերում կրթության առանձնահատուկ պայմանների

կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի կազմակերպումը խնդրահարույց է եղել: Ծնողների համար դժվար է եղել ապահովել երեխայի տեղափոխումը հատուկ դպրոցներ, իսկ հանրակրթական դպրոցներում այդ երեխաների համար չեն եղել պայմաններ, և նրանք գտնվել են կրթությունից դուրս մնալու մեծ ռիսկի տակ: Պաշտոնական հստակ տվյալներ չկան, թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների քանի տոկոսն է դուրս մնում կրթությունից: Մի քանի տարի առաջ նման հետազոտություն արվել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից, համաձայն որի՝ ՀՀ մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաների 18 տոկոսը դպրոց չի հաճախում: Դպրոց չհաճախելու դեպքեր հայտնաբերվել են Սյունիքի մարզում, որտեղ այդ խնդիրն արդեն լուծում է ստացել, քանի որ մարզն անցում է կատարել համընդհանուր ներառականության:

Ակնկալվում է, որ համընդհանուր ներառականության անցումն արմատապես կլուծի այս խնդիրը, և դրան մեծապես կնպաստի նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի համագործակցությամբ մշակվող՝ կրթությունից դուրս մնացած երեխաների վաղ հայտնաբերման, հաշվառման և կրթական համակարգ ներառման ծրագիրը: Երեխաների հաշվառման նոր ներդրվող համակարգը երեխայի կրթական շարժին հետևում է ուսումնառության ողջ ընթացքում, և կրթության ընդհատման դեպքում գործի է դրվում ահազանգի մեխանիզմը:

Վարժություն 1.7

Ուսումնասիրելով նյութը փորձեք այն տեղայնացնել Ձեր մարզի (Երևան քաղաքի) համար՝ բերելով տվյալներ համընդհանուր ներառման գործընթացն ապահովող ուսումնական և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող հաստատությունների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և այլնի վերաբերյալ:

Բաշխման նյութ 1.3

**Համընդհանուր ներառական կրթությանն անցման մոդելի
նկարագրությունը առանձին վերցրած մեկ մարզում**

Մարզում գործող հատուկ դպրոցը(դպրոցները), սահմանված ժամանակացույցի համաձայն, հունվար ամսին կվերակազմակերպվի (կվերակազմակերպվեն) տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (կենտրոնների), որի(որոնց) ֆինանսավորումը կիրականացվի համաձայն տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգերի: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ստեղծումը իրականացվում է յուրաքանչյուր մարզի տարածքում գործող հատուկ դպրոցի բազայի վրա, քանի որ վերջիններս իրենց նյութատեխնիկական բազաներով և ուսումնամեթոդական պոտենցիալով առավել պատրաստ են երեխայակենտրոն կրթության և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների բացահայտման ու գնահատման համար: Բացի դրանից մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները կարող են համարվել այլ ուսումնական հաստատությունների, մանկավարժների, ծնողների ու երեխաների մեթոդական ու սոցիալ –հոգեբանական խորհրդատուները:

Մինչև ընթացիկ տարվա մայիս ամիսը, արդեն իսկ գործող Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների միջոցով, կիրականացվի նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի(կենտրոնների) աշխատակազմի(աշխատակազմերի) վերապատրաստում: Իսկ մարզի հանրակրթական դպրոցների աշխատակազմերի վերապատրաստումները կիրականացվեն ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի և դրա մասնաճյուղերի կողմից՝ ՀՀ պետական բյուջեից վերապատրաստումների համար նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին, ինչպես նաև միջազգային կամ հասարակական կազմակերպությունների միջոցներով: Այս ժամանակահատվածում նոր ձևավորված հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (կենտրոնների) կողմից մարզում կիրականացվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատում:

Ուսումնական տարվա վերջում՝ հունիս ամսին, կիրականացվի(կիրականացվեն) տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից (կենտրոններից) աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց:

Մինչև սեպտեմբեր ամիսը նշված մարզում ուժի մեջ կմտնի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, համաձայն որի՝ համապատասխան փոփոխություններ արված կլինեն մարզում գործող պետական հանրակրթական դպրոցների կանոնադրություններում: Ինչպես նաև մարզի հանրակրթական դպրոցներում կներդրվեն մանկավարժա հոգեբանական աջակցության ծառայություններ և ուսուցչի օգնականի հաստիք, կկիրառվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի:

Մինչ նշված մարզում ուսուցչի օգնականի հաստիքի ներդրումը, վերակազմակերպված տարածքային մանկավարժա հոգեբանական աջակցության կենտրոնները կշարունակեն մատուցել հատուկ կրթության ծառայություններ:

Ներառական կրթությանն անցման ողջ ցիկլի ընթացքում Հանրապետական մանկավարժա հոգեբանական աջակցության կենտրոնը կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն, կհամակարգի տարածքային մանկավարժա հոգեբանական աջակցության կենտրոնի (կենտրոնների) աշխատանքը և կիրականացնի իր կանոնադրությամբ ամրագրված այլ գործառնություններ:

Այս համալիր գործողությունների արդյունքում, նշված մարզը կճանաչվի հանրակրթության մակարդակում համընդհանուր ներառական կրթություն իրականացնող:

Համընդհանուր ներառական կրթությանն անցման և հաստատությունների վերակազմակերպման գործընթացը կիրականացվի աստիճանաբար՝ ըստ առանձին մարզերի: Այս գործընթացը կշարունակվի մինչև 2022 թվականը, մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունը պետք է հասնի Օրենքով սահմանված համընդհանուր ներառմանը: Այս գործընթացին կաջակցեն նաև ՀՀ-ում գործող մի շարք հասարակական ու միջազգային կազմակերպություններ:

Համընդհանուր ներառական կրթությանն անցման ժամանակացույցը՝ ըստ ՀՀ մարզերի.

Ժամկետը	ՀՀ մարզը
2016թ.	Սյունիք
2017թ.	Լոռի, Տավուշ
2018թ.	Արմավիր, Երևան քաղաք
2019թ.	Շիրակ, Արագածոտն
2020թ.	Գեղարքունիք, Կոտայք
2021թ.	Արարատ, Վայոց Ձոր


Վարժություն 1.8

Լոռու մարզի X գյուղում Ազգային վիճակագրության ծառայության աշխատակիցները, սոցիալական հետազոտություն անցկացնելիս, հայտնաբերել են ընտանիքում ապրող դպրոցահասակ երեխա, որն ունի հաշմանդամություն և դպրոց չի հաճախում:

Ըստ առաջնահերթության համարակալել ծառայությունների այն հաջորդականությունը, որոնց արդյունքում հնարավոր կլինի իրացնել երեխայի կրթության իրավունքը՝

- դիմել X գյուղի դպրոցին,
- դիմել Լոռու մարզպետարանի երեխայի իրավունքների պաշտպանության բաժին,
- դիմել գյուղի պոլիկլինիկա,
- դիմել մարզի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն,
- դիմել ոստիկանություն,
- դիմել հասարակական կազմակերպություն,
- դիմել սոցիալական ծառայության մարմիններին:

Հանրակրթական դպրոցում սովորող և կրթությունից դուրս մնացած երեխային ցուցաբերվող աջակցության սխեմա



ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Վարժություն 1.9

Լսարանը բաժանել 4-6 հոգանոց խմբերի: Տրված 1.4-ին բաշխման նյութը բազմացնել և բաժանել 1-ական խմբի: Հանձնարարել կարդալ և խմբում քննարկել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից դուրս բերված «ներառական կրթությունը», «ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության քաղաքականությունը», «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները» բնորոշող հասկացությունները: Այնուհետև կատարել անդրադարձ՝ մինչ այդ մտազրոհի միջոցով լսարանի կողմից ներառական կրթությանը տրված բնորոշումներին: Այն բնորոշումները, որոնք համապատասխանում են հասկացության բովանդակությանը, նշել «+», այն բնորոշումները, որոնք չեն համապատասխանում «ներառական կրթություն» հասկացության բովանդակությանը՝ «-», իսկ ոչ հստակ բնորոշումները՝ «?» նշաններով:

Բաշխման նյութ 1.4

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս, 10.3-րդ կետ

Ներառական կրթություն՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մաս. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հոդված 17.1. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները

1. Երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում.

1) դպրոցական մակարդակ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից.

2) տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից.

3) հանրապետական մակարդակ՝ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:

2. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը վկայագրման նպատակով իրականացնում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները:

Բաշխման նյութ 1.5

Ներառական կրթության առկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մասի համաձայն «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»:

ՀՀ-ն 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանի Հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար»:

Յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացն այժմ խարսխվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա: Ներառական կրթության ձևավորված ընկալումը, իբրև միայն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացման գործընթացների ամբողջություն, այժմ ՀՀ-ում համապատասխանեցվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը՝ առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման: Այս իմաստով հատուկ հանրակրթական համակարգում ընթացող բարեփոխումներն առաջնահերթ են:

Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները (հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող երեխաների համար դպրոցում տեղաշարժվելու սահմանափակումները կամ չտեսնող երեխայի համար իրեն հարմարեցված բրայլյան դասագրքերի և այլ ուսումնական նյութերի բացակայությունը և այլն): Նշված արգելքները վերացնելուց հետո երեխայի համար կրթական ծրագրերի մատչելիությունը լիարժեքորեն ապահովվում է: Հետևաբար, ՀՀ-ում յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծմանն ուղղությամբ:

Վարժություն 1.10

Խմբային աշխատանք

Վենի դիագրամի կամ M-աձև աղյուսակի միջոցով հանձնարարել լսարանին առանձին-առանձին ներկայացնել հատուկ, ինտեգրված և ներառական կրթության մասին իրենց պատկերացումները:

Բաշխման նյութ 1.6

Հատուկ կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի



կրթությունը կազմակերպվում է առանձնացված միջավայրում՝ հատուկ դպրոցում: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ հատուկ կրթության համակարգը ներառում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող,

ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով հանրապետությունում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ (երկարօրյա և գիշերօթիկ ռեժիմով), որոնք իրականացնում են հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրեր («Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999):



Ինտեգրված կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան հանրակրթական դպրոցում է, սակայն նրա կրթության կազմակերպման և կրթական գործընթացում մասնակցության նպատակով չեն իրականացվել դասավանդման մեթոդների, ծրագրերի և դպրոցական միջավայրի փոփոխություններ և հարմարեցումներ: Արդյունքում՝ երեխան հիմնականում դուրս է մնում ուսումնական գործընթացից կամ մասնակցում է իր համար ուսուցչի կողմից չպլանավորված ուսումնական առանձին գործընթացների:



Ներառական կրթություն: Խոսքը հենց հանրակրթական դպրոցներում բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մատուցվող որակյալ ուսուցման մասին է: Կրթության գործընթացում երեխայի առավելագույն մասնակցությունն ապահովելու նպատակով կատարվել են անհրաժեշտ մեթոդական, ծրագրային և միջավայրային փոփոխություններ և հարմարեցումներ՝ կրթության առանձնահատուկ պայմաններ: Երեխան բոլորի նման մասնակից է կրթական գործընթացին՝ իր կարողությունների առավելագույն չափով:

Բաշխման նյութ 1.7

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ

Վարժություն 1.11

Ձնագնդի մեթոդ. գույգերով, ապա խմբերով քննարկել և ներկայացնել հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները:

Ներկայումս հաշմանդամության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն բարեգործական, բժշկական, սոցիալական, կենսահոգեբանասոցիալական մոդելներ: Մակայն պրակտիկայում կիրառվում են երկու մոդել՝ բժշկական և սոցիալական, որոնցից յուրաքանչյուրը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչն է որոշիչ «հաշմանդամ» բառի մեջ:

Բժշկական մոդել

- Հաշմանդամությունը համարվում է անձի խնդիր, «հիվանդություն», որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է:

- Չանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը. բժշկական (ֆիզիկական վերականգնում, բուժում):
- Մարդը գրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դառնում է «հիվանդ», «խնամյալ»: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշներ...
- Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա հիվանդ է և ունի հիմնականում բուժման, խնամքի և հոգածության կարիք:
- Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում է նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:

Սոցիալական մոդել

- Սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք:
- Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա:
- Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին և ներուժին:
- Կոչ է հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի զարգացման գործընթացներին:
- Սոցիալական մոտեցման դեպքում վերացվում են բոլոր ներքին ու արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության կյանքին նրանց ներգրավմանը: Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհի կրացի դեպի լիարժեք կյանք:

Այսպիսով, սոցիալական մոդելի տեսանկյունից **հաշմանդամությունը** սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային խոչընդոտների փոխազդեցության **հետևանք**: Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացմանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը: Այն ավելի լայն է, քան գուտ շրջակա ֆիզիկական միջավայրը: Այն անձից դուրս է՝ ֆիզիկական միջավայր, տրանսպորտ, վերաբերմունք, կրթական և աշխատանքային միջավայր, ծառայություններ, տեղեկատվություն և այլն:

Սոցիալական և մարդու իրավունքների վրա հիմնաված մոդելները կազմում են ներառական կրթության առանցքը, քանի որ այն ենթադրում է՝

- հաշմանդամություն ունեցող երեխաները չզրկվեն անվճար ու պարտադիր՝ տարրական կամ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքից հաշմանդամության պատճառով,
- բոլոր երեխաների կրթական կարիքների հավասար գնահատում,
- դպրոցի ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին բոլոր երեխաների ներգրավվածության աստիճանի բարձրացում,
- կրթական քաղաքականության վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին,
- ուսումնական գործընթացներում առկա խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում,
- երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,
- սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և հարգանք,
- դպրոցական պայմանների բարելավում,
- հասարակության ժողովրդավարական և մարդասիրական արժեհամակարգի ձևավորման գործում դպրոցների դերի կարևորում,
- կրթությունը որպես հասարակության մեջ բոլոր մարդկանց լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է:

- Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին:
- Ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում:
- Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ձևափոխությունն ապահովելու համար:
- Երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Վարժություն 1.12 1.7-րդ բաշխման նյութից դուրս գրել «Բժշկական և սոցիալական

մողելները» բնորոշող բառերն ու արտահայտությունները:

ՍՈՎՈՐՈՂԻ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՏԱՍԲ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՏԻՎ ՍՈՂԵԼԸ

Վարժություն 1.13

Յուրաքանչյուր դասընթացի մասնակից հանձնարարել իր համար ճշտել, թե ինքը «Հոգածության» կոորդինատային համակարգի ո՞ր քառորդում է գտնվում: Հետագայում անդրադարձ կատարել «Հոգածության» կոորդինատային համակարգին և հարցնել, թե արդյոք յուրաքանչյուրի համար կատարվե՞լ է նախկինում ընտրած քառորդի փոփոխություն: Քննարկել փոփոխությունների վերաբերյալ ուկնդիրների մեկնաբանությունները:

Սովորողի և ուսումնառության արդյունքի նկատմամբ հոգածության սխեմատիկ մողելը «Ղեկավարման գծապատկերի մողելի» (տե՛ս Խրիմյան Ս., Հովսեփյան Ա. և ուրիշ. Դպրոցի ղեկավարում և կառավարում: Եր., ԱՅՌԵՔՍ, 2005, էջ 129) ձևափոխված մեկնաբանությունն է:

Բարձր հոգածությունը սովորողի և ուսումնառության արդյունքի նկատմամբ իրականում ցանկացած ուսուցչի համար ցանկալի մոտեցում է: Մակայն այսպիսի կատարյալ մոտեցումը գործում է դասավանդման գործընթացի սահմանափակ ժամանակահատվածների համար:



Սովորողի նկատմամբ ցածր և ուսումնառության արդյունքի նկատմամբ բարձր հոգածությամբ առանձնանում են այն ուսուցիչները, ովքեր առաջնային են համարում սովորողի կողմից դասի յուրացումը, նոր գիտելիքների ձեռքբերումը: Այս ուսուցիչների մոտ բարձր է աշխատանքի որակի նկատմամբ պատասխանատվությունը, և նրանք հակված են միշտ դպրոցի տնօրինության կողմից որպես լավ ուսուցիչ համարման նվաճմանը և պահպանմանը: Ներառական կրթության տեսանկյունից այս ուսուցիչների դասերին հաճախ են սովորողների մասնակցության հավասար հնարավորությունների ապահովման հետ կապված խնդիրները:

Սակայն այն հաղթահարելի է, քանի որ նրանք՝ որպես որակյալ մանկավարժներ, արագ են յուրացնում և ներդնում կրթության ոլորտում պետական քաղաքականության նոր մոտեցումները:

Սովորողի և ուսումնառության արդյունքի նկատմամբ ցածր հոգածությամբ առանձնանում են իրենց աշխատանքի նկատմամբ ցածր մոտիվացվածություն ունեցող ուսուցիչները: Ներառական կրթության ներդրման գործընթացի սկզբնական փուլում այս ուղղությամբ աշխատելու և ստեղծագործելու հակվածությունը դպրոցում ցածր է: Սակայն ժամանակի ընթացքում ձեռք բերված փորձառությունն աստիճանաբար մեծացնում է և՛ յուրաքանչյուր սովորողի, և՛ ուսումնառության արդյունքի նկատմամբ հոգածության աստիճանը: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որի համաձայն յուրաքանչյուր սովորողի ներառումը և որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը կարող են ձախողվել տնօրինության, դասավանդող ուսուցիչների, դպրոցի աջակցող ծառայություններ տրամադրող թիմի ոչ հետևողական գործողությունների, ուշադրությունից դուրս մնալու և այլ նմանօրինակ գործընթացների պատճառով: Միաժամանակ, օբյեկտիվ պատճառներով այս տիրույթում են հաճախ հայտնվում այն ուսուցիչները, ովքեր պատրաստվում են աշխատանքից դուրս գալու:

Սովորողի նկատմամբ բարձր և ուսումնառության արդյունքի նկատմամբ ցածր հոգածությամբ առանձնանում են տվյալ առարկան դասավանդող հիմնական ուսուցչին ժամանակավոր փոխարինողները, ովքեր առաջնային են համարում կենտրոնացումը ոչ թե դասավանդման, այլ հարաբերությունների վրա: **Ներառական կրթության տեսանկյունից սովորողի նկատմամբ բարձր հոգածությունը՝ ի հաշիվ ուսումնառության ցածր արդյունքի, անընդունելի է:**

Սովորողի և ուսումնառության արդյունքի նկատմամբ վերոնշյալ չորս մոտեցումները ունեն ակնհայտ առավելություններ և թերություններ: Խորհուրդ է տրվում սովորողի մասնակցության և որակյալ կրթության ապահովման տեսանկյունից որդեգրել **«Չափավոր հոգածություն սովորողի և ուսումնառության արդյունքի նկատմամբ»** մոտեցումը:


Բաշխման նյութ 1.8

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Վարժություն 1.14

«Որո՞նք են մարտահրավերները ձեր դպրոցում»


Խնդրի լուծման շրջափուլ



1. Ներառական կրթության համակարգի զարգացում, բոլոր աշակերտների լիարժեք մասնակցություն, հավասար հնարավորությունների ստեղծում և անհատական մոտեցումներ

- Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթության համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևնույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք:
- Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:
- Մարդիկ տարբեր են, դա բնական է, և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն **բոլոր երեխաների մասնակցությունը**՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարներ և, իհարկե, **անհատական մոտեցում**:

- Ի վերջո, ինչի՞ց է սկսվում ներառական կրթությունը, որի արդյունքում երաշխավորվում է որակյալ կրթությունը: Սկսվում է մանկավարժների վերաբերմունքի (սիրտ), հմտության (ձեռք) և գիտելիքի(գլուխ) եռամիասնության դրսևորումից: Առանց այս հավասարասրուն եռանկյունու գոյության, շատ դժվար կլինի խոսել որակյալ կրթության մասին, ուստի ուսուցիչներն ու դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները իրենց մեջ պե՛տք է ունենան այս հավաստամքը՝ սիրտ (վերաբերմունք), գլուխ (գիտելիք) և ձեռք (հմտություն), որոնցով նրանք կհաղթահարեն բոլոր այն դժվարությունները, որոնց նրանք բախվում են ամեն օր:



2. Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն և մասնակցություն: Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում:

- Թե ի՞նչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:
- Կարևորն այն է, որ ախտորոշումը, որը հին մոտեցմամբ (դեֆեկտոլոգիա) ընդգծում էր աշակերտի «թերությունները», **այլևս չի դիտարկվելու**: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի՝ ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:

- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը անմիջապես տրամադրել դասարանում: Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ **մասնակցություն, համագործակցություն և հավասարություն**: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է:

Բաշխման նյութ 1.9

 Ամիս, ամսաթիվ, խմբի անվանում

Ելքի քարտ
Ինձ դուր եկան (դասընթացի հաջողված կողմերը)՝
1.
2.
3.
Դասընթացի չհաջողված կողմերը՝
1.
2.
3.
Թերի (չհասկացված) մնացին՝
1.
2.
3.

Առաջարկում եմ՝

1.

2.

3.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՍԱՆԴՂԱԿԻ (ԸՍՏ ԵՐԵՒԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ) ՄԱՀՄԱՆՈՒՄԸ

Մինչև հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառական կրթության անցմանը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար Տավուշի մարզում ներդրված ֆինանսավորման կարգը հիմք դարձավ հանրակրթական դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման և մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրանն անհրաժեշտ ֆինանսավորման այնպիսի մեթոդաբանության մշակմանը, որը ֆինանսական միջոցները ուղղորդեց բացառապես **սովորողի կողմից ուսումնական և մանկավարժահոգեբանական ծառայությունների ստացմանը:**

Մշակվեց և հաստատվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, հայաստանի հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 141-Ն (16.02.2017թ.) որոշումը:

Այս որոշմամբ նախատեսվում է կանոնակարգել բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն), որով նախատեսված համընդհանուր ներառական կրթության, ներառյալ լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակից օգտվող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաների համար անհրաժեշտ ֆինանսավորման հետ կապված խնդիրները: **Կառավարության սույն որոշումը² հիմնված է վերոնշյալ**

² Տե՛ս «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, հայաստանի հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-ն որոշման

օրենքով սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնական և մանկավարժահոգեբանական ծառայությունների համար ֆինանսավորման սկզբունքների վրա:

Վարժություն 1.15

Նշե՛ք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների այն խնդիրները, որոնց դեպքում նրանք կարող են ստանալ ֆինանսավորման բարձրացված չափաքանակ:

Բաշխման նյութ 1.10

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն)՝

- 1) **Հոդված 3-ի 10.7 կետով սահմանվել է «ֆինանսավորման բարձրացված չափաքանակ» հասկացությունը, որը** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափն է, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար.
- 2) Հոդված 35-ի 3.1. և 3.2 կետերի համաձայն «Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ.

- 1) ձայնի և խոսքի.
- 2) լսողական.
- 3) տեսողական.
- 4) ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող.
- 5) շարժողական:

3.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ ամբողջ տարածքում համընդհանուր ներառման անցման ֆինանսական ծախսերի պլանավորման մեթոդաբանության հիմքում դրվել է Տավուշի մարզի փորձը և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) սահմանված մոտեցումները:

Սույն օրենքի 3-րդ հոդվածի 10.3 և 10.4 կետերով սահմանված «ներառական կրթություն» և «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունների

մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

բովանդակությանը համապատասխան ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների բարձրացված չափաքանակը պետք է ուղղվի հաստատության բոլոր, այդ թվում՝ **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների դրույքների սպասարկմանը:**

Վարժություն 1.16 *Դպրոցն ունի միջին, ծանր և խորը խնդիրներով* կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 17 երեխա, ընդ որում միջին խնդիրով երեխաների թիվը 8 է, ծանրերինը՝ 6, խորը՝ 3: Հաշվեք, թե դպրոցը ինչքա՞ն ֆինանսավորում կստանա այս երեխաների կրթության և մանկավարժահոգեբանական ծառայությունների ապահովման համար, եթե 1 երեխայի համար տրամադրվել է 595000 դրամ գումար:

Բաշխման նյութ 1.11

Ըստ ՀՀ կառավարության N141-Ն որոշման «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսավորումից բացի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար հատկացվում են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ ըստ հետևյալ բանաձևի՝

Լմ=ՈւՕաՖ+ Տբչ, որտեղ՝

Լմ-ն լրացուցիչ միջոցներ են,

ՈւՕաՖ-ն ուսուցչի օգնականների տարեկան աշխատավարձի ֆոնդն է,

Տբչ-ն ֆինանսավորման բարձրացված չափաքանակն է, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների աշխատավարձի տարեկան ֆոնդն է: *Տբչ-ն հաշվարկվում է միջին, ծանր և խորը խնդիրներ ունեցող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթության կազմակերպման համար հատկացված տարեկան գումարի և ըստ խնդրի ծանրության աստիճանի (միջին, ծանր և խորը) սահմանված գործակցի արտադրյալով: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներով սովորողների համար սահմանել են համապատասխանաբար հետևյալ գործակիցները՝ միջինի համար 0,97, ծանրինը՝ 1,0, իսկ խորը՝ 1,034:*

Քանի որ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների թիվը պետք է հստակեցվի մանկավարժահոգեբանական գնահատման նոր՝ Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԲ) և այլ հարակից գործիքակազմով, ապա առայժմ նշված խմբերին պատկանող սովորողների թվային ճշգրիտ, անգամ մոտավոր պատկերը դեռևս հստակ չէ: Այն հետագայում կհստակեցվի Մանկավարժահոգեբանական գնահատման տարածքային կենտրոնների և հանրապետական կենտրոնի կողմից, արդեն իսկ գնահատված կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների վերագնահատման և համընդհանուր ներառական կրթության աշխարհագրության ընլայնմանը զուգընթաց նոր հայտնաբերված երեխաների գնահատման արդյունքում:

Ըստ սույն կարգի տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ֆինանսավորման բարձրացված չափաքանակի հանրագումարը հաշվարկվում է օրենքով սահմանված ֆունկցիաների միջին, ծանր, խորը խանգարումներ ունեցող սովորողների համար համապատասխան գործակիցների կիրառմամբ և կախված է տվյալ հաստատությունում այս խմբի սովորողների ընդհանուր թվից: Վերջինս կարևորվում է տվյալ հաստատությունում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցող մանկավարժական աշխատողների դրույքների հաշվարկման տեսանկյունից: Միաժամանակ, համընդհանուր ներառմանն անցած բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում է **ուսուցչի օգնականի** հաստիքներ:

Ուսուցչի օգնականի աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում դրվում է «Ներառական կրթություն» ծրագրով՝ ըստ մարզերի հատկացված բյուջետային միջոցները, որոնք պետք է լրացվեն պետբյուջեից հատկացված լրացուցիչ ֆինանսական միջոցներից՝ ըստ տվյալ մարզում (Երևան քաղաքում) համընդհանուր ներառման ժամանակացույցով սահմանված ֆինանսավորման՝ ըստ ՀՀ կառավարության 18.02.2016թ. N6 արձանագրային որոշմամբ սահմանված ժամանակացույցի վերոնշյալ որոշման (16.02.2017 թ. N 141 - Ն) ուժի մեջ մտնելու պահից):

Ուսուցչի օգնականի աշխատավարձի տարեկան աշխատավարձի ֆոնդի հաշվարկի հիմքում նույնպես դրվել է Տավուշ մարզում փորձարկված մեթոդաբանությունը, ինչը արտացոլված է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից»:

Այս դեպքում, 15 երեխայի համար սահմանվում է 1 ուսուցչի օգնականի դրույք, ընդ որում, դպրոցում երեխաների թիվը 7 և 7-ից պակաս լինելու դեպքում հաշվարկվում է 0,5 դրույք, իսկ 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է ևս 0,5 դրույք: Ուսուցչի օգնականի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է մանկավարժների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի 80 տոկոսի չափով:

Ուսուցչի օգնականների աշխատավարձի ֆոնդը նույնպես հաշվարկվում է ՀՀ կառավարության N 141-Ն (16.02.2017թ.) որոշմամբ սահմանված հետևյալ բանաձևով՝

$$\text{ՈւՕաՖ} = \text{ՈւՕթ} \times \text{Մա} \times \text{Աթ, որտեղ՝}$$

ՈւՕթ-ուսուցչի օգնականների դրույքների թիվն է,

Մա - ուսուցչի օգնականների միջին ամսական աշխատավարձը,

Աթ.- հաշվարկվող ժամանակաշրջանի ամիսների թիվը:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վարժություն 1.17 *Խմբային աշխատանք*

Լսարանը բաժանել «*տնօրենի*», «*տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի*», «*տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի*», «*ուսուցչի*», «*ուսումնական հաստատության հոգեբանի*», «*ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժի*» խմբերի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարել ուսումնասիրել Բաշխման նյութ 1.12-ում իրենց անվանը համապատասխան պաշտոնային պարտականությունները և ներկայացնել լսարանին:

Բաշխման նյութ 1.12

Հանրակրթական դպրոցի մակարդակում, ինչպես գիտեք, սովորողներին մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողներ են համարվում, ոչ միայն դասավանդող ուսուցիչը, այլև հատուկ մանկավարժը (լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենամանկավարժ, էրգոթերապիստ), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և ուսուցչի օգնականը: Ներառական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողներին տրամադրվող մանկավարժահոգեբանական ծառայությունները ընդգրված են «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 14.10.2010թ. N1391-Ն որոշմամբ հաստատված առանձին մանկավարժական պաշտոնների նկարագրերում: Մանկավարժական աշխատողների առանձին պաշտոնների համար սահմանվել են պաշտոնային պարտականությունների հետևյալ լրացումներն ու փոփոխությունները: Այսպիսով,

- 1) ***Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի*** համար սահմանվել են հետևյալ լրացուցիչ պարտականությունները՝
- 1) ***Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի*** համար սահմանվել են հետևյալ լրացուցիչ պարտականությունները՝
 - պատասխանատվություն է կրում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար,

- ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար կրթության առանձնահատուկ պայմաններ՝ հանրակրթական հիմնական առարկայական ծրագրերի յուրացմանը նպատակաուղղված ուսուցում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անհատական ուսուցման պլանի մշակում և իրականացում:

2) ***Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի*** համար սահմանվել են՝

- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության տրամադրումը,
- ուսումնական հաստատության տնօրենի հետ միասին պատասխանատվություն է կրում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար,
- պատասխանատու է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման և անհատական ուսացման պլանի (այսուհետ՝ ԱՈԻՊ) մշակման, իրականացման և գնահատման համար.
- պահպանում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր սովորողի համար կազմված անհատական գործը՝ թղթապանակը:

3) ***Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի*** համար սահմանվել են հետևյալ հավելյալ պարտականությունները՝

- մասնակցում է ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սովորողների աջակցության ծառայությունների տրամադրման և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործընթացի կազմակերպման հարցերում.
- աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում,
- աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում:

4) ***Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*** համար սահմանվել են հետևյալ հավելյալ պարտականությունները՝

- իրականացնում է սահմանված ձևաչափին համապատասխան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈԻՊ-ի կազմումը և վարումը.
- ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի

բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՌԻՊ-ի.

- իրականացնում է սովորողների դիտարկում, առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում, մասնակցում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանը.
- համագործակցում է ուսուցչի օգնականի հետ՝ սովորողների ուսուցման արդյունավետ մեթոդների ու տեխնոլոգիաների ընտրության, ուսուցման կազմակերպման խմբային և անհատականացված մոտեցումների պլանավորման, ուսումնական նյութերի մշակման աշխատանքներում.
- գործընկերների հետ միասին իրականացնում է սովորողի, (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) կրթության որակի ապահովմանն ուղղված այլընտրանքային ծրագրային, մեթոդամանկավարժական աշխատանքներ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարողությունները առանձնահատկությունները ու հետաքրքրությունները.

5) **Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի** համար սահմանվել են հետևյալ հավելյալ պարտականությունները՝

- մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը՝ ապահովելով մասնագիտական շարունակական խորհրդատվություն.
- բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված հոգեբանական խնդիրները:

6) **Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժի** համար՝

- մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը,
- բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների մոտ նկատված սոցիալ-մանկավարժական խնդիրները.
- սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական խմբի աշխատանքներին:

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԸ

Ուսուցչի օգնականի ինստիտուտը հանրակրթական դպրոցներում ներդրվում է համընդհանուր ներառական կրթության անցման համատեքստում, որի հիմնական նպատակը բոլոր սովորողների համար որակյալ կրթության ապահովմանը աջակցող մանկավարժական

դիսցիպլինար (առարկայական) որոշակի խնդիրների շուրջ համապատասխան ծառայությունների տրամադրումն է: *Խնդիրների շրջանակը բացառապես ուղղված է սովորողի կամ սովորողների խմբի կողմից ուսումնական նյութի առավել համակողմանի յուրացման դժվարությունների բացահայտմանը, հոգեբանական խոչնդոտների հաղթահարմանը և առանձին դեպքերում նաև մանկավարժամեթոդական հնարների կիրառման միջոցով առարկայական ուսումնական նյութի յուրացմանը:*

Տավուշի մարզում փորձարկված ուսուցչի օգնականի հաստիքի պարտականությունների շրջանակը նույնացվել էր ուսուցչի օգնականի ու հատուկ մանկավարժի պաշտոնային պարտականություններին՝ ելնելով այն օբյեկտիվ հանգամանքից, որ մարզի գյուղական ու քաղաքային շատ համայնքներում գրեթե բացակայում էին բարձրագույն կրթությամբ համապատասխան որակավորում ունեցող հատուկ մանկավարժները:

Սակայն ուսուցչի օգնականի գործառույթների հետագա հստակեցումը, այդ պաշտոնի գործառույթների շրջանակը սահմանվեց բացառապես սովորողներին ուսումնական նյութի յուրացման խնդիրների լուծման մեթոդամանկավարժական ու առարկայական բովանդակության խնդիրների հաղթահարման աջակցության մանկավարժական ծառայությունների շուրջ: Դա նաև հիմք դարձավ սույն պաշտոնում աշխատողների դեպքում համապատասխան առարկայական ուղղվածության ուսուցչի որակավորումն ունեցող մանկավարժական աշխատողներին ուսուցչի օգնականի պաշտոնում նշանակելու դրույթի ամրագրումը: Բացի այդ, քանի որ սովորողի ԱՌԻՊ-ը դարձավ բացառապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին դասավանդող ուսուցչի կողմից լրացման ենթակա փաստաթուղթ, ուստի դրա վարման վերահսկողության պարտականությունը դրվեց ուսուցչի օգնականի վրա: Միաժամանակ, հստակեցվեցին նաև ԱՌԻՊ-ի վարման հետ կապված թիմային համագործակցության ու փաստաթղթավորման գործընթացներում առկա ոչ հստակ պարտականություններն ու պատասխանատուները:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարժություն 1.18 Ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականություններից դուրս գրել նրա կողմից իրականացող հետևյալ ծառայությունները՝

1. սովորողի ուսուցման և դաստիարակության,
2. ԱՌԻՊ-ի իրականացման,
3. ուսուցչին աջակցության,
4. սովորողին աջակցության,
5. գործընկերներին փորձի փոխանակման:

Բաշխման նյութ 1.13

1) օգնում է ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում,

2) աջակցում է ԱՌԻՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ.

3) աջակցում է ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար՝ ԱՌԻՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ,

4) ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ,

5) օժանդակում է ուսուցիչներին բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում,

6) մասնակցում է ուսուցչի կողմից դասերի պլանավորման աշխատանքներին.

7) ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում է երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները,

8) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը,

9) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,

10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,

11) մասնակցում է հաստատության մեթոդափոխարկումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին,

12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

13) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական խմբի աշխատանքներին:

2. Ուսուցչի օգնականի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. առարկայական չափորոշիչները, ծրագրերը և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, մինչբժշկական օգնության հիմունքները,

2) աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման պահանջները՝

1) Ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն, կամ բարձրագույն կրթություն և/կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը կարող է զբաղեցնել սույն պաշտոնի որակավորման պահանջները բավարարող և տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոնում չաշխատող անձը:

Վարժություն 1.19 Սովորողի ուսումնառության արդյունքների վրա ուսուցչի ազդեցության համապատասխան բնութագրիչի համարը լրացրե՛ք աջ սյունակում՝ ըստ ազդեցության նվազման հաջորդականության:

Ուսուցչի բնութագրիչները	Ազդեցությունը սովորողի ուսումնառության արդյունքների վրա (բնութագրիչի համարը)
1. Ուսուցման որակը	
2. Անհատական կամ փոքր խմբային ուսուցումը	
3. Ուսուցչի վերապատրաստումը	

4. Մատչելի դասավանդումը	
5. Սովորողներին չպիտակավորելը	
6. Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը	
7. Ուսուցչի աշխատանքի արդյունքների նկատմամբ վերադասի վերաբերմունքը	
8. Առարկայական իմացությունը	

Տրված աղյուսակի աջ սյունակում յուրաքանչյուր մասնակից նախ նշում է իր պատկերացմամբ սովորողի ուսումնական ձեռքբերումների վրա ամենամեծ ազդեցությունն ունեցող բնութագրիչի համարը, ապա հաջորդաբար նշում է մյուս ազդեցությունների համարները՝ ըստ դրանց ազդեցության նվազման: Այնուհետև պաստառի վրա գծվում է աղյուսակ, որը բաժանվում է հորիզոնական ուղղությամբ 8, իսկ ուղղահայաց ուղղությամբ՝ ըստ դասընթացի մասնակիցների թվի մասերի: Ապա յուրաքանչյուր ուղղահայաց սյունակում նշվում է յուրաքանչյուր դասընթացի մասնակից կողմից ընտրված բնութագրիչների համարները՝ ըստ դասընթացի մասնակից հաջորդականության: Աղյուսակը լրացնելուց հետո ամփոփվում է, թե սովորողի ուսումնական ձեռքբերումների վրա ուսուցչի ազդեցության յուրաքանչյուր բնութագրիչ, որպես սովորողի ուսումնառության վրա առաջնային ազդեցություն ունեցող գործոնի, մոտավորապես քանի՞ տոկոս է գնահատվել:

Վարժություն 1.20

Խմբային աշխատանք՝ «Մի՛ սսս, այլ օգտագործիր»: Լսարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի և դասընթացի մասնակիցներին հանձնարարել աջ սյունակում լրացնել հոմանիշ բառեր, բառակապակցություններ, որոնք առավել ընդունելի են ներառման բառապաշարի ձևակերպումների տեսանկյունից: Քննարկել և լրացնել լսարանի առաջարկած՝ ներառականության տեսանկյունից առավել ընդունելի ձևակերպումները: Համեմատել դրանք լրացված աղյուսակի ձևակերպումների հետ:

ՄԻ՛ ԱՍՍ	ՕԳՏԱԳՈՐԾԻՐ
Թերաթեք կամ անկարող	
Նա խելքից պակաս է	
Նա աուտիկ է	

Նա դառն է	
Նա ուսուցման համար պիտանի չէ	
Նա գաճաճ է	
Նա գամված է սայլակին	
Նա դեբիլների դպրոցում է սովորում	
Նա թերզարգացած է	
Չի խոսում	
Իսփնված	
Հաշմանդամների մեքենայի կանգառ	
Նա հատուկ խնամքի կարիք ունի	
Նա խուլուհամր է	

Բաշխման նյութ 1.14 ԻՆՉՊԵՍ ԽՈՍԵԼ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ

Հաշմանդամություն ունեցող մարդիկ մեր հասարակության ամենախոցելի խումբն են կազմում: Նրանց մեջ մեծ թիվ են կազմում կրկնակի խոցելիները՝ ովքեր նաև աղքատ են, ծնողագուրկ, մուրացիկ, ծեր, փախստական և այլն: Եվ նրանց բոլորի համար ընդհանուր է միայն մեկ բան՝ հասարակության կանխակալ վերաբերմունքը, նախապաշարմունքները և խտրականությունը: Բառերն ու արտահայտությունները վիրավորելու, ինչպես նաև՝ սփոփելու մեծ ուժ ունեն: Մենք պարտավոր ենք իրազեկ լինել, թե այն խմբի անդամները, ում մասին խոսում կամ գրում ենք, ինչպես են նախընտրում, որ իրենց անվանեն: Հաշմանդամություն ունեցող մարդիկ խիստ զգայուն են իրենց բնութագրող բառերի նկատմամբ: Այն երկրներում, որտեղ հավասար հնարավորությունների համար շարժումը դարձել է առավել ակտիվ, գործածության մեջ են մտել բնորոշումներ ու հասկացություններ, որոնք չեն հարուցում խղճահարություն կամ այլ

բացասական զուգորդություններ: Բառերն առաջացնում են զուգորդություններ, որոնք կարող են ձևավորել կարծրատիպեր, դրանք էլ իրենց հերթին՝ հասարակական վերաբերմունք:

ԼԵԶՎԻ ԵՎ ՊԻՏԱԿՆԵՐԻ ՈՒԺԸ

Ովքե՞ր են կոչվում թերարժեքներ կամ անկարողներ:

Գոյություն ունեցող կարծրատիպերի համաձայն՝ նրանք՝

- մարդիկ են, ովքեր տառապում են բնածին արատներից,
- կաթվածահար հերոսներ են, որ պայքարում են նորից նորմալ դառնալու համար,
- գոհեր, ովքեր պայքարում են կյանքի մարտահրավերը հաղթահարելու համար: Նրանք կոչվում են աուտիկ, կույր, խուլ, անկարող և այլն, և այլն, և այլն...

Իսկ ովքե՞ր են նրանք իրականում: Իրականում նրանք՝

- հայրեր և մայրեր են,
- որդիներ և դուստրեր,
- աշխատողներ և գործատուներ,
- ընկերներ և հարևաններ,
- ուսանողներ և ուսուցիչներ,
- առաջնորդներ,
- գիտնականներ, բժիշկներ, դերասաններ, նախագահներ:

Ավելին, ՆՐԱՆՔ ՄԱՐԴ ԵՆ, ամեն բանից առաջ՝ նախ մարդ են:

ԽՈՍՔՆ ՈՒԺ Է

«Եթե միտքն աղավաղում է լեզուն, ապա լեզուն կարող է խեղաթյուրել միտքը»:

Ջորջ Օրուել

Հնացած, ոչ ճիշտ բնորոշումները խորացնում են կարծրատիպերը հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին և ուժեղացնում շփման արգելքները, իսկ դա շատ ավելի մեծ խնդիր է նրանց համար, քան բուն հաշմանդամությունը:

Երբ մենք ախտորոշումը դարձնում ենք մարդու ամենակարևոր հատկանիշը, արժեզրկում ենք նրան, ոտնահարում նրա անհատականությունը:

Դուք կցանկանալի՞ք, որ ձեզ ճանաչեին ձեր պտորիագով, գինեկոլոգիական պատմությամբ, ինչ-որ արատով կամ նման այլ «հատկանիշով»:

Ցավոք, հաշմանդամության ախտորոշումը կարող է դառնալ մարդու արժևորման և հնարավորությունների գնահատման չափանիշ:

Երբ մենք իմանում ենք ինչ-որ մեկի ախտորոշումը, մեզ թվում է, թե կարևոր բան գիտենք այդ մարդու մասին, և այդ փաստն օգտագործվում է որոշելու համար, թե այդ մարդը ե՛րբ և որտե՛ղ պետք է սովորի, ի՛նչ աշխատանք կարող է կատարել, ի՛նչ աշխատանք՝ ոչ, որտե՛ղ և ինչպե՛ս պետք է ապրի, ի՛նչ «ծառայություններ» են նրան անհրաժեշտ և այլն: Եվ այդ ամենը հաճախ ավարտվում է հազարավոր երեխաների և չափահասների հասարակական և ֆիզիկական առանձնացումով հատուկ դպրոցներում, հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերի, հատուկ մոտեցումների միջոցով: Արդյոք այլ մարդիկ մեկուսացվում կամ արժեզրկվո՞ւմ են միայն իրենց ախտորոշման հիման վրա: Ախտորոշման հիման վրա մենք ճանաչում ենք մարդու մարմինը՝ գրեթե հաշվի չառնելով, թե ինչ կա նրանց սրտում և մտքում, ուստի հաճախ, օգնելու փոխարեն, կարող ենք վնասել նրան, անգամ կործանել նրա կյանքը:

ՈՉ ՃԻՇՏ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Անդամալույծ. սա մի հնացած տերմին է, որն առաջացնում է խղճահարություն, վախ և նման այլ բացասական զգացումներ: Առօրյա խոսակցական լեզվում հաճախ օգտագործում են «ինվալիդ» բառը, որը հայերեն չէ: Դա թարգմանաբար նշանակում է «ոչ պիտանի»: Պատկերացնո՞ւմ եք այն մարդու հոգեվիճակը, ում անընդհատ անվանում են ոչ պիտանի:

Հաճախ ծնողներն ասում են. «Մենք հատուկ խնամքի կարիք ունեցող երեխա ունենք»: Սա խղճահարություն է առաջացնում և ստանում է նման պատասխան «Օ, ի՛նչ ցավալի է»: Խնամքը, որի պահանջն ունի մարդը, «հատուկ չէ» նրա համար. այն սովորական է: Դժվար է հանդիպել հաշմանդամություն ունեցող մարդու, ով ցանկություն հայտնե՞ր կոչվելու «հատուկ» Եկեք սովորենք նրանցից, ովքեր այդ կարգի փորձ ունեն, և վերջ տանք խղճահարություն առաջացնող բնորոշումների օգտագործմանը:

«Տառապում է ինչ-որ բանից», «զոհ է»՝ այս և այլ կարգի բնորոշումները ճիշտ չեն, համապատասխան չեն և հնացած են:

Ի՞ՆՉ Է ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք գոյություն ունի՞ հաշմանդամության համընդհանուր սահմանում. ո՛չ: «Հաշմանդամություն» հասկացության հիմնական բնորոշումներից մեկի համաձայն՝ այն

բժշկական ախտորոշում է, որը դառնում է ծառայությունների սոցիալ-քաղաքական անձնագիր կամ իրավաբանական կարգավիճակ: Ավելին՝ սահմանումը հանրամատչելի է և կախված է ծառայություն մատուցող համակարգից: «Հաշմանդամությունը» եզր է, որը ստեղծվել է այն մարդկանց նույնացման համար, որոնց իրավունք է վերապահվում օգտվել ծառայություններից կամ պետության երաշխիքներից:

ԽՆԴԻՐԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԷ

Հասարակությունը միտում ունի հաշմանդամությունը դիտարկելու որպես անհատի խնդիր: Ոչ հաշմանդամ մարդիկ, սակայն, շատ չեն ուզում խոսել իրենց խնդիրների մասին: Նրանք գիտեն, որ դա լավ տպավորություն չի թողնի իրենց մասին:

Ակնոց դնող մարդը այստեղ-այնտեղ չի ասում. «Ես տեսողության խնդիր ունեմ», այլ ասում է՝ «Ես ակնոց եմ դնում»:

Այն, ինչ սովորաբար կոչվում է խնդիր, իրականում պահանջ է: Այսպես, օրինակ՝ Աննան ոչ թե «քայլելու խնդիր ունի», այլ «օգտագործում է սայլակ», Ռուբենը ոչ թե «վարվելաձևի խնդիր ունի», այլ «վարվելաձև սովորելու պահանջ»:

Դուք կցանկանայի՞ք, որ ձեզ ճանաչեին ձեր խնդիրներով, թե՞ մի շարք դրական հատկանիշներով, որոնք ձեզ դարձնում են իսկական անհատ:

Ե՞րբ ոչ հաշմանդամները կսկսեն խոսել հաշմանդամություն ունեցող անձանց մասին նույն հարգանքով, ինչպես իրենք իրենց մասին են խոսում:

ԻՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆ ՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԳԵԼՔՆԵՐՆ ԵՆ

«Ճիշտ խոսքի և գրեթե ճիշտ խոսքի միջև տարբերությունը նույնն է, ինչ կայծակի և լուսատուի միջև»:

Մարկ Տվեն

Վերաբերմունքի փոփոխությունը փոխում է ամեն ինչ: Եթե ուսուցիչները հավատան, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն սովորելու նույն կարողությունները, նույն որակի կրթության պահանջ, ինչ նրանց քույրերը, եղբայրներն ու ընկերները, մենք չենք ունենա կրթություն չստացած երեխաներ:

Եթե գործատուները հավատան, որ հաշմանդամություն ունեցող չափահաս անձինք ունեն (կամ կարող են ձեռք բերել) նույն աշխատանքային հմտություններն ու կարողությունները, ինչ ոչ հաշմանդամները, մենք չէինք ունենա այսքան մեծ թվով գործազուրկ մարդիկ:

Եթե հասարակական վայրերի և սպասարկման ոլորտի հիմնարկությունները համարեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ փող ունեն և կարող են հաճախորդ լինել, ապա չէին լինի այսքան անմատչելի խանութներ, սրճարաններ, գուգարաններ և այլն:

Եթե հաշմանդամություն ունեցող մարդիկ և նրանց ընտանիքների անդամները իրենք իրենց համարեն երկրի լիարժեք քաղաքացիներ և լիարժեքորեն ներգրավված լինեն հասարակական կյանքում, գուցե նրանք կարողանան կենտրոնանալ այն ամենի վրա, ինչն իսկապես կարևոր է՝ ապրել իրական կյանքով իրական աշխարհում և երազել մեծ սխրանքների ու ձեռքբերումների մասին, այլ ոչ թե կաղապարվել հատուկ կյանքով հաշմանդամություն ունեցող մարդկանց աշխարհում, որտեղ չկան սպասումներ, և տիրում են կղզիացումը, խտրականությունը, աղքատությունն ու հուսահատությունը:

ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ

«Մեր սերնդի գերագույն հայտնագործությունն այն էր, որ մարդ էակը, փոխելով իր մտքի ուղղվածությունը, կարող է փոխել իր կյանքը»:

Ուիլյամ Ջեյմս

Հաշմանդամությունը պարզապես մարդկային բազմազանության մի տեսակ է, ինչպես սեռը, ազգությունը, ռասայական պատկանելությունը: Արդյոք ձեր կյանքը սահմանափակված է ձեր սեռով, ազգությամբ, կրոնով, տարիքով. իհարկե ո՛չ: Ուրեմն ինչո՞ւ պետք է սահմանափակենք նրանց կյանքը, ովքեր հաշմանդամություն ունեն:

Այո՛, հաշմանդամությունը բնական երևույթ է. այն կարելի է սահմանել որպես «մտավոր կամ ֆիզիկական մի ֆունկցիա, որը գործում է այլ կերպ»: Վնասված ողնաշարով մարդն ունի ոտքեր, որոնք այլ կերպ են գործում, Դաունի համախտանիշ ունեցող անձինք այլ կերպ են սովորում և այլն:

Հաշմանդամություն պատճառը հաճախ միջավայրն է: Ինչո՞ւ շատ երեխաներ չեն ախտորոշվում մինչև դպրոց հաճախելը. բժիշկներն են անիրազեկ, թե՞ ծնողներն են «հրաժարվում» այդ մտքից: Գուցե պատճառն այն է, որ նրանք ընդօրինակում են այն, ինչ շրջապատում է ընդունված:

Երբ դպրոցում երեխայի սովորելու ձևը չի համապատասխանում ուսուցչուհու դասավանդման մեթոդիկային, վերջինս խնդիրը հաշմանդամությունն է համարում: Ինչո՞ւ ենք մեղադրում երեխային, պիտակավորում նրան և առանձնացնում մյուսներից: Ինչո՞ւ չենք փոխում հիմնական ուսումնական ծրագիրն այնպես, որ դա համապատասխանի երեխայի կարողություններին և կարիքներին:

Երբ մարդը մատչելի միջավայրում է, ստանում է համապատասխան աջակցություն, ծառայություններ, նա կշարունակի՞ հաշմանդամ մնալ. ո՛չ: Եթե կա «հաշմանդամության

խնդիր», ապա «մեղավորը» միջավայրն է, այլ ոչ թե ֆիզիկական կամ մտավոր խնդիրը: Մենք մարդկանց չպետք է փոխենք թերապիայի միջոցով. մենք պետք է փոխենք միջավայրը՝ դարձնելով այն մատչելի բոլորի համար առանց որևէ խտրականության:

ՕԳՏԱԳՈՐԾԻ՝ Դ «ՄԱՐԴ»-Ը ԵՎ ԱՊԱ ՄԻԱՅՆ ՄՅՈՒՍ ԲԱՌԵՐԸ

Դուք կարճատե՞ս եք, թե՞ ակնոց եք դնում:

Դուք սրտայի՞ն եք, թե՞ սրտի խնդիրներ ունեք:

Մարդը թերարժե՞ք է, անկարո՞ղ, թե՞ հաշմանդամություն ունի:

Եթե հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ներգրավվեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մյուսների պես պետք է գնահատվեն, մենք պետք է վերջ տանք այն լեզվով խոսելուն, որը նրանց տարանջատում է մյուսներից և արժեզրկում:

Հաշմանդամություն ունեցող տղաները և աղջիկները առաջին հերթին երեխաներ են: Նրանք ճանաչվելու համար միայն անվան կարիք ունեն: Ուսուցիչները պետք է վերջ տան այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք են՝

- հատուկ ուշադրություն պահանջող երեխաներ,
- սահմանափակ հնարավորություններով սովորողներ,
- ներառված կամ ինտեգրված սովորողներ,
- անվասայլակին գամված,
- խեղված,
- դեբիլ,
- անկարող,
- անընդունակ և այլն:

Ծնողները երեխաների հետ խոսելիս չպետք է գործածեն մասնագիտական տերմիններ: Բժշկական պիտակներն անընդունելի են ընտանիքում, ընկերական միջավայրում և հասարակության մեջ: Բացի այդ, ախտորոշումը ոչ մեկի գործը չէ: Արդյոք հաշմանդամություն ունեցող անձը մեզ իրավունք տվե՞լ է ուրիշների հետ կիսել այդ կարգի անձնական տեղեկություններ: Եվ հետո՝ դուք առաջին հանդիպած մարդուն սովորաբար ասո՞ւմ եք ձեր ամուսնու չիբանի մասին (հուսով եմ՝ ոչ):

Մենք երբեմն օգտագործում ենք ախտորոշումը տեղեկություն փոխանցելու համար, օրինակ՝ ծնողը ուսուցչին կամ բժշկին կարող է ասել. «Իմ երեխան Դաունի համախտանիշ ունի», երբ ուզում է մատնանշել նրա առանձնահատուկ կարիքները: Մակայն երբեմն ախտորոշման նշումը կարող է վախեցնել մարդկանց, խղճահարություն առաջացնել կամ մերժման բերել («Մենք գործ չունենք այսպիսի մարդկանց հետ...»): Նման դեպքերից խուսափելու համար կարելի է հարգալից և արժանավայել ձևով պարզապես նկարագրել, թե ինչի կարիք ունի անձը՝ ուղղակիորեն չնշելով նրա ախտորոշումը:

Բացի այդ, ախտորոշումը մարդու անձնական խնդիրն է. արդյոք նա մեզ իրավունք տվե՞լ է խոսել այդ մասին:

Մարդու ինքնապատկերացումը և ինքնագնահատականը սերտորեն շաղկապված են նրան բնորոշող բառերի հետ: Մերունդներ շարունակ հաշմանդամություն ունեցող անձանց բնորոշելու համար օգտագործվել են բացասական և կարծրատիպերով պայմանավորված բառեր, որոնք ծնում են նոր կարծրատիպեր: Մենք պետք է հրաժարվենք նման պիտակներից և մարդու մասին խոսենք «մարդկային» լեզվով:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Օգնություն առաջարկելիս սպասեք մինչև այն կընդունվի, հետո հարցրեք, թե ի՞նչ և ինչպե՞ս անել:

Հաշմանդամություն ունեցող մարդու հետ խոսելիս դիմեք անմիջականորեն նրան, ոչ թե ուղեկցողին: Եթե նույնիսկ նա ժեստերի լեզվի թարգմանչի հետ է, ապա միևնույնն է, զրուցելիս նայեք նրա աչքերին:

Չափահաս մարդուն դիմեք ինչպես չափահասի: «Դու»-ի անցեք միայն այն դեպքում, երբ բավական մտերիմ եք:

Չտեսնող կամ թույլ տեսնող մարդու հետ հանդիպման ժամանակ անպայման ներկայացեք ինքներդ և ներկայացրեք ձեզ հետ եկած մարդկանց:

Թույլ տեսնող կամ կույր մարդուն ուղեկցելիս պետք չէ նրան «քարշ» տալ ձեր հետևից: Նախապես նրան նկարագրեք տարածքը և այն արգելքները, որոնց նա կարող է հանդիպել ճանապարհին (աստիճան, աթոռ, սեղան և այլն):

Մարդու անվասայլակին հենվելը նույնն է, ինչ սայլակի տիրոջ վրա հենվելը:

Անվասայլակը մարդու՝ օգտագործողի անձնական տարածքի մի մասն է:

Անվասայլակ օգտագործող մարդու հետ զրուցելիս աշխատեք, որ ձեր աչքերը նույն մակարդակի վրա լինեն:

Անվասայլակը հրելիս հիշեք, որ նրա ընթացքը հեշտությամբ արագանում է, և անսպասելի հարվածից կարող է հավասարակշռությունը կորցնել:

Վատ լսող մարդու հետ զրուցելիս ուշադիր լսեք: Սպասե՛ք, մինչև նա ավարտի ասելիքը: Մի՛ ձևացրեք, թե հասկացել եք նրան, եթե դա այդպես չէ: Զրուցելիս նայեք ուղիղ աչքերին, պա՛րզ խոսեք: Աշխատե՛ք, որ լույսն ընկնի ձեզ վրա, և ոչինչ ձեզ չխանգարի (ուտելիք, ծխախոտ):

Միայլ պատկերացում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր մարդիկ հակված են բռնության: Ընկերական եղեք, և նրանք իրենց հանգիստ ու ապահով կզգան: Մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ ընդունակ են շփման և հաղորդակցման: Նրանց հետ շփվեք պարզ և հստակ բառերով:

Երբ չգիտեք՝ ինչպե՞ս վարվել, մի՛ շփոթվեք. հարցրե՛ք այդ մասին հաշմանդամություն ունեցող մարդուն: Այդպես ցույց կտաք նրա հետ հաղորդակցվելու ձեր պատրաստակամությունը:

ՄՈՂՈՒԼ 2

ՍՈՎՈՐՈՂԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2-րդ մոդուլի՝ «Սովորողի դիտարկում և ուսումնառության ունակությունների բացահայտում» (ՄԴՈՒՈՒԲ) աշխատանքներն իրականացնելու արդյունքում ուսուցիչները կամրապնդեն իրենց գիտելիքները սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման և դպրոցի աստիճանում (սովորողի կրթական կարիքի գնահատման առաջին մակարդակ) գնահատման ասպարեզում, կկարողանան հստակ և մասնագիտորեն բացահայտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման անհրաժեշտությունը, կիմանան և այլոց կներկայացնեն, թե ովքե՞ր են ներգրավված առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացներում, կծանոթանան գնահատման ձևերին ու գործիքներին, կկարողանան ինքնուրույն որոշել՝ ի՞նչը, ե՞րբ և ինչպե՞ս գնահատել, կտիրապետեն նաև սովորողների՝ դպրոցի մակարդակում կրթական կարիքների գրանցման ձևաթղթերին, մեթոդամանկավարժական մոտեցումներին, ինչպես նաև՝ այս գործընթացներում սովորողի ծնողի (ծնողների) հետ կատարվող աշխատանքներին և համագործակցությանը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման արդյունքում ստացած մասնագիտական (առարկայական), մանկավարժահոգեբանական տեղեկատվությունը ուսուցիչները կկարողանան օգտագործել ի շահ երեխաների:

ՄՈՂՈՒԼ 2

<p align="center">ՄՈՂՈՒԼ 2 Սովորողին աջակցությունների տրամադրումը դպրոցական մակարդակում և նրա ուսումնառության գնահատումը</p>		
1.	Մոդուլի նպատակը	Ամրապնդել ուսուցիչների գիտելիքները սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման և դպրոցի աստիճանում (սովորողի կրթական կարիքի գնահատման առաջին մակարդակ) գնահատման ասպարեզում:
2.	Տևողությունը	270 րոպե, որից 170 րոպեն՝ գործնական, 100 րոպեն՝ տեսական
3.	Դասընթացի մասնակիցն ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մասնագիտական կրթություն:
4.	Գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
5.	Վերապատրաստման արդյունքը	Ուսուցիչները կկարողանան հստակ և մասնագիտորեն բացահայտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման անհրաժեշտությունը, իմանալ, թե ովքե՞ր են ներգրավված առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացներում, ծանոթանալ գնահատման ձևերին ու գործիքներին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման արդյունքում ստացած մասնագիտական (առարկայական), մանկավարժահոգեբանական տեղեկատվությունը ուսուցիչները կկարողանան օգտագործել ի շահ երեխաների:
6.	Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակիցները ծանոթանում են գնահատման ձևերին: 2. Մասնակիցները ծանոթանում են սովորողի

		<p>ուսումնառության ունակությունների բացահայտման փուլերին:</p> <ol style="list-style-type: none"><li data-bbox="841 241 1534 325">3. Ձևավորվում են հմտություններ նախնական դիտարկում կատարելու համար:<li data-bbox="841 325 1534 409">4. Կարողանում են լրացնել դիտարկման քարտը:
--	--	--


Դաս 45 րոպե	Բովանդակությունը	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր և սլայդներ	Տևողություն
1	Անդրադարձ նախորդ օրվան «Ներառական կրթություն»	Վարժություն 2.1 Հասկացության քարտեզագրում		Սլայդ 1	15 րոպե
	Դիտարկում	Վարժություն 2.2 «Դիտիր»			15 րոպե
	Ինչպե՞ս եք դիտարկումը իրականացնում	Վարժություն 2.3			15 րոպե
2	Դիտել տեսաֆիլմը	Վարժություն 2.4			15 րոպե
	Դիտարկման քարտերի լրացում	Վարժություն 2.5		<i>Բաշխման նյութ 2.1</i>	15 րոպե
	Գաղափարների գրառում	Վարժություն 2.6			15 րոպե
3	Սովորողի ուսումնառության ունակությունների բացահայտում(ՍՈՒՈՒԲ), ուսուցանող գնահատում, ամփոփիչ գնահատում	Վարժություն 2.7		<i>Բաշխման նյութ 2.2</i> Սլայդ 2-5	20 րոպե
	Գործնական առաջադրանք	Վարժություն 2.8		<i>Բաշխման նյութ 2.3</i>	15րոպե
	Դիտարկում	Կարճ դասախոսություն		Սլայդ 6-8	10րոպե
4	Դիտարկման երկու դեպքերը	Վարժություն 2.9		<i>Բաշխման նյութ 2.4</i>	25 րոպե
	ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ	Վարժություն 2.10		<i>Բաշխման նյութ 2.5</i>	20րոպե

	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ				
5	Անփոփում	Վարժություն 2.11 3-2-1մեթոդ			10րոպե
	Ակտիվացնող վարժություն «Անձեռոցիկ»	Վարժություն 2.12			10րոպե
	Ի՞նչ էք հասկանում «ուսուցանող գնահատում» ասելով: Ի՞նչ գիտեք ուսուցանող գնահատման մասին:	Մտազրոհ			5րոպե
	Կարող եմ, կարող եմ օգնությամբ	Դ- աձև աղյուսակ			15րոպե
	Զարգացման մոտակա գոտի	Կարճ դասախոսություն		<i>Բաշխման նյութ 2.6 Բաշխման նյութ 2.7</i>	5րոպե
6	Ուսուցանող գնահատում: Ուսուցանող գնահատման մեկ շրջափուլ:	Դասախոսություն		Սլայդ 9-11	15րոպե
	Անփոփիչ գնահատում	Դասախոսություն		Սլայդ 12--18	10րոպե
	Գնահատում և դիտարկում			Սլայդ 19-23	10 րոպե
	Անդրադարձ	«Կյանքի գետը»			10 րոպե

Անդրադարձ նախորդ օրվան

Վարժություն 2.1 Հասկացության քարտեզագրում

Պաստառի վրա կենտրոնում զետեղում ենք «Ներառական կրթություն» հասկացությունը, որից տարվում են ճառագայթներ: Մասնակիցները ներկայացնում են նախորդ մոդուլից ստացած նոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք գրվում են յուրաքանչյուր ճառագայթին:



Վարժություն 2.2 «Դիտիր»

Նպատակը.

- Դիտողունակության ցուցաբերում:
- Ոչ խոսքային վարքագծերը տեսնելը և ընկալելը:

Ընթացքը.

1. Մասնակիցներին խնդրում ենք գույգեր կազմել: Մասնակիցները բաժանվում են գույգերի:
2. Ա-ն ընդունում է իր ցանկացած դիրքը: Բ-ն դիտում է և փորձում մտապահել՝ մարմնի կեցվածքը, ձեռքերի, թևերի ու ոտքերի դիրքը, գլուխը պահելու ձևը: Ապա Բ-ն շրջվում է:
3. Ա-ն իր կեցվածքում ինչ-որ բան փոխում է: Բ-ն կրկին շրջվում է և փորձում նկատել, թե ի՞նչն է փոխված:
4. Ա-ն և Բ-ն փոխվում են դերերով:
5. Կրկնել մի քանի անգամ:

6. Վարողը պետք է ընդգծի, որ սկզբում Ա-ն և Բ-ն պետք է կատարեն հեշտությամբ նկատելի փոփոխություններ, սակայն հետո փոփոխությունները պետք է ավելի նուրբ և դժվար նկատելի լինեն:

Մեկնաբանություններ Քննարկումը նպատակահարմար է ծավալել հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչն է հեշտ և ի՞նչը դժվար նկատել և ինչո՞ւ:
- Ի՞նչ է պահանջվում դիտողունակ լինելու համար:

Մարդկանց մեծ մասը հիմնականում ուշադրություն է դարձնում դիմացինի ոտքերի դիրքին և դեմքի արտահայտությանը: Նրանք ուշադիր չեն դիտում ընդհանուր մարմնի կեցվածքը և հակված չեն նկատելու՝ անձը ուղի՞ղ է նստած, թե՞ կքված: Մինչդեռ կեցվածքը հատկապես կարևոր է ուրիշի վերաբերմունքը և զգացողությունները գնահատելիս:

Վարժություն 2.3 *Ինչպե՞ս էք դիտարկումը իրականացնում*

Խմբային աշխատանք: Մասնակիցները բաժանվում են խմբերի, քննարկում, ապա յուրաքանչյուր խմբից որևէ մեկը բանավոր ներկայացնում է, թե ինչպե՛ս են իրենք դիտարկումն իրականացնում:

Վարժություն 2.4 Դիտել տեսաֆիլմը, հաշվել, թե սպիտակ մարզահագուստով խաղացողները գնդակով քանի՛ նետում են կատարում:

Վարժություն 2.5 Դիտարկման քարտերի լրացում

Նախապես ցուցադրված «Դաս դպրոցում» տեսաֆիլմի 1-ին մասի հիման վրա բոլոր մասնակիցները լրացնում են դիտարկման քարտերը և ներկայացնում լսարանին: Այնուհետև փորձում ենք ներկայացնել կատարված դիտարկումների օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումները: Ապա դիտում ենք «Դաս դպրոցում» տեսաֆիլմի 2-րդ մասը և համեմատում ենք խմբի դիտարկումների հետ:

Բաշխման նյութ 2.1

Դիտարկման քարտ

Սովորողի անուն, ազգանուն _____

Ուսուցիչ _____

Դասարան _____

Առարկա _____

Դիտարկման ամիս, ամսաթիվ _____

Դիտարկողի անուն, ազգանուն _____

Ուշադի՞ր է արդյոք դասի ժամանակ

Արդյոք պատասխանո՞ւմ է ուսուցչի հարցերին (ինքնուրույն կամ օգնությամբ)

- Ուշադիր է դասի ընթացքում, լսում է ընկերների պատասխանները
- Ակտիվ է, համագործակցող, լսում և ընդունում է հրահանգները
- Անվստահ է, հարցերին պատասխանելիս շփոթվում է
- Չի մասնակցում դասարանական աշխատանքներին
- Չի պատասխանում ուսուցչի հարցերին

Ինչպե՞ս է հաղորդակցվում ուսուցչի և ընկերների հետ

Շփվո՞ւմ է արդյոք համադասարանցիների հետ դասամիջոցին, ի՞նչ բնույթ ունեն նրա գործողությունները:

- Ակտիվ, նախաձեռնող է, հրամայում, կազմակերպում, ենթարկում է իրեն
- Ակտիվ է՝ ելնելով իրավիճակից
- Պասիվ հետևում է իր շուրջը կատարվող դեպքերին
- Անտարբեր է միջավայրի հանդեպ, խաղում է մենակ
- Ինքնամփոփ է, չի հաղորդակցվում:

Դասաժամին և դասամիջոցին սովորողին ուսումնասիրել 10-20 րոպե, նկարագրել այն: ոլորտները, որտեղ սովորողը դժվարանում կամ մշտական օգնության կարիք է զգում:

Լրացնող՝ _____

անուն, ազգանուն, պաշտոն Լրացման ամսաթիվ « ____ » _____ 20 թ.

Վարժություն 2.6 Գաղափարների գրառում

Պաստառը բաժանում ենք երկու մասի, որտեղ մասնակիցները լրացնում են, թե ի՞նչ կարելի է ավելացնել կամ ի՞նչը կարելի է փոխել դիտարկման քարտում, այնուհետև կաշուն թղթերի վրա կատարված գրառումները փակցնում են պաստառին (կամ պաստառի վրա լրացնել յուրաքանչյուր հարցադրման վերաբերյալ կարծիքները):

Վարժություն 2.7 Պաստառը բաժանեք 3 մասի և գրեք հետևյալ գնահատման ձևերը՝ Սովորողի ուսումնառության ունակությունների բացահայտում(ՍՈՒՈՒԲ), ուսուցանող գնահատում, ամփոփիչ գնահատում: Համապատասխան սյունակում մտազրոհի միջոցով գրեք գնահատման ձևերի վերաբերյալ լսարանի գաղափարները:

Բաշխման նյութ 2.2 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ըստ նպատակների գնահատման ձևերը հետևյալն են.

- **Սովորողի ուսումնառության ունակությունների բացահայտում:** Այս գնահատման նպատակն է՝ բացահայտել երեխայի հոգեկան զարգացման մակարդակը, նրա ուժեղ և թույլ կողմերը, կրթության կազմակերպման առանձնահատուկ պայմանները:
- **Գնահատում սովորելու համար (ուսուցանող գնահատում):** Գնահատման այս ձևը նպատակ ունի բարելավելու երեխայի ուսումնառության գործընթացը: Այն իրականացնում է ուսուցիչը և կրում է շարունակական բնույթ:

- **Երեխայի կրթական մակարդակի ամփոփիչ գնահատում:** Այս տիպի գնահատումը նպատակ ունի պարզելու, թե ինչքանո՞վ է երեխան յուրացրել կրթական ծրագիրը, և որքա՞ն է նրա գիտելիքների մակարդակը: Գնահատման ընթացքը կապված է կրթական ծրագրերի հետ և իրականացվում է թեստերի, գրավոր աշխատանքների և քննությունների միջոցով: Հատուկ կրթական կարիքներ ունեցող որոշ աշակերտների համար կարող է **ամփոփիչ** գնահատման տարբեր տեսակների կարիք լինել:

Օրինակ՝ ոչ թե գրավոր, այլ՝ բանավոր հարցում (գնահատում):

Սովորողի ուսումնաստության ունակությունների բացահայտումն ընդգրկում է հետևյալ փուլերը՝

- դիտարկում,
- կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտում (մանկավարժահոգեբանական հետազոտման միջոցով),
- կարողությունների գնահատում, անհատականացված պլանավորում:

Առաջին փուլի նպատակն է դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դիտարկումը և հայտնաբերումը: Երեխայի խնդիրը կարող է հայտնաբերել ծնողը, մանկաբույժը կամ երեխայի հետ աշխատող մանկավարժը: Այս փուլում որոշակի ժամանակահատվածում անհրաժեշտ է իրականացնել սովորողի դիտարկումն ուսումնական և արտաուսումնական գործընթացներում: Սովորողի՝ դասապրոցեսում և դրանից դուրս դիտարկման համար անհրաժեշտ է կիրառել որոշակի հնարներ, որոնց միջոցով կբացահայտվեն սովորողի ուսումնական դժվարությունները պայմանավորող խնդիրները (այդ թվում՝ միջավայրային), և կպլանավորվեն դրանց հաղթահարման ընդհանուր մարտավարությունները դպրոցի շրջանակում:

Երկրորդ փուլն ուղղված է որոշելու սովորողի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը և մանկավարժահոգեբանական աջակցության ծավալները:

Երրորդ փուլ՝ գնահատման այս փուլում անհրաժեշտ է բացահայտել երեխայի կրթական ներուժը, որի հիման վրա ուսուցիչները, դպրոցի աջակցող թիմի օժանդակությամբ, կազմում են անհատական ուսուցման պլանը:

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երեխայի նախնական գնահատումը նախկինում իրականացվում էր բժշկական մոտեցման հիման վրա, և հիմնական շեշտը դրվում էր երեխայի սահմանափակումների և անկարողությունների վրա: Իրավիճակն այսօր բոլորովին այլ է: Այժմ գնահատման թիրախ է հանդիսանում երեխայի ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային գործոնների փոխազդեցությունը, որի հետևանքով սովորողն ունենում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Ավելին, այսօր գնահատումը բացահայտում ոչ միայն կարիքը, այլև

սովորողի ուսումնառության ներուժը՝ կենտրոնանալով երեխայի կարողությունների, ուժեղ կողմերի վրա: Այսպիսով, գնահատման արդյունքում երեխայի մոտ բացահայտված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի և երեխայի կարողությունների հաշվառմամբ պլանավորվում է նրա կրթությունը:

Նախնական դիտարկումն ու գնահատումը իրականացնում է երեխայի հետ աշխատող ուսուցչի (ուսուցիչների) և դպրոցի հատուկ մասնագետների թիմը:

Նախնական դիտարկման և գնահատման փուլում կարևոր է երեխայի ծնողի մասնակցությունը և նրա տրամադրած տեղեկատվությունը, քանի որ երեխայի մասին համակողմանի տեղեկացված անձը հենց ծնողն է: Այս փուլում շատ կարևոր է գրույցի միջոցով համակարգված տեղեկատվություն ստանալ ծնողից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Սովորողի ամբողջական գնահատման արդյունքում պետք է հավաքվի որոշակի թղթաբանություն: Ձեռք բերված բոլոր տեղեկությունները անհրաժեշտ է գրանցել և ստեղծել գնահատման անհատական թղթապանակներ՝ յուրաքանչյուր աշակերտի համար: Անհատական թղթապանակներում անհրաժեշտ է հավաքել գնահատման արդյունքում ձեռք բերված հետևյալ փաստաթղթերը՝

- ուսուցչի դիտարկման և գնահատման արձանագրություն,
- ծնողի կողմից լրացվող երեխայի մասին տեղեկատվական հարցաթերթ,
- դպրոցի հատուկ մասնագիտական թիմի անդամների (հատուկ մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, սոցիալական մանկավարժ) դիտարկումների, ուսումնասիրությունների արձանագրություն,
- սովորողի ինքնագնահատման արձանագրություն,
- շարունակական գնահատման արձանագրություն:

Գնահատման արդյունքները պետք է քննարկվեն սովորողի հետ առնչվող բոլոր անձանց հետ: Յուրաքանչյուր մասնագետ պետք է կիսվի գնահատման վերաբերյալ իր տեղեկատվությամբ, ծնողն անպայման պետք է մասնակցի այդ հանդիպմանը և տեղեկանա գնահատման արդյունքներին ու հետագա անելիքներին: Գնահատում իրականացնող անձինք պետք է ապահովեն գնահատման տեղեկությունների գաղտնիությունը: Այն պետք է հասանելի լինի միայն հատուկ մասնագիտական թիմի անդամներին, դասավանդող ուսուցիչներին, աշակերտի ծնողներին, դպրոցի տնօրինությանը և համապատասխան պետական լիազոր մարմիններին:

Վարժություն 2.8 *Որն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ուեցող երեխայի օրինակով պատասխանեք ստորև տրված հարցերին՝ բնութագրելով այդ երեխայի կրթական ներուժը:*

Բաշխման նյութ 2.3 Գնահատման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել՝

- ո՞վ է սովորողը,
- ի՞նչ հետաքրքրություններ ունի,
- որո՞նք են սովորողի ուժեղ կողմերը,
- ո՞րն է նրա զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքների առկա մակարդակը,
- որո՞նք են սովորողի ամենամեծ դժվարություններն ու կարիքները,
- որո՞նք այն միջավայրային խոչընդոտները, որ խանգարում են սովորողի ուսումնառությանը:
- ովքե՞ր են սովորողի ընկերները,
- ո՞վ և ի՞նչ դեր ունի սովորողի կենսագործունեության ասպարեզում,
- ի՞նչ է անհրաժեշտ սովորողին դասարանում, տանը, շրջապատում՝ հետագա զարգացման և անկախ լինելու համար:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Նախնական դիտարկումն ու գնահատումը կազմակերպվում են երեխայի բնականոն գործունեության միջավայրում՝ դպրոցում՝ դասապրոցեսի, խաղի, ազատ գործունեության ընթացքում, ընտանիքում: Դիտարկումը անցկացվում է գործունեության բոլոր ձևերում՝ ուսումնական, խաղային, աշխատանքային և այլն:

Այս մեթոդը հնարավորություն է տալիս բացահայտելու սովորողի դժվարությունները և միջավայրային գործոնների ազդեցությունը սովորողի ուսումնառության վրա: Ստացված տեղեկությունները հիմք են հանդիսանում հետագա ավելի մանրամասն ուսումնասիրության համար:

Դիտարկողը (ուսուցիչը, հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, ուսուցչի օգնականը) պետք է պահպանի հետևյալ կանոնները՝

- լինի անաչառ, անկողմնակալ,
- նստի դասարանի վերջում կամ խաղասենյակի մի անկյունում,
- չխոսի, չմիջամտի դասապրոցեսին կամ երեխայի ինքնուրույն խաղին,
- բացահայտի այն ոլորտները, որոնք անհատական մոտեցման կարիք ունեն,
- կատարի գրառումներ:

Դիտարկման աշխատանքները պետք է նախօրոք պլանավորված և նպատակաուղղված լինեն (ի՞նչ և ինչի՞ համար ենք դիտարկում):

Սովորողի բնական պահվածքն ապահովելու և դիտարկման ճշգրիտ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է, որ նա չզգա, որ իրեն դիտարկում են:

Դիտարկման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել՝

- սովորողի ակտիվությանն ու մասնակցությանը դասապրոցեսին,
- դասի կանոնին ենթարկվելը,
- ուսուցչի հրահանգները, հանձնարարությունները ըմբռնելուն և կատարելուն,
- դանդաղ կամ արագ աշխատելու տեմպին,
- ուշադրության կենտրոնացմանը,
- խմբում աշխատելու, սովորողների հետ շփվելու, հաղորդակցվելու կարողությանը, սովորողի վարքին:

Առաջընթացի մասին վերլուծություններ կատարելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար դիտարկել սովորողին՝ գործընթացի տարբեր փուլերում: Դիտարկման համար անհրաժեշտ է կազմել դիտարկման քարտ, որը հնարավորություն կտա դիտարկման ընթացքում ուշադրություն դարձնելու սովորողի ուսումնական ունակությունները բացահայտող կարևոր գործընթացներին և միաժամանակ գրառումներ կատարելու:

Դիտարկման գործընթացի առավելությունն այն է, որ անցկացման համար չեն պահանջվում հատուկ պայմաններ, երեխան լրացուցիչ չի ծանրաբեռնվում: Դիտարկման գործընթացն ընդհանրապես սուբյեկտիվ է և պայմանավորված է անցկացնողի մասնագիտական հմտության մակարդակով: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է կատարել օբյեկտիվ դիտարկում՝ բացառելով ուսուցչի դրական կամ բացասական վերաբերմունքը երեխայի նկատմամբ:

Դիտարկումն ավելի ամբողջական է դառնում, երբ համադրվում են մանկավարժի, հատուկ մանկավարժի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների, ինչպես նաև՝ երեխայի ծնողների դիտարկման արդյունքները, որոնց արդյունքում ի հայտ եկած օրինաչափությունները հնարավորություն են տալիս ավելի ստույգ և արդյունավետ եզրահանգումներ կատարելու:

Վարժություն 2.9 Կարդացեք Բաշխման նյութ 2.4-ի դեպքերի նկարագրությունը և լրացրեք աղյուսակը:

Բաշխման նյութ 2.4 Դեպքի նկարագրություն և ուսումնասիրություն

Դեպք 1: Արևիկը 6,5 տարեկան է: Սովորում է առաջին դասարանում: Առարկաները, պատկերները, տառերն ավելի լավ է մտապահում ցուցադրելիս, շատ է սիրում ծեփել, նկարել, ինչպես նաև՝ յուրովի և պատկերավոր նկարագրում է շրջապատում հանդիպող երևույթները, առարկաները: Նա ամբողջ դասի ընթացքում խաղում է պայուսակի իրերով, շրջվում, վերցնում ընկերների գիրքը, տետրը, անընդհատ կանգնում է, քայլում դասարանում: Չի կատարում ուսուցչուհու հրահանգները, իսկ ստիպելու դեպքում ավելի կամակոր է դառնում: Ծնողի ներկայացնելով՝ տնային աշխատանքները կատարում է մեծ դժվարությամբ, երկար ժամանակ ու

ջանքեր են պահանջվում: Նա հետ է մնում ուսումնական ծրագրից և ունի անհատական ուսուցման պլան: Անհատական պարապմունքների ժամանակ երեխան իրեն ավելի լավ է դրսևորում, ենթարկվում է և գրեթե միշտ կատարում հրահանգները, տրված առաջադրանքները: Արևիկն ունի գրելու դժվարություններ, բայց լավ է զարգացած ձեռքի մանր մոտորիկան: Դժվարանում է մաթեմատիկայից, ունի հաղորդակցման խնդիրներ:

Դեպքի վերլուծության աղյուսակ

Երեխայի ուժեղ կողմերը	Ուսուցչի դժվարությունները	Երեխայի առանձնահատկություններից ելնելով ի՞նչ հարմարեցումներ կարելի է ստեղծել	Խորհուրդներ ուսուցչին՝ դժվարությունները հաղթահարելու համար	Տվյալ խորհրդով թիմի ո՛ր անդամը կարող է աջակցել

Դեպք 2: Արմանը 10 տարեկան է: Սովորում է չորրորդ դասարանում: Կարողանում է հեշտությամբ վերարտադրել լսած նյութը: Արմանը տառաճանաչ է, ունի լավ զարգացած բանավոր խոսք: Շփվող է և ազատ հաղորդակցվում է ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծերի հետ: Սիրում է ընդօրինակել մեծի խոսքը: Ունի տեղաշարժվելու դժվարություններ՝ քայլում է օգնությամբ: Դժվարանում է գրելիս և կարդալիս, տարածության մեջ կողմնորոշվելու և մանր մոտորիկայի մեջ: Թվերի հետ գործողությունները կատարում է դժվարությամբ: Կատարում է պարզ թվաբանական գործողություններ մինչև 20-ի սահմաններում: Դասերին առաջադրանքի կատարման ժամանակ շեղվում է, դժվար է ներգրավվում դասարանական աշխատանքներին և չի մասնակցում դասապրոցեսին: Հետ է մնում ուսումնական ծրագրից:

Դեպքի վերլուծության աղյուսակ

Երեխայի ուժեղ կողմերը	Ուսուցչի դժվարությունները	Երեխայի առանձնահատկություններից ելնելով ի՞նչ հարմարեցումներ կարելի է ստեղծել	Խորհուրդներ ուսուցչին՝ դժվարությունները հաղթահարելու համար	Տվյալ խորհրդով թիմի ո՛ր անդամը կարող է աջակցել

Վարժություն 2.10

Հանձնարարել լսարանին ուսումնասիրել բաշխման նյութ 2.3-ը, և կազմակերպել քննարկում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հետ կապված խոչընդոտների և նպաստավոր գործոնների վերաբերյալ.

Նպաստավոր գործոններ	Խոչընդոտներ
---------------------	-------------

Բաշխման նյութ 2.5 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

(I-VI բաժիններ)

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:
2. Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության իրականացման նպատակով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ սովորողի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները (այսուհետ՝ ծառայություններ) տրամադրվում են երեք մակարդակում.

- 1) դպրոցական մակարդակ.
- 2) տարածքային մակարդակ.
- 3) հանրապետական մակարդակ:

II. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը դպրոցական մակարդակում

3. Դպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրվում են այն սովորողներին, ովքեր սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:
4. Տվյալ մակարդակում ծառայությունները տրամադրվում են հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի միջոցով (այսուհետ՝ աջակցության խումբ),
5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը և տրամադրման գրաֆիկը մշակում է հաստատության աջակցության խումբը, հաստատվում է տնօրենի կողմից:
6. Ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման համար պատասխանատվությունը կրում է հաստատությունը՝ ի դեմս դպրոցի տնօրինության և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի:
7. Աջակցության խմբի կազմում ընդգրկվում են հաստատության ուսուցչի օգնականը(ները), հատուկ մանկավարժը(ները), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը: Եթե հաստատությունում չկան նշված մասնագետները, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային կենտրոնից: Դպրոցական մակարդակում աջակցության խումբը, սերտ համագործակցելով ուսուցիչների և սովորողի ծնողների հետ, իրականացնում է դպրոցական մակարդակում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն ու կրթության արդյունավետ կազմակերպումը:
8. Հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո.
 - 1) առավելագույնը 15-օրյա ժամկետում, աջակցության խումբը ծնողի մասնակցությամբ, մշակում է սովորողի Անհատական ուսուցման պլան (այսուհետ՝ ԱՈԻՊ) (Ձև 5): ԱՈԻՊ-ում ներառված աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները որոշվում են սովորողի դպրոցական կամ տարածքային մակարդակների Գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա (Աղյուսակ),

- 2) սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակացույցը հաստատում է տնօրենը և պատճենը տրամադրում սովորողի ծնողին:
9. Աջակցող ծառայությունները սովորողին տրամադրվում են դասերից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:
10. Աջակցության խումբը դասաժամերի ընթացքում անցկացնում է դիտարկումներ (առնվազն 3 դասաժամ մեկ օրվա ընթացքում), կատարում է ուսումնական նյութերի հարմարեցումներ, մշակում է հաջորդ օրվա դասի պլանների վերաբերյալ առաջարկություններ՝ կապված մանկավարժական մեթոդների և առաջադրանքների հետ, իրականացնում է սովորողի ԱՌԻՊ-ով նախատեսված աջակցության ծառայությունների տրամադրման այլ աշխատանքներ:
11. Յուրաքանչյուր օրվա ավարտին աջակցության խումբը ԱՌԻՊ-ի համապատասխան բաժիններում գրառում է իրականացված աշխատանքները:
12. Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է տվյալ սովորողի ուսուցիչների և աջակցության խմբի անդամների ժողով՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում սովորողի ԱՌԻՊ-ով նախատեսված աշխատանքների, այդ թվում՝ աջակցող ծառայությունների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում ժողովին կարող են հրավիրվել սովորողի ծնողն ու Տարածքային կենտրոնի մասնագետները:
13. Սովորողի ԱՌԻՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է կիսամյակի ավարտին՝ նկարագրական տեսքով, որը սովորողի առաջադիմության թերթիկի հետ միասին տրամադրվում է ծնողին:
14. Սովորողի կրթական առաջընթացի ընթացիկ գնահատումը կատարվում է ԱՌԻՊ-ով սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան:
15. Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, վերանայվում են ԱՌԻՊ-ով սահմանված խնդիրները և գործողությունները, ինչպես նաև աշխատանքների ծավալները:

III. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը տարածքային մակարդակում

16. Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնի (այսուհետ՝ Տարածքային կենտրոն) կողմից՝ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրինության կամ երեխայի ծնողի /նրա օրինական ներկայացուցչի/ դիմումի հիման վրա: Դիմումը ստանալու օրվանից հետո, առավելագույնը 5-օրյա ժամկետում, Տարածքային

կենտրոնի մասնագետները այցելում են դպրոց և աջակցություն են ցուցաբերում դպրոցի աջակցության խմբին՝ մշակելու սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունները: Դպրոց չհաճախող երեխայի դեպքում /մանկապարտեզահասակ/ աջակցությունը կազմակերպվում է Տարածքային կենտրոնում: Սովորողի ԱՌԻՊ-ի հաստատումից հետո, 10-օրյա ժամկետում, Տարածքային կենտրոնի և դպրոցի տնօրենները համատեղ ստորագրում և վավերացնում են Տարածքային կենտրոնի կողմից դպրոցին (սովորող, ուսուցիչ, ծնող) տրամադրվող ծառայությունների ծավալը, ժամանակացույցը և Տարածքային կենտրոնի մասնագետների՝ դպրոց հաճախելու գրաֆիկը: Ընդ որում, ժամանակացույցը կազմելիս դրանում պետք է նախատեսել մասնագետների այցելություն դպրոց՝ առնվազն շաբաթը մեկ անգամ: Ժամանակացույցը կցվում է ԱՌԻՊ-ին:

17. Եթե սովորողին տրամադրվող ծառայությունը պահանջում է համապատասխան հարմարեցված տարածք, սարքավորումներ և գույք, ապա Տարածքային կենտրոնը կարող է, ծնողի համաձայնությամբ, ԱՌԻՊ-ով նախատեսված աջակցող ծառայությունները սովորողին տրամադրել կենտրոնում:
18. Տարածքային կենտրոնում ծառայությունների տրամադրումը երեխային իրականացվում է անվճար, Տարածքային կենտրոնի միջոցներով, դասերից հետո, ըստ նախատեսված տևողության և ծավալի:
19. Յուրաքանչյուր օրվա ավարտին Տարածքային կենտրոնի աջակցության ծառայություններ տրամադրող աշխատակիցները ԱՌԻՊ-ի համապատասխան բաժիններում գրառում են իրականացված աշխատանքները:
20. Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը, ամիսը մեկ անգամ, հրավիրում է տվյալ երեխային ծառայություն տրամադրող մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետների խմբին՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում ԱՌԻՊ-ով նախատեսված աշխատանքների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում ժողովին կարող են հրավիրվել երեխայի ծնողը, դպրոցի աջակցության խմբի ներկայացուցիչները: Ընդ որում, ամսական այս ժողովները նպատակահարմար է իրականացնել սովորողի դպրոցում:
21. Տարածքային կենտրոնը սովորողի կրթության կազմակերպման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն է տրամադրում սովորողի ծնողին, դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի անդամներին և ուսուցիչներին՝ ապահովելով ծնողի, մասնագետների և ուսուցիչների միջև մշտական կապ՝ փոխադարձ այցելությունների, հեռահաղորդակցության, առցանց խորհրդատվության տեսքով:
22. Երեխաների մասին թե՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, թե՛ ծառայությունների տրամադրման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը Տարածքային կենտրոնի համապատասխան աշխատակիցը մուտքագրում է Հանրապետական

կենտրոնի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազա:

IV. Մանկավարժական և հոգեբանական ծառայությունների տրամադրումը հանրապետական մակարդակում

23. Հանրապետական մակարդակում ծառայությունները տրամադրվում են հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից (այսուհետ՝ Հանրապետական կենտրոն):

V. Երեխայի անհատական թղթապանակը

24. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար, նախքան աջակցության ծառայություն տրամադրելը, կազմվում է անհատական գործի թղթապանակ (այսուհետ Անհատական թղթապանակ), որը ներառում է՝ երեխայի դպրոցական և կամ տարածքային մակարդակների Գնահատման արդյունքերի արձանագրությունը, ԱՌԻՊ-ը, երեխային տրամադրվող ծառայությունների ժամանակացույցը, երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրած և արձանագրած ցանկացած տեղեկատվություն և դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկար, տեսանյութեր, երեխայի աշխատանքներ և այլն):

25. Երեխայի Անհատական թղթապանակի պատասխանատուները համապատասխանաբար հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով և Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալներն են:

26. Երեխայի Անհատական թղթապանակի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց ծնողի համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

VI. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում

27. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն (այսուհետ՝ Գնահատում) իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

- 1) երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
- 2) ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

28. Երեխայի գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ, ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ նկատվում են կայուն դժվարություններ:
29. Գնահատումն իրականացվում է երկու փուլով.
 - 1) դպրոցական մակարդակի գնահատում,
 - 2) տարածքային մակարդակի գնահատում:
30. Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում:
31. Գնահատումը մասնակցային գործընթաց է, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը, աջակցության խումբը, երեխայի ուսուցիչները:
32. Գնահատումն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում:
33. Դպրոցական մակարդակի գնահատման ընթացքում հաստատության աջակցության խմբի կողմից բացահայտվում են երեխայի զարգացման հնարավորությունները, ինչպես նաև միջավայրային խթանիչ կամ խոչընդոտող գործոնները, որոնք ազդեցություն են ունենում նրա՝ ուսումնառության գործընթացին արդյունավետ մասնակցությանը:
34. Եթե կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսումնառության գործընթացում, ապա ուսուցիչը, համաձայնեցնելով երեխայի ծնողի հետ (Ձև 1), գրավոր դիմում է դպրոցի տնօրենին՝ իրականացնելու երեխայի դպրոցական մակարդակի գնահատում:
35. Գնահատումը սկսելուց առնվազն մեկ շաբաթ առաջ դպրոցի տնօրինությունը գրավոր տեղեկացնում է երեխայի ծնողին դպրոցական մակարդակի գնահատման նպատակների մասին: Ծնողի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում, տնօրենի հրամանով հանձնարարվում է աջակցության խմբին իրականացնել երեխայի դպրոցական մակարդակի գնահատում:
36. Գնահատման փուլը, որը ներառում է երեխայի ծնողի, ուսուցիչների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների դիտարկման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն, տևում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից սկսած:

37. Եթե երեխայի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի վկայում երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա աջակցության խումբը մշակում է առաջարկությունների ցանկ՝ ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (դասավանդման մեթոդներ, տեղի և դասասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):
38. Եթե երեխայի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի որևէ ֆունկցիայի խանգարման հավանականության մասին, ապա հաստատությունը, ծնողի համաձայնությամբ (2և 2), դիմում է Տարածքային կենտրոն՝ իրականացնելու տարածքային մակարդակի գնահատում:
39. Երեխային տարածքային մակարդակի գնահատման ներկայացնելու համար դպրոցի տնօրինությունը կազմում է հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝
- 1) Ծնողի գրավոր համաձայնությունը.
 - 2) դպրոցի կողմից իրականացված գնահատման արդյունքները և վերլուծությունը.
 - 3) այլ փաստաթղթեր, եթե դպրոցը կարծում է, որ օգտակար տեղեկատվություն է տալիս երեխայի մասին:
40. Երեխայի տարածքային մակարդակի գնահատումն իրականացվում է Տարածքային կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:
41. Հաստատության տնօրինության կողմից դիմումը (2և 3) և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ստանալուց հետո, Տարածքային կենտրոնը նշանակում է երեխայի տարածքային մակարդակի Գնահատումը սկսելու օրը՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում, որի մասին տեղեկացնում է դպրոցի տնօրինությանը:
42. Տարածքային մակարդակի գնահատում կարող է իրականացվել նաև անմիջականորեն ծնողի դիմումի հիման վրա:
43. Տարածքային կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում է ուսումնական հաստատությունում տվյալ երեխայի տարածքային մակարդակի գնահատումն իրականացնող մանկավարժական աշխատողների խումբ, որը ներառում է Տարածքային կենտրոնի առնվազն 3 մասնագետ՝ հատուկ մանկավարժ, հոգեբան և սոցիալական մանկավարժ: Տարածքային մակարդակի գնահատմանը մասնակցում են նաև երեխայի ուսումնական հաստատության աջակցության խումբը, երեխայի ուսուցիչները, երեխան և իր ծնողը (կամ օրինական ներկայացուցիչը):
44. Տարածքային կենտրոնի կողմից երեխայի տարածքային մակարդակի գնահատման գործընթացը համակարգում է Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը:
45. Տարածքային մակարդակի գնահատումը տևում է նվազագույնը մեկ շաբաթ:
46. Տարածքային մակարդակի գնահատումն իրականացնելուց հետո՝ առնվազն 5-օրյա ժամկետում, գնահատումն իրականացրած Տարածքային կենտրոնի մասնագետները,

հաստատության աջակցություն խմբի հետ միասին, կազմում են երեխայի տարածքային մակարդակի Գնահատման արձանագրությունը (Ձև 4) և գնահատման եզրակացությունը ու ներկայացնում Տարածքային կենտրոնի տնօրենի հաստատմանը:

47. Տարածքային կենտրոնի տնօրենի կողմից հաստատված երեխայի տարածքային մակարդակի գնահատման արձանագրության և գնահատման եզրակացության մեկ օրինակը պահվում է Տարածքային կենտրոնում, իսկ մեկը տրվում է երեխայի ծնողին:
48. Համաձայնության դեպքում ծնողը, Ձև 4-ին համապատասխան, գնահատման արձանագրությունն ու գնահատման եզրակացությունը ներկայացնում է իր երեխայի կրթության վայր հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենին:
49. Երեխայի տարածքային մակարդակի գնահատման արձանագրությունն ու գնահատման եզրակացությունը ծնողի կողմից ստանալուց հետո, առավելագույնը 5-օրյա ժամկետում, ուսումնական հաստատության տնօրենը դիմում է տարածքային կառավարման պետական մարմին՝ վկայագրելու երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:
50. Ծնողի կողմից տարածքային մակարդակի գնահատման արդյունքները կարող են բողոքարկվել Հանրապետական կենտրոն: Բողոքները քննարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Վարժություն 2.11

3-2-1 մեթոդը՝ 3 բան, որը հիշեցի, 2-ը՝ սովորեցի և 1-ը՝ կկիրառեմ:

3	2	1

Ակտիվացնող վարժություն 2.12

Խմբի անդամներից յուրաքանչյուրին տրվում է մեկական անձեռոցիկ: Խմբավարը տարբեր հանձնարարություններ է տալիս. «...անձեռոցիկը ծալեք, կտրեք անձեռոցիկի ներքևի ձախ անկյունը, կրկին ծալեք, կտրեք անձեռոցիկի վերին աջ անկյունը...», այսպես շարունակ: Վարժության վերջում բոլոր մասնակիցները ցույց են տալիս իրենց անձեռոցիկները, և պարզվում է, որ ստացվել են տարբեր կտրվածքներով պատկերներ:

Մտազրոհ
 Լրացնել պատասխանները՝ լրացնել յուրաքանչյուրի կարծիքը:

Ի՞նչ եք հասկանում «ուսուցանող գնահատում» ասելով:

Ի՞նչ գիտեք ուսուցանող գնահատման մասին:

Կարող եմ, կարող եմ օգնությամբ

Մասնակիցներին խնդրում ենք թուղթը 2 մասի բաժանել և առաջին մասում գրել այն գործողությունները, որոնք ինքը կարողանում է կատարել ինքնուրույն և շատ լավ: Մյուս բաժնում պետք է գրի գործողություններ, որոնք կարողանում է կատարել, սակայն միայն օգնությամբ: Դրանք կարող են լինել թե՛ անձնական, թե՛ մասնագիտական գործողություններ:

Կարող եմ ինքնուրույն	Կարող եմ օգնությամբ

Բաշխման նյութ 2.6

Զարգացման մոտակա գոտի

Լ. Ս. Վիգոտսկին զարգացման մոտակա գոտու մասին տեսության մեջ նշում է, որ միայն այն դեպքում, երբ ուսուցումը մեկ քայլ առաջ է երեխայի զարգացման ներկա մակարդակից, այն կարող է զարգացնող լինել: Ինչպե՞ս է այս տեսակետն առնչվում ինքնուրույնության հետ: Վիգոտսկին ասում է, որ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում կա գործողությունների շրջանակ, որ նա կարողանում է ինքնուրույն կատարել: Այս շրջանակից դուրս կա գործողությունների ևս մի շրջանակ, որտեղ երեխան կարողանում է գործողություններ կատարել միայն մեծահասակի օգնությամբ, իսկ դրանից դուրս այն բոլոր գործողություններն են, որոնք երեխան առհասարակ չի կարողանում կատարել այս տարիքում: Եթե ուսուցիչը ճիշտ է գնահատում երեխայի զարգացման մոտակա գոտին և ուսուցումը կազմակերպում է այդ գոտու սահմաններում, ապա այդ ուսուցումը կարող է զարգացում ապահովել: Այն դեպքում, երբ դասավանդողը երեխային իր մոտակա զարգացման գոտուց դուրս հանձնարարություններ է տալիս, դա կասեցնում է երեխայի զարգացումը:

Մ. Մոնթեսորիի կարծիքով՝ երեխային պետք է անընդհատ սովորեցնել, թե նա ինչպես պետք է ցանկացած գործողություն կարողանա ինքնուրույն կատարել: Նրա խոսքով՝ **կարգապահությունը** ազատության մեջ է, և կարգապահությունը ևս պետք է լինի ակտիվ ու գործուն: Երբ երեխային սովորեցնում ենք շարժվել, գործել, մտածել, մենք երեխային պատրաստում ենք կյանքին, երբ սովորեցնում ենք ինչպես անշարժ նստել և լսել ուսուցչին, մենք երեխային պատրաստում ենք դպրոցին: Մարդը չի կարող ազատ լինել, եթե ինքնուրույն չէ:

Բաշխման նյութ 2.7

Ինչպե՞ս է գնահատվում ուսումնառությունը ուսումնական ծրագրում

Շատ կարևոր է հիշել, որ աշակերտը դպրոցում գտնվում է սովորելու համար: Այսինքն՝ ուսուցանող փուլի ցանկացած և բոլոր տեսակի գնահատումներն արժեք ունեն միայն այն դեպքում, երբ աջակցում են ուսումնառությանը:


Ուսուցիչը կատարում է բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնառության գործընթացի կազմակերպչի դերը: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար մշակված մեթոդներն իրականում շատ արդյունավետ են բոլոր աշակերտների համար:

Ուսուցանող գնահատում

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերբարձրումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է, որի միջոցով հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Յուրաքանչյուր սովորող կարող է և պետք է առաջ գնա:

Ուսուցանող գնահատման մեկ շրջափուլ



Տարբերվելով ուսումնառության արդյունքի մրցակցային գնահատումից՝ այն օգնում է ուղղորդելու աշակերտին դեպի դասընթացի ավարտին անցկացվելիք ամփոփիչ գնահատումը:

Մլայդ 12-13 «Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»:

Ալբերտ Էյնշտեյն

Ամփոփիչ գնահատում, սլայդ 14-15

Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի:

Ամփոփիչ գնահատման նպատակն է՝ ուսուցանված ուսումնական նյութի, թեմայի կամ գործնական աշխատանքի՝ սովորողի կողմից տիրապետման աստիճանը թվով կամ այլ նիշով արտահայտելը:

Միավորային գնահատումն ունի մրցակցային բնույթ ու դրանով իսկ նրա դերը դառնում է չափազանց կարևոր: Աշակերտի ուսումնական ձեռքբերումներին միավոր վերագրելը պիտի լինի ճիշտ և արդարացի: Քանի որ ուսուցիչը հիմնականում առաջնորդվում է հարաբերականության սկզբունքով, հետևաբար՝ այս դեպքում առավել կարևոր է դառնում արդարացիությունը: Դրված միավորի անարդարացիությունն ունենում է բազմակողմանի վատ հետևանքներ: Այն սովորողի մոտ նվազեցնում է սովորելու ձգտումը, դպրոցը դարձնում է անցանկալի վայր, որպես ձևավորվող քաղաքացի նա կորցնում է հավատն ուսուցչի ու հասարակական արդարության նկատմամբ և կարող է առաջացնել նաև այլ անկանխատեսելի վատ հետևանքներ: Անցանկալի իրավիճակից կարելի է խուսափել նիշային գնահատման հնարավորինս օբյեկտիվ ձևերի կիրառմամբ:

Մլայդ 16. Երբ խոհարարն է համտեսում կարկանդակը, նա նպատակ ունի գնահատելու որակը, և եթե կան թերություններ, ապա դրանք մինչև հաճախորդին մատուցելը պետք է վերացնի: Սա աշխատանքի նկատմամբ ուսուցանող գնահատման օրինակ է: Իսկ կարկանդակն ուտելուց հետո հաճախորդի տված գնահատականն ամփոփիչ է:

Մլայդ 17. Ամփոփիչ գնահատման տեսակները

Լայն իմաստով ամփոփիչ գնահատման տեսակներն են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: *Բաշխված նյութերի վրա աշխատելուց հետո ներկայացնում են ըստ խմբերի՝ քննարկելով և միմյանց փոխընդհանրելով:*

Մլայդ 18. Ընթացիկ ամփոփիչ գնահատման տեսակները

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար երաշխավորված են ստուգման հետևյալ **պարտադիր տեսակները՝**

1. բանավոր հարցում,

2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ աշխատանք,
4. կիսամյակային աշխատանք,
և Ոչ պարտադիր տեսակները՝

1. տնային աշխատանք,
2. կարճ ժամանակի համար նախատեսված թեստեր:

Ընդ որում՝ տնային աշխատանքի արդյունքը գրանցվում է որպես բանավոր հարցում, իսկ կարճ ժամանակի համար թեստը՝ որպես թեմատիկ աշխատանք: Ոչ պարտադիր տեսակների կիրառումը թողնվում է ուսուցչի հայեցողությանը, որը կարող է իրականացվել՝ ելնելով դրանց անհրաժեշտությունից:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը:

Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմելու սովորողի մասին: Դրանով բացահայտվում են սովորողի տարբեր կարողությունների և հմտությունների նրա տիրապետման աստիճանները: Այդ համապատկերում սովորողին պարզ են դառնում նրա գործունեության հաջողված և թերի կողմերը: Դա հնարավորություն է ընձեռում սեփական թերությունների վերացման, ինչպես նաև՝ ապագա մասնագիտական ճիշտ կողմնորոշման համար:

Խմբերից յուրաքանչյուրն ուսումնասիրում և ներկայացնում է մեկական տեսակ և անձնական փորձը: Կարելի է օգտագործել «Շրջագայություն պատկերասրահով» մեթոդը:

ՄՈԴՈՒԼ 3

Անհատական ուսուցման պլան (ԱՈԻՊ) և դասի պլանավորում

3-րդ մոդուլը ներկայացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը (ԱՈԻՊ) և դասի պլանավորման սկզբունքներն ու մոտեցումները: Այստեղ ներկայացված են այն առանցքային մոտեցումները, որոնք անհրաժեշտ են ԱՈԻՊ-ի լրացման աշխատանքներում: Մոդուլում հստակ սահմանվում են ուսուցչի, ուսուցչի օգնականի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, հատուկ մանկավարժի, ծնողի մասնակցությունը և դերը ԱՈԻՊ-ի լրացման գործընթացում: Կարևորվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուժեղ կողմերի և կարողությունների ճանաչումը և առարկայական չափորոշիչների հարմարեցումը սովորողի պահանջներին և կարիքներին: Միաժամանակ տրված են այդ երեխաներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավելու բովանդակային և մեթոդամանկավարժական մոտեցումները դասարանի ընդհանուր համատեքստում:

ՄՈԴՈՒԼ 3. Անհատական ուսուցման պլան (ԱՌԻՊ) և դասի պլանավորում

1.	Մոդուլի նպատակը	3-րդ մոդուլը ներկայացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանի լրացման առանցքային մոտեցումները: Մոդուլում հստակ սահմանված են ուսուցչի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի, հատուկ մանկավարժի, ծնողի մասնակցությունը և դերը ԱՌԻՊ-ի լրացման գործընթացում: Այստեղ կարևորվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուժեղ կողմերի և կարողությունների ճանաչումը և առարկայական չափորոշիչների հարմարեցումը սովորողի պահանջներին և կարիքներին:
2.	Տևողությունը	540 րոպե, որից 360 րոպեն՝ գործնական, 180 րոպեն՝ տեսական
3.	Դասընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ունենալ մանկավարժական և առարկայական կրթություն:
4.	Գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
5.	Վերապատրաստման արդյունք 1	Մասնագետը տիրապետում է ԱՌԻՊ-ի լրացման պահանջներին:
	Վերապատրաստման արդյունք 2	Մասնագետը տիրապետում է դասի պլանավորման չափորոշչային պահանջներին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մտավոր խնդիրներով երեխաների համար ուսուցման բովանդակության ընտրության, հարմարեցման և նպատակների, գործողությունների ու արդյունքների պլանավորման կարողություններին:
6.	Կատարման չափանիշները	Մասնագետը կկարողանա հարմարեցնել չափորոշչային պահանջները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառությանը՝ հիմնվելով սովորողի ուժեղ կողմերի վրա:
7.	Վերապատրաստման արդյունք 3	Մասնագետը գիտի՝ ովքեր են մանկավարժահոգեբանական աջակցման խմբի մասնագետները, ԱՌԻՊ-ի պատասխանատուները և մասնակիցները:

		Կարևորում է ուսուցչի և ծնողի դերը ԱՌԻՊ-ի լրացման գործընթացում:
8.	Կատարման չափանիշները	Մասնագետը կարող է հստակ նշել աջակցման խմբի անդամներից ուսուցչի, հատուկ մանկավարժի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականի հիմնական պաշտոնային պարտականությունները, սահմանել ԱՌԻՊ-ի կարճաժամկետ և վերջնական նպատակները:
9.	Վերապատրաստման արդյունք 4	Մասնագետը հստակ պատկերացնում է ԱՌԻՊ-ի կառուցվածքը և գիտի լրացման կանոնները:
10.	Կատարման չափանիշները	Դասընթացի ավարտին մասնագետը կարողանում է լրացնել «Անհատական ուսուցման պլան»՝ ըստ ներկայացված իրադրության:

Դաս 45 րոպե	Բովանդակությունը	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր և սլայդներ	Տևողություն
1	Անդրադարձ նախօրոք օրվան	Ազատ շարադրանք			5րոպե
	ԱՌԻՊ	Վարժություն 3.1 «Մտազրոհ» (ԱՌԻՊ)			5րոպե
	Պատասխանեք հետևյալ հարցերին	Վարժություն 3.2 Խմբային աշխատանք		<i>Բաշխման նյութ 3.1</i>	20րոպե
	ԱՌԻՊ-ի օրինակելի ձևի բաղադրիչները	Վարժություն 3.3 Քննարկում			15րոպե
2	ԱՌԻՊ-ի բնութագրումները և բովանդակությունը	Վարժություն 3.4 Զույգերով աշխատանք		<i>Բաշխման նյութ 3.2</i>	15րոպե
	«Դպրոցի տնօրեններ», «Դպրոցի ուսումնական աշխատանքների զծով տնօրենի տեղակալներ», «Ուսուցիչներ», «Մանկավար- ժահոգեբանական աջակցության թիմի հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող և այլն», «Ուսուցչի օգնականներ», «Աշակերտների ծնողներ», «Սովորողներ»	Վարժություն 3.5 Խմբային աշխատանք Խումբ 1,2,3,4,5,6,7		<i>Բաշխման նյութ 3.3</i>	30րոպե
3	ԱՌԻՊ-ի համագործակցային պլանավորման գործընթացի չորս փուլերը	Վարժություն 3.6 Խմբային աշխատանք Խումբ 1,2,3,4 «Խճանկար»		<i>Բաշխման նյութ 3.4</i>	45րոպե

4	ԱՈՒՊ-ի համագործակցային պլանավորման գործընթացի չորս փուլերը	Վարժություն 3.6 Խմբային աշխատանք Խումբ 1,2,3,4 «Խճանկար»		<i>Բաշխման նյութ 3.4</i>	45րոպե
5	ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ	Դասախոսություն		Սլայդ 1-17	45րոպե
6	ԱՈՒՊ	Դասախոսություն		Սլայդ 18-46	35րոպե
	Անդրադարձ	«Կյանքի գետը»			10րոպե

Դաս 45 րոպե	Բովանդակությունը	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր և սլայդներ	Տևողություն
1	Անդրադարձ նախօրոք օրերին			Սլայդ 1-10	10րոպե
	«Քառակուսիներ»	Ակտիվացնող վարժություն Վարժություն 3.7		Սլայդ 11	20րոպե
	Ուսուցչի անձնային և մասնագիտական որակները	Մտազրոհ Վարժություն 3.8		Սլայդ 12	15րոպե
2	ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂ: ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈՂՆԵՐ	Դասախոսություն		<i>Բաշխման նյութ 3.5</i> Սլայդ 13-16	15րոպե
	Մեթոդ	Վարժություն 3.9		<i>Բաշխման նյութ 3.6</i> Սլայդ 17-18	10րոպե

	Ամփոփում: Ուսուցման գործընթացի փուլերը	Դասախոսություն		Սլայդ 19	10րոպե
	ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	Դասախոսություն		Սլայդ 20	10րոպե
3	ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ	Խմբային աշխատանք Վարժություն 3.10		<i>Բաշխման նյութ 3.7</i> Սլայդ 21	45րոպե
4	ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ	Խմբային աշխատանք Վարժություն 3.10		<i>Բաշխման նյութ 3.7</i>	45րոպե
5	Դասի պլան	Խմբային աշխատանք Վարժություն 3.11			45րոպե
6	Դասընթացի ամփոփում	Հարց ու պատասխան		Սլայդ 22	20րոպե
	Դասընթացի թեստ ամփոփիչ	Թեստ			10րոպե
	Հետագա աշխատանքների պլանավորում	Քննարկում			15րոպե

Վարժություն 3.1 «Մտագրոհ» (ԱՌԻՊ)

Մասնակիցները թվարկում են, թե ինչ գիտեն ԱՌԻՊ-ի մասին:

Մտագրոհ կազմակերպելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջները.

- Բացառել ցանկացած քննադատություն, միայն այդ դեպքում մասնակիցները ազատ կարտահայտեն իրենց մտքերը:
- Շեշտը դնել միայն արտահայտվող մտքերի քանակի, ոչ թե որակի վրա: Մա պայմանավորված է հետևյալ տրամաբանությամբ. միտքը, որ այդ պահին կարող է թվալ ոչ տեղին կամ նույնիսկ անհեթեթ, կարող է նպաստել հետագայում ավելի հետաքրքիր ու գործնական մտքի ի հայտ գալուն: Կիրառվում է «Միտքը միտք է ծնում» սկզբունքը:
- Մասնակիցների ասածները պետք է գրանցել առանց խմբագրելու և վերաձևակերպելու, այլապես կխաթարվի մտագրոհը:

Վարժություն 3.2 Պատասխանեք հետևյալ հարցերին: Խմբային աշխատանք:

1. Ո՞ր սովորողների համար է անհրաժեշտ անհատականացված ծրագրերով ուսուցման կազմակերպումը: Ինչպե՞ս կարելի է այն իրականացնել:
2. Ինչո՞ւ է ԱՌԻՊ-ով սահմանվում սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):
3. Որ՞ն է անհատական ուսուցման պլանավորման գլխավոր նպատակը:

Բաշխման նյութ 3.1

Ի՞նչ է ԱՌԻՊ-ը

ԱՌԻՊ հապավումը նշանակում է անհատական ուսուցման պլան: Անհատական ուսուցման պլանը լրացվում է դպրոցի և մանկավարժահոգեբանական տարածքային կենտրոնի կողմից սահմանված կարգով գնահատված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար: Սովորողի համար անհատականացված ծրագրերով ուսուցման կազմակերպման վերաբերյալ որոշում է կայացնում դպրոցի մանկավարժական խորհուրդը՝ հիմք ընդունելով ԱՌԻՊ-ով տվյալ աշակերտի կրթությունը կազմակերպելու նրա ծնողի դիմումը և ուսուցիչների ու մանկավարժահոգեբանական աջակցության մասնագիտական խմբի համատեղ եզրակացությունը՝ հիմնված երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման բոլոր փուլերում հավաքված տեղեկատվության վերլուծության վրա: ԱՌԻՊ-ի մշակման հենքը կազմում է ԱՌԻՊ-ի վերաբերյալ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) տրված սահմանումը:

ԱՌԻՊ-ը գրավոր ուսումնական համագործակցային (թիմային) պլանավորում է, որը կառուցվում է աշակերտի կարիքներից, ուժեղ կողմերից և հետաքրքրություններից բխող՝ հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված ուսումնական բնագավառների համար, ըստ հանրակրթության աստիճանների, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների հենքի վրա:

Ուսումնական բնագավառները ներկայացնող առարկաների համար մշակված ծրագրերի բովանդակության հարմարեցումների հիման վրա էլ մշակվում է յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատականացված ծրագրային բաղադրիչների ուսուցման պլանավորումները՝ *յուրաքանչյուր առարկայի համար: Այս մշակումները հիմնված են հանրակրթական պետական կամ այլընտրանքային ծրագրերի (առարկայի դասավանդման դասարանի(ների) դասավանդման հաջորդականության և ծրագրային նյութերի ծավալների՝ ըստ դասարանների բաշխվածության հաշվառման վրա:*

Հանրակրթական պետական կամ այլընտրանքային առարկայական ծրագրերի հիման վրա սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա անհատականացված պլանավորումները (ԱՌԻՊ) կարող են տարբերվել «Հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված ստորն նշված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջներից և այդ բովանդակային նվազագույն պահանջները՝ ըստ բնագավառները ներկայացնող առարկաների ծրագրային նյութի ծավալներից: ԱՌԻՊ-ում հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը կարող են պարզեցվել և հարմարեցվել աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին:

«Հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված՝ ըստ հանրակրթության աստիճանների, կրթության բովանդակության նվազագույն պահանջները ուսուցչի համար բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման համար ելակետային դրույթներ են, որոնք ԱՌԻՊ կազմելիս կարող են դառնալ երեխայի կրթության կարճաժամկետ (1-2 շաբաթ) և երկարաժամկետ (մինչև 2 ամիս) բովանդակության և դրա իրականացման մանկավարժամեթոդական գործողությունների պլանավորման ելակետ:

ԱՌԻՊ-ը մշակվում է միայն այն աշակերտի համար, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների առանձնապես խիստ կարիք և առանց անհրաժեշտ ծրագրային պարզեցումների և հարմարեցումների չի կարող հասնել իր կրթության նպատակներին:

ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի համաձայն (ՀՕ-200-Ն)՝ *ԱՌԻՊ-ը «...հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը,*

խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները)»:

Այս նոր մոտեցումների արդյունքում, իրականում, ԱՌԻՊ-ի կարիք կունենան միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն աշակերտները, որոնց կողմից անհնարին է հասնել «հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների ապահովմանը: Նրանց համար այդ պահանջները պարզեցվում, հարմարեցվում են աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին համապատասխան: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ տվյալ աշակերտի համար ԱՌԻՊ-ով կրթությունը կազմակերպելու որոշումը կայացվի բոլոր կողմերի համաձայնությամբ՝ ծնող, աշակերտ, ուսուցիչ, մանկավարժահոգեբանական աջակցության խումբ, տնօրեն: Աշակերտը կարող է ունենալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, որը դեռևս բավարար հիմք չէ նրա կրթությունն ԱՌԻՊ-ով կազմակերպելու համար: Այս աշակերտների մեծ մասը համապատասխան առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման պարագայում կարող է բավարարել «հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները:

Վարժություն 3.3 Քննարկում: Տրված բաղադրիչների շուրջ ծավալել քննարկում՝ պարզաբանելով յուրաքանչյուրի կիրառման շրջանակը և միջոցները:

ԱՌԻՊ-ի օրինակելի ձևը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- աշակերտի անձնական տվյալները.
- աշակերտի մասին ընդհանուր ճանաչողական տեղեկատվություն, այդ թվում՝
 - ներառյալ այն ուսումնական բնագավառները, որտեղ դրսևորվում են նրա ուժեղ կողմերը.
 - աշակերտի մոտ առկա դժվարությունները.
 - ֆունկցիաների (ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ/մտավոր), շարժողական) կատարման մակարդակները՝ ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկություն.
 - առողջական վիճակի մասին բժշկական անհրաժեշտ տեղեկություն.
 - լրացուցիչ այլ տվյալներ, այդ թվում՝
- կրթության վերջնարդյունքները ըստ ուսումնական առարկայի հարմարեցված ծրագրի բովանդակային բաղադրիչների յուրացման վերջնարդյունքների.
- զարգացման ենթակա ուսումնական բնագավառները և թիրախային հմտությունները.
- աշակերտի տարեկան վերջնարդյունքները (նպատակները)՝ ըստ առարկայական ծրագրերի (այս նպատակներին պետք է հասնել տվյալ ուսումնական տարվա ընթացքում) յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուսուցանվող թեմայի

ավարտին: Նպատակների թիվը կարող է ավելի շատ լինել, քան նախատեսված են դասարանի մյուս աշակերտների համար, ում ուսուցումը ԱՌԻՊ-ով չի իրականացվում.

- կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումներ (խնդիրներ)՝ ըստ առարկայական ծրագրերի տարեկան վերջնարդյունքների:
- կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումների (խնդիրների) իրականացումն ըստ առարկայական ծրագրերի.
- անհատական թեմատիկ պլանավորումներ.
- դասավանդման ռազմավարություններ (տվյալ առարկայի նպատակադրման հետ կապված ծրագրի բովանդակության հարմարեցում, մեթոդների ընտրություն և այլն) և պատասխանատու(ներ).
- սահմանված նպատակադրումներին հասնելու կամ դրանց ուղղությամբ կատարված առաջընթացի գնահատում:
- առաջընթացի գնահատման թիրախային ժամկետներ.
- մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում (ըստ աշակերտի **մանկավարժահոգեբանական ծառայությունների անհատական պլանի (ՄԱՕԱՊ)**,
- կրթության առանձնահատուկ պայմաններ, հարմարեցումներ (բացի ուսումնական ծրագրի հարմարեցումից, այլ հարմարեցումներ և պայմաններ, որոնք պետք է հավելյալ տրամադրվեն ԱՌԻՊ-ի շրջանակներում),
- հաջորդ ուսումնական տարվա համար առաջարկներ կամ ըստ կրթության աստիճանների անցումային պլաններ՝ հիմնված ուսումնական տարեվերջյան ամփոփիչ գնահատման վրա.
- ԱՌԻՊ-ի տարեկան վերջնարդյունքների և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումների և իրականացման պլանի վերանայման ժամկետներ.
- ԱՌԻՊ-ի վերաբերյալ լրացուցիչ մեկնաբանություններ և դիտողություններ
- ԱՌԻՊ-ի մշակմանը մասնակցած խմբի անդամներ (դպրոցի ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներ, ծնող, իսկ հնարավորության դեպքում՝ նաև աշակերտ):

ԱՌԻՊ-ը մշակվում է մեկ ուսումնական տարվա համար: *Աշակերտի տարեկան վերջնարդյունքները և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումները ուսումնական տարվա ընթացքում ցանկացած ժամանակ կարող են անհրաժեշտ փոփոխությունների ենթարկվել: Դրանք կարող են ուսուցչի կողմից վերանայվել յուրաքանչյուր թեմայի դասավանդման գործընթացում:* Ելնելով ԱՌԻՊ-ում սահմանված՝ աշակերտի տարեկան վերջնարդյունքներից և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումներից՝ աշակերտի ցուցաբերած առաջադիմությունը պարբերաբար կգնահատվի ողջ տարվա

ընթացքում ամփոփիչ աշխատանքների միջոցով նույն հաճախականությամբ, ինչ նախատեսվում է առանց ԱՌԻՊ-ի սովորողների համար:

Վարժություն 3.4 Զույգերով աշխատանք:

Աղյուսակում տրված ԱՌԻՊ-ի բնութագրումներից որը համապատասխանում է ԱՌԻՊ-ի բովանդակությանը նշել «+», չհամապատասխանողները՝ «-» , իսկ վիճելի տարբերակները՝ «?» նշաններով:

Բաշխման նյութ 3.2

<p>Հատուկ կրթական վերականգնողական ծառայությունների պլանավորում տվյալ աշակերտի համար:</p>	<p>Տարեկան վերջնարդյունքների և ուսումնական տարվա ընթացքում աշակերտի ուսումնառության համար նախատեսված նպատակադրումների ամփոփ բնութագրեր՝ հիմնված ուսումնական առարկայի ծրագրի բովանդակության հարմարեցման վրա:</p>
<p>Գնահատման գրավոր պլան՝ աշակերտի տարեկան վերջնարդյունքներին և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումներին հասնելու միջոց:</p>	<p>Ուսումնառության վերջնարդյունքների և նպատակադրումների պլանավորման հիման վրա չի լրացվում ամբողջ դասարանի աշակերտների համար:</p>
<p>Փաստաթուղթ չէ մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման մասին:</p>	<p>Փաստաթուղթ ուսուցիչների համար՝ նախատեսված աշակերտի ուսումնական ձեռքբերումները մշտադիտարկելու և ներկայացնել ու համար:</p>
<p>Ամենօրյա մանկավարժահոգեբանական աջակցության պլանավորում չէ:</p>	<p>Աշակերտների, նրանց ծնողների հետ մշակվող և դպրոցի ուսուցիչների կողմից իրականացվող պլան:</p>
<p>Աշակերտների, ծնողների և դպրոցի ուսուցիչների ու մանկավարժահոգեբանական աջակցության խմբի մասնակցությամբ՝ համապարփակ ուսումնական համագործակցային պլանավորում:</p>	<p>Մեկ ուսուցիչ կողմից մշակված պլան չէ:</p>

Աշակերտի կրթության վերջնարդյունքների մասին ճկուն աշխատանքային փաստաթուղթ:	Սահմանափակված չէ չափորոշիչային նվազագույն պահանջներով:
Փաստաթուղթ, որը ենթակա չէ փոփոխությունների:	Պլանավորում, որը կարող է ընդգրկել սովորողի համար նպատակային հարմարեցումներ և փոփոխություններ մեկ միջավայրից մեկ այլ միջավայրի անցումներ:
Կախված չէ միայն ուսուցչի ջանքերից և դասարանային ռեսուրսներից:	Պլան, որը կարող է ընդգրկել տրամադրվող այլ մանկավարժահոգեբանական աջակցության ձևեր և եղանակներ:

Վարժություն 3.5 *Խմբային աշխատանք:*

Լսարանը բաժանվում է 7 խմբերի՝ «Դպրոցի տնօրեններ», «Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ», «Ուսուցիչներ», «Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող և այլն», «Ուսուցչի օգնականներ», «Աշակերտների ծնողներ», «Սովորողներ»: Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է Բաշխման նյութ 3.3-ում տրված ԱՌԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացում իր դերն ու պարտականությունները և ներկայացնում լսարանին:

Բաշխման նյութ 3.3

Դպրոցի տնօրենը

Սովորողի ԱՌԻՊ-ի կազմման համար առաջնային պատասխանատվությունը կրում է դպրոցի տնօրենը: ԱՌԻՊ-ի մասով դպրոցի տնօրենն ապահովում է՝

- ծնողի մասնակցությունը ԱՌԻՊ-ի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին.
- ծնողի ստորագրությամբ հաստատված համաձայնությունը՝ մշակված ԱՌԻՊ-ն իրականացնելու համար,
- աշակերտին տրամադրվող համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցությունների ծավալները, տևողությունն ու ժամանակահատվածը,
- աշակերտի ԱՌԻՊ-ի իրականացման համար անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության, հարմարեցված նյութերի և պարագաների տրամադրումը,
- ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների մասնակցությունը տարբեր դասընթացների և վերապատրաստումների՝ զարգացնելու և

ամրապնդելու նրանց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները՝ դպրոցում ներառական կրթական գործընթացը բարելավելու նպատակով,

- սովորողի ԱՌԻՊ-ի մշակման, իրականացման և գնահատման ողջ գործընթացը՝ նպատակաուղղված հասնելու նրա կրթության վերջնարդյունքներին՝ երկարաժամկետ նպատակներին:

Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը՝

Տնօրենի հետ միասին առաջնային պատասխանատվություն է կրում սովորողի ԱՌԻՊ-ի գործնական կիրարկման գործընթացներում՝ հանդիսանալով այդ բոլոր աշխատանքների և ԱՌԻՊ-ում ներգրավված բոլոր կողմերի միջև արդյունավետ և թիմային համագործակցության գլխավոր համակարգողը:

- մասնակցում է ԱՌԻՊ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին,

- համակարգում է ԱՌԻՊ-ի աշխատանքները՝ հստակ ներկայացնելով ԱՌԻՊ-ի խմբի յուրաքանչյուր անդամի դերը, պարտականությունն ու համագործակցությունը՝ ԱՌԻՊ-ի տարեկան նպատակների և խնդիրների իրականացման հարցերում,

- ապահովում է աշակերտի ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ գնահատման գործընթացի պատշաճ իրականացումը,

- ապահովում է, որպեսզի պատշաճ իրականացվեն ԱՌԻՊ-ով առաջարկված և դպրոցի տնօրենի կողմից հաստատված կրթության առանձնահատուկ պայմանների հարմարեցումների և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրումը սովորողին,

- ուսուցչի օգնականի կողմից ԱՌԻՊ-ի վարման պատասխանատվությամբ, իր տնօրինության տակ է պահում բոլոր ԱՌԻՊ-ները և ապահովում դրանցում տեղ գտած տեղեկատվության գաղտնիությունը՝ առանց ծնողի համաձայնության այն չտրամադրելով երրորդ անձի:

- Հրավիրում և անձամբ համակարգում է աշակերտի ԱՌԻՊ-ի իրականացման խմբի անդամների ամսական ժողովները:

Ուսուցիչը

Աշակերտի ԱՌԻՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվություն է կրում ուսուցիչը (դասվարը, առարկայական ուսուցիչները): Այս պատասխանատվությունը սկսվում է ԱՌԻՊ-ի մշակման փուլից և շարունակվում է ԱՌԻՊ-ի իրականացման և գնահատման փուլերում: Ուսուցիչը նաև հանդիսանում է տվյալ աշակերտի համար ԱՌԻՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարներից մեկը: ԱՌԻՊ-ի մշակման և իրականացման ընթացքում տվյալ ուսուցիչը.

- մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին տեղեկություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին,
- դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը,
- մասնակցում է աշակերտի տվյալ առարկայի տարեկան նպատակների և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների մշակմանը,
- պլանավորում և իրականացնում է աշակերտի ԱՌԻՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը,
- մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները,
- գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները,
- շարունակական կապ է պահպանում աշակերտի մյուս ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների և ծնողի հետ,
- առաջարկություններ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների և հարմարեցումների վերաբերյալ՝ մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին:

Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական աշխատողը

Մանկավարժահոգեբանական աջակցության խումբը աշխատում է ցանկացած աշակերտի հետ, ում մոտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմամբ պարզվել է այս կամ այն ֆունկցիայի որևէ աստիճանի խանգարում, որը դժվարացնում է, իսկ որոշ դեպքերում գրեթե անհնարին է դարձնում աշակերտի կողմից իր ԱՌԻՊ-ով սահմանված տարեկան վերջնարդյունքներին և նպատակադրումներին հասնելը՝ առանց լրացուցիչ հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության տրամադրման:

Մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամները՝

- սովորողների ԱՌԻՊ-ի մշակման, իրականացման ու գնահատման խմբի անդամ են,
- մշտական տեղեկատվություն են տրամադրում ուսուցիչներին և աշակերտի ծնողին՝ սովորողի ուժեղ կողմերի և դժվարությունների մասին,
- Մասնակցում են սովորողի մշտադիտարկման, ուսումնառության ընթացիկ, կիսամյակային ու տարեկան գնահատման գործընթացներին,
- պլանավորում և իրականացնում են հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության ծառայություններ՝ գրառումներ կատարելով ԱՌԻՊ-ի համապատասխան բաժիններում (կամ ՄԱԾԱՊ-ում),
- խորհրդատվություն և անմիջական օժանդակություն են տրամադրում ուսուցիչներին՝ «հանրակրթության պետական չափորոշիչով», առարկայական չափորոշիչներում ու

ծրագրերում սահմանված բովանդակային նվազագույն պահանջները ԱՌԻՊ-ում պարզեցնելու և աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին հարմարեցնելու աշխատանքներում.

- Խորհրդատվություն են տրամադրում ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին՝ կրթության համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանների և ծրագրային հարմարեցումների, հատուկ մանկավարժական ռազմավարությունների և մեթոդների, նյութերի և ռեսուրսների ընտրության վերաբերյալ,

- որպես ընտանիքի համար հատուկ մանկավարժական աջակցության խորհրդատվական կարևորագույն ռեսուրս՝ տնօրինության համաձայնությամբ և հանձնարարությամբ կարող են իրականացնել սովորողի կրթությանը խոչընդոտող՝ հոգեբանական, սոցիալական և անհրաժեշտ աջակցության ծառայություններ:

Ուսուցչի օգնականը (նույնպես մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամ) Ուսուցչի օգնականը, ԱՌԻՊ-ի մշակման և գործարկման ողջ ընթացքում, կապող օղակ է հանդիսանում է տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների, ծնողի և տվյալ աշակերտի միջև՝ փոխանակելով նրանց հետ ցանկացած տեղեկատվություն՝ կապված աշակերտի ուսումնական առաջընթացի և դեռևս առկա խնդիրների հետ: Ուսուցչի օգնականը ԱՌԻՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է և ուսուցիչներին կողմից սովորողի ԱՌԻՊ-ի պատշաճ լրացման աշխատանքների համակարգողը: Նա՝

- ուսուցչի ուղղորդմամբ աշակերտներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կապված ուսուցման գործընթացների և նոր հանձնարարությունների հետ,

- ուսուցիչների համաձայնությամբ ԱՌԻՊ-ի համապատասխան բաժնում պլանավորում է իր կողմից աշակերտին տրամադրվող աջակցությունները,

- տվյալ աշակերտի առարկայական ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին և ծնողին տեղեկատվություն է տրամադրում նախկինում կիրառված արդյունավետ կամ ոչ բավարար չափով արդյունավետ ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների մասին,

- օգնում է ուսուցիչներին դասի պլանավորման և ուսումնամեթոդական նյութերի պատրաստման ու տրամադրման հարցերում,

- մշտադիտարկում և ԱՌԻՊ-ի համապատասխան բաժիններում արձանագրում է ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների՝ խնդիրների ձեռքբերման ուղղությամբ աշակերտի արձանագրած հաջողություններն ու առաջընթացը, ինչպես նաև դեռևս առկա թերացումները,

- մշտապես մասնակցում է ԱՌԻՊ-ի վերաբերյալ խմբային ժողովներին, ինչպես նաև մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացներն:

Աշակերտի ծնողը

Ծնողը ԱՌԻՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Նրա ներգրավվածությունը պետք է սկսվի իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվի ԱՌԻՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում: Ծնողի մասնակցությամբ մշակվող ԱՌԻՊ-ը առավել իրատեսական է, քանի որ այն պլանավորելիս հաշվի են առնվում աշակերտի մասին ծնողի տրամադրած շատ կարևոր տեղեկություններ երեխայի առողջության, տանը և համայնքում երեխայի դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև ներառում են ծնողի կողմից սովորողի ուսուցման գործընթացի կամավոր հանձնառությունները:

ԱՌԻՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը:

Սովորողը

Սովորողն է կազմում ԱՌԻՊ-ի առանցքը և ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտրոնը, ուստի նրա հնարավոր մասնակցությունը ԱՌԻՊ-ի մշակման գործընթացներին շատ օգտակար կլինի արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ ունենալու համար: Աշակերտի ներգրավվածության բնույթն ու աստիճանը կարող են տարբեր լինել՝ կախված մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, հասկանալու և հաղորդակցվելու կարողությունը: Էական նշանակություն ունի նաև այն, որ ուսուցիչները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներն ու ծնողներն աշակերտին օգնեն հնարավորինս լավ հասկանալու իր ուսուցման պլանավորման նպատակադրումները: Հնարավորության դեպքում սովորողը կարող է՝

- մասնակցել ԱՌԻՊ-ի՝ որպես իր համար ամենանպատակահարմար ծրագիր կազմելու որոշմանը,
- մասնակցել (մասամբ կամ լիարժեքորեն) իր ԱՌԻՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին,
- ինքնագնահատման միջոցով բացահայտել և մատնանշել իր նախասիրությունները և ուժեղ կողմերը,
- մասնակցել իր կրթության երկարաժամկետ նպատակների և տարեկան վերջնարդյունքների՝ նպատակների սահմանմանը,
- մասնակցել իր ԱՌԻՊ-ի քննարկումներին՝ ներկայացնելով իր ուսումնառության առաջընթացը խթանող կամ խոչընդոտող գործոնները,

– ինքնուրույն կամ այլոց հետ համատեղ գնահատել իր գրանցած առաջընթացը:

ԱՌԻՊ-ի մշակման գործընթացին կարող են մասնակցել նաև այլ անձինք (օրինակ՝ աշակերտի ընկերները, քույրը կամ եղբայրը):

Սովորողի կրթությունը անհատական ուսուցման պլանով կազմակերպելու որոշումը, սովորողի ծնողի գրավոր համաձայնության հիման վրա, հաստատում է դպրոցի մանկավարժական խորհուրդը:

Տվյալ սովորողի ԱՌԻՊ-ի վերաբերյալ որոշումն ընդունելուց անմիջապես հետո սկսվում է նրա ԱՌԻՊ-ի համագործակցային պլանավորման գործընթացը՝ չորս փուլով:

Վարժություն 3.6

Լսարանը բաժանել 4 խմբի: «Խճանկար» մեթոդով ուսումնասիրել և քննարկել ԱՌԻՊ-ի համագործակցային պլանավորման գործընթացի չորս փուլերը:

Բաշխման նյութ 3.4

Փուլ 1

ԱՌԻՊ-ի մշակման գործընթացի հիմնական ուղղությունների սահմանում

ԱՌԻՊ-ի մշակման այս փուլը կենտրոնանում է ԱՌԻՊ-ի թիմի կազմավորման, թիմի անդամների պարտականությունների հստակեցման, աշխատանքների հիմնական ուղղությունների և սովորողի ԱՌԻՊ-ի նպատակների սահմանման վրա: Շատ կարևոր է ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակների շուրջ ձեռք բերված միասնական համաձայնությունը, որը խմբի բոլոր անդամների միջև ձեռք է բերվում համագործակցային պլանավորման գործընթացի շնորհիվ:

ԱՌԻՊ-ի թիմի կազմավորումը

Առավել հավանական է ունենալ խելամտորեն պլանավորված ԱՌԻՊ այն դեպքում, երբ հետագայում ԱՌԻՊ-ը իրականացնող բոլոր անձինք ԱՌԻՊ-ի շուրջ թիմային համագործակցության մաս են կազմում՝ սկսած այս փուլից:

Որպես կանոն՝ ԱՌԻՊ-ի թիմի անդամների շարքին են դասվում տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը ուսուցիչ(ներ)ը, ուսուցիչների օգնականները, օգնականները, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը *(եթե դպրոցում թիմի վերջին երեք անդամները չկան, ապա նրանք հրավիրվում են տվյալ ուսումնական հաստատության տարածքը սպասարկող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից: Ի դեպ, ըստ անհրաժեշտության հրավիրվում են նաև այն հատուկ մանկավարժը, հոգեբանը և սոցիալական մանկավարժը, ովքեր իրականացրել են սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը)*, սովորողի ծնողը և սովորողը՝

հնարավորության դեպքում: Պարտադիր չէ, որ վերը նշված ԱՌԻՊ-ի թիմի բոլոր անդամները միաժամանակ ներգրավվեն ԱՌԻՊ-ի բոլոր փուլերի մշակման գործընթացին: Տնօրենը, օրինակ, կարող է ներգրավված լինել ըստ անհրաժեշտության, սակայն փոխտնօրենի մասնակցությունը բոլոր փուլերում անհրաժեշտ է: Ինչ վերաբերում է ուսուցիչներին, ապա նույնպես պարտադիր չէ, որ տվյալ սովորողի բոլոր ուսուցիչները միաժամանակ ներգրավված լինեն այս աշխատանքներում: Հետագայում ուսումնական գծով փոխտնօրենը՝ մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների հետ միասին առանձին-առանձին կաշխատի մյուս առարկայական ուսուցիչների հետ՝ տվյալ առարկայի համար սովորողի տարեկան վերջնարդյունքի, նպատակադրումների և գործողությունների պլանավորումների մասով: Այս մասին առավել հանգամանորեն կներկայացվի III փուլի նկարագրության ընթացքում:

Յուրաքանչյուր սովորողի ԱՌԻՊ-ի մշակման համար թիմում ներգրավվում է մեկ կամ երկու ուսուցիչ, ովքեր ակտիվորեն ներգրավված են եղել սովորողի դիտարկման և գնահատման գործընթացներում և լավ ճանաչում նրա ուժեղ և թույլ կողմերը: Թե որ ուսուցիչը կամ ուսուցիչները պետք է ներգրավված լինեն ԱՌԻՊ-ի թիմում՝ կօգնեն հետևյալ ուղենշող հարցերը՝

- ո՞վ է ամենալավը ճանաչում սովորողին.
- ո՞վ կարող է արժեքավոր դիտողություններ, դիտարկումներ կատարել այն մասին, թե ինչն է իսկապես կարևոր տվյալ սովորողի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու համար.
- ո՞վ է տիրապետում այն գիտելիքներին ու հմտություններին, որն անհրաժեշտ են հաջող և արդյունավետ ԱՌԻՊ մշակելու և դրանով սովորողի ուսուցման գործընթացն իրականացնելու համար:

Վերոնշյալ հարցերի պատասխանները կօգնեն կազմավորել տվյալ սովորողի ԱՌԻՊ-ի մշակման այնպիսի թիմ, որն ամենայն հավանականությամբ խելամտորեն կմշակի համակարգված ԱՌԻՊ: Հակառակ դեպքում կկազմավորվի թիմ, որի անդամները պարզապես նշանակվում են՝ որպես տվյալ սովորողի ԱՌԻՊ-ի թիմի անդամներ, քանի որ դա մտնում է պաշտոնային նկարագրերի մեջ:

ԱՌԻՊ-ի թիմի անդամների պարտականությունները

Կարևոր է այն, որ ԱՌԻՊ-ի թիմի բոլոր անդամները հստակորեն հասկանան ու պատկերացնեն իրենց պարտականությունները թիմում, գիտակցեն, որ հետագայում նաև պատասխանատու են տվյալ սովորողի համար իրենց կողմից մշակված ԱՌԻՊ-ի իրականացման ընթացքի, ԱՌԻՊ-ով հաստատված՝ սովորողի տարեկան վերջնարդյունքների ձեռքբերման ուղղությամբ նրան ցուցաբերվող առաջադիմության շարունակական դիտարկման և գնահատման համար: ԱՌԻՊ-ի թիմի բոլոր անդամները պետք է նաև հստակ գիտենան, թե իրենցից ինչ է ակնկալվում, ինչպես, օրինակ՝

- ի՞նչ հաճախականությամբ պետք է ԱՌԻՊ-ի թիմի հանդիպումները տեղի ունենան,

- ինչպիսի՞ն պետք է լինի տվյալ ԱՌԻՊ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը:

Մինչ ԱՌԻՊ-ի շուրջ ձևավորված թիմը կսկսի աշխատել, թիմի անդամներից ուսուցչի օգնականը նշանակվում է որպես տվյալ աշակերտի ԱՌԻՊ-ի բոլոր չորս փուլերի գործընթացների ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման համակարգող: Սա չի նշանակում, որ տվյալ թիմի անդամը կրում է ԱՌԻՊ-ի համակարգման աշխատանքների առաջնային պատասխանատվությունը, քանի որ այդ պատասխանատվությունն արդեն իսկ կրում է ուսումնական հաստատության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: Այն դեպքերում, երբ տվյալ ուսումնական հաստատությունում դեռևս չկան ուսուցչի օգնականներ, այդ աշխատանքների համար պատասխանատու կարելի է առաջարկել տվյալ աշակերտի դասվարին, դասղեկին կամ դպրոցի տնօրենի հայեցողությամբ՝ որևէ այլ մանկավարժական աշխատողի:

ԱՌԻՊ-ի բոլոր չորս փուլերի գործընթացների կազմակերպական աշխատանքների պատասխանատվությունը կրող խմբի անդամը՝

- կազմակերպում է ԱՌԻՊ-ի թիմի անդամներին հանդիպումները թե՞ ԱՌԻՊ-ի մշակման և թե՞ վերանայման գործընթացների ժամանակ,
- արձանագրում է ԱՌԻՊ-ի թիմի որոշումները,
- ծնողներին ժամանակին տեղեկացնում և հրավիրում է պլանավորված հանդիպումներին ու ժողովներին.
- համակարգում է ԱՌԻՊ-ի մշակման և մշտադիտարկման գործընթացները.
- ուսուցչի միջոցով՝ նրա համաձայնությամբ ու արձանագրմամբ, փոփոխություն է առաջարկում ԱՌԻՊ-ում:
- Վարում է տվյալ սովորողի թղթապանակի գործավարությունը:

ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները

Թեև ԱՌԻՊ-ը լրացվում է որպես մեկ ուսումնական տարվա տևողության համար նախատեսված փաստաթուղթ, սովորողի ուսումնառության երկարաժամկետ նպատակները՝ **տարրական, հիմնական և միջնակարգ** (ավագ/արհեստագործական) կրթության վերջնարդյունքները, էական նշանակություն ունեն ողջամիտ և նպատակահարմար ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումներ սահմանելու համար: ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները սահմանվում են մի քանի տարվա համար: Օրինակ՝ տարրական դպրոցում սովորողի համար այն սահմանվում է մինչև տարրական դպրոցն ավարտելու ժամկետը: Այսինքն, այդ երկարաժամկետ նպատակները վերաբերում են ոչ միայն տվյալ ուսումնական տարվա համար մշակված ԱՌԻՊ-ին, այլև հաջորդող ուսումնական տարիների ԱՌԻՊ-ներին՝ մինչև տարրական դպրոցն ավարտելը: Նույն սկզբունքով էլ սահմանվում են հիմնական և ավագ դպրոցների սովորողների ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները:

ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները արտացոլում են այն համապատկերը, թե ինչի՞ պետք է հասած լինի սովորողը տարրական, հիմնական և ավագ դպրոցներն ավարտելիս:

Տվյալ սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները սահմանվում են ըստ «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված հանրակրթական և յուրաքանչյուր դասարանի կոնկրետ առարկայական ծրագրերի բովանդակության՝ պարտադիր նվազագույն պահանջների պարզեցմամբ և հարմարեցմամբ: Ընդ որում, սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները կարող են էականորեն տարբերվել «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջներից, քանի որ դրանք պարզեցվել և հարմարեցվել են տվյալ սովորողի կարողությունների առավելագույն ներուժին: Դրանց սահմանման ժամանակ պետք է հաշվի առնվեն ոչ միայն սովորողի ուժեղ, այլև նրա թույլ կողմերն ու անհատական նախասիրությունները:

ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները պետք է պատասխանեն հետևյալ հարցին. տարրական, հիմնական կամ միջնակարգ դպրոցն ավարտելիս նվազագույնը ի՞նչ գիտելիք, կարողություն և հմտություն կունենա սովորողը՝ ըստ ուսումնական առարկաների:

Սովորողի ԱՌԻՊ-ով սահմանված երկարաժամկետ նպատակների գնահատումն իրականացվում է իր ԱՌԻՊ-ին համապատասխան հարմարեցված ամփոփիչ գնահատման ձևաչափով՝ ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կողմից:

Ամփոփիչ գնահատման արդյունքով չափվում է ԱՌԻՊ-ով նախատեսված երկարաժամկետ նպատակների և թիրախային հմտությունների իրականացման աստիճանը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է ԱՌԻՊ-ի ընթացիկ գնահատումների ընթացքում պարբերաբար պատասխանել այս հարցին. «Իրատեսակա՞ն են արդյոք տարեկան և երկարաժամկետ նպատակներն ու թիրախային հմտությունները սահմանված, և արդյո՞ք դպրոցն ավարտելիս սովորողին հնարավոր է հասցնել ԱՌԻՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների նվազագույն մակարդակին՝ ըստ ուսումնական առարկաների»:

Միշտ հնարավոր է վերանայել ԱՌԻՊ-ը և իրականացնել համապատասխան փոփոխություններ և հարմարեցումներ՝ ավելի իջեցնելով և կամ բարձրացնելով տվյալ սովորողի համար յուրաքանչյուր առարկայի ծրագրի հիման վրա նրա յուրացման խնդիրների ու առանձնահատկությունների հաշվառմամբ պլանավորված «նշաձողերը»:

Երբ արդեն թիմը սահմանել է սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները, հաջորդ քայլն այն է, որ նրանք պետք է որոշեն անհրաժեշտ նվազագույն կարողությունների և հմտությունների այն շրջանակը, որոնք հնարավորություն են տալու նրան՝ հասնել այդ նպատակներին: Թիմի անդամները (ներառյալ ծնողը) պետք է համաձայնության գան սովորողի համար ամենազլխավոր և առաջնահերթ կարողությունների և հմտությունների շրջանակը սահմանելու հարցում, որոնք կարող են

բազմաթիվ լինել՝ ակադեմիական, հաղորդակցության, ինքնակազմակերպման, սոցիալական հմտությունների, սոցիալական շփումների և այլն: Թիմը պետք է կարողանա տվյալ տարվա համար սահմանել այդ բնագավառների առաջնահերթությունները: Ցանկացած սովորողի ԱՌԻՊ-ում նրա տարեկան արդյունքները պետք է մնան հասանելի, իրագործելի, և դրանց շուրջ պետք է համաձայնեցվեն դրանց ուղղությամբ մանկավարժական բոլոր աշխատողների անելիքները:

Փուլ II

Տեղեկատվության հավաքում, տրամադրում և առաջնահերթությունների սահմանում

Այս փուլում արդեն ԱՌԻՊ-ը մշակող թիմը ձևավորված է, թիմի անդամները գիտեն իրենց պարտականությունները, սահմանվել են սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները, թիմի անդամները գիտեն երեխայի զարգացման համար նախատեսված ու կարևոր առաջնահերթությունները, որոնք օգնելու են նրա համար սահմանված երկարաժամկետ նպատակների իրականացմանը:

ԱՌԻՊ-ի գործընթացի II փուլը կենտրոնանում է սովորողի մասին տեղեկությունների համակարգման վրա՝ ուսումնասիրելով նրա ուսուցման և ուսումնառության գործընթացին վերաբերող, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի նախնական և ֆունկցիոնալ գնահատումներից հավաքված տեղեկատվությունը, խորհրդակցելով այն անձանց հետ, ովքեր ամենալավն են ճանաչում սովորողին՝ կրկին դիտարկելով սովորողին դասերի ընթացքում և դասամիջոցներին: Սովորողի ուսումնառության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքին վերաբերող ընդհանուր տեղեկություններն ուսումնասիրելուց հետո ԱՌԻՊ-ի թիմի անդամները սահմանում են առաջնահերթությունները:

Սովորողի կարողությունների և հնարավորությունների, ինչպես նաև ունեցած դժվարությունների մասին առավել համակողմանի պատկեր ստանալու համար, ԱՌԻՊ-ը մշակող թիմի անդամներին խորհուրդ է տրվում հավաքել տեղեկատվություն հետևյալի մասին՝

- սովորողի նախասիրությունները և նրա պատկերացումներն իր սեփական կարողությունների և կարիքների մասին (այս տեղեկատվությունը հնարավոր է ստանալ՝ կախված սովորողի տարիքից, մտավոր ունակություններից, ցանկությունից և այլն),
- ուսումնառության հետ կապված սովորողի հաջողություններն ու դժվարությունները,
- հաղորդակցման հմտությունները,
- որոշումներ կայացնելու հմտությունները,
- սոցիալական հմտությունները,
- ակադեմիական ձեռքբերումները,
- դպրոց հաճախելիությունը,

- դպրոցում դրսևորած վարքագիծը,
- տեղաշարժման կարողություններն ու հնարավորությունները,
- առողջական խնդիրները,
- և այլն:

ԱՌԻՊ-ի թիմի կողմից ուսումնասիրվող սովորողի տեղեկատվական փաթեթը պետք է ներառի նրա անձնական գործի փաթեթը և առկա ուսումնական աշխատանքները (տվյալ առարկայի մասով):

Սովորողի անձնական գործի փաթեթը պետք է առնվազն ներառի՝

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի առաջին և երկրորդ մակարդակների գնահատման ողջ տեղեկատվությունը,
- անհրաժեշտ բժշկական վերջին տվյալները,
- մանկավարժահոգեբանական աջակցության անհատական պլանը,
- սովորողի ֆունկցիոնալ զարգացման ընթացիկ, կիսամյակային և տարեկան գնահատման արձանագրությունները,
- նախորդ տարիների ԱՌԻՊ-ները և դրանց վերանայման և գնահատման արդյունքում կատարված առաջարկները:

Ուսումնասիրվող ուսումնական աշխատանքների փաթեթը պետք է ընդգրկի՝

- աշխատանքային նմուշներ տետրերից, տեսանյութերից կամ ձայնագրություններից (առկայության դեպքում),
- վերջին անհատական կամ դասարանական ընթացիկ գնահատումները, ամփոփիչ գնահատումները կամ աշակերտի կարողունակության (կոմպետենցիայի) գնահատման այլ միջոցներ:

Սովորողի աշխատանքները դիտարկելիս շեշտը պետք է դրվի նրա ուժեղ կողմերի վրա և վեր հանվի նրա ունեցած դժվարությունների ընդհանուր պատկերը:

Սովորողի՝ մեծանալու և հասունացման հետ մեկտեղ կարող են աճել նաև ԱՌԻՊ գործընթացին նրա ներգրավվածության հնարավորությունն ու ներգրավման աստիճանը: Երեխան կարող է տեղեկություններ հաղորդել իր նախասիրությունների, հետաքրքրությունների, իր ուսումնառության հաջողություններին նպաստող ռազմավարությունների վերաբերյալ:

Սովորողին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները (հատուկ մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ և ուսուցչի օգնականներ) նույնպես կարող են ներկայացնել աշակերտի մասին իրենց ունեցած օբյեկտիվ և սուբյեկտիվ գիտելիքներն ու պատկերացումները:

Շատ կարևոր սկզբունք պետք է լինի, որ ցանկացած քննարկումների և տեղեկատվության տրամադրման կենտրոնում լինի և մնա սովորողին հաջողությանը հանգեցնող գործոնների բացահայտումը և ոչ թե խնդիրների, թերությունների և «չկարողանալ»-ների

ցուցակը: Դա չի օգնի ԱՌԻՊ-ը մշակող թիմին, ուսուցիչներին և, որ ամենակարևորն է՝ սովորողին:

Վերոնշյալ գործընթացում հավաքված ամբողջ տեղեկատվությունը ուսումնասիրվում և համախմբվում է՝ բացահայտելու ուսուցանվող առարկաների ծրագրերի շրջանակում սովորողի ուժեղ կողմերի, հետաքրքրությունների և դժվարությունների կայուն պատկերը: Այս արդյունքները տեղեկատվությունն ամփոփվում է՝ գրանցվելով ԱՌԻՊ-ի ձևաթղթում պահանջվող «Ընդհանուր տեղեկություններ» բաժնի համապատասխան մասերում:

Նախորդ փուլում սահմանված սովորողի՝ կրթության երկարաժամկետ նպատակների, իսկ այս փուլում սովորողի մասին ընդհանուր ճանաչողական տվյալների համապարփակ նկարագրությունը սովորողի կրթության տարեկան նպատակի առաջնահերթությունները սահմանելու ելակետ են:

Կարևոր է հիշել, որ ԱՌԻՊ-ը պետք է լինի տվյալ ուսումնական տարվա ընթացքում սովորողի կրթության կազմակերպման համար առաջնահերթությունների ամփոփ նկարագիրը՝ կապված երեխայի՝ տվյալ առարկայի տարեկան նպատակների շուրջ որոշումներ կայացնելու, թիրախային հմտությունների շրջանակները որոշելու և կարճաժամկետ խնդիրներ սահմանելու և դրանց իրականացման ռազմավարություններ մշակելու համար:

ՓՈՒԼ III

ԱՌԻՊ-ի մշակումը և օրինակելի ձևում մուտքագրումը

Այս փուլում ԱՌԻՊ-ի թիմի անդամներն արդեն ունեն սովորողի մասին մի շարք աղբյուրներից հավաքած և քննարկած բավականաչափ տեղեկություններ՝ նրա մասին համակողմանի պատկերացում կազմելու համար և համաձայնության են եկել ԱՌԻՊ-ի առաջնահերթությունների շուրջ:

ԱՌԻՊ գործընթացի «ԱՌԻՊ-ի մշակումը և գրի առնելը (մուտքագրելը)» փուլը կենտրոնանում է գրավոր ԱՌԻՊ-ի պատրաստման վրա: Այս գործընթացն իրականացվում է ԱՌԻՊ-ի օրինակելի ձևի էլեկտրոնային տարբերակի վրա: ԱՌԻՊ-ի օրինակելի ձևում ընդհանրացված է հանրակրթության տարրական, հիմնական և միջնակարգ մակարդակների և առարկայական ծրագրերից բխող տարեկան նպատակների, սովորողի զարգացման ենթակա բնագավառների, թիրախային հմտությունների, խնդիրների և դրանց իրականացման ռազմավարությունների առումով: ԱՌԻՊ-ի թիմը դրանք պետք է որոշակիացնի ըստ սովորողի կրթության մակարդակի և նրա համար սահմանված տարեկան նպատակների առումով:

ԱՌԻՊ-ի էլեկտրոնային տարբերակում գրի են առնվում արդեն սևագրված և վերջնականացված ձևակերպումները: ԱՌԻՊ-ում գրի են առնվում սովորողի անձնական

տվյալները և նրա մասին ընդհանուր տեղեկությունները և երկարաժամկետ նպատակները: ԱՌԻՊ-ի խումբը ըստ առարկայական ծրագրերի սահմանում և գրի է առնում պատշաճ և նպատակահարմար՝ սովորողի տարեկան նպատակները և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները՝ խնդիրները և դրանց իրականացման ռազմավարությունը, սովորողի համար անհրաժեշտ հարմարեցումները և աջակցության եղանակները: Ամբողջ տեղեկատվությունը գրանցվում է ԱՌԻՊ-ի էլեկտրոնային օրինակելի ձևում, որից հետո այն տպվում և ստորագրվում է ԱՌԻՊ-ի թիմի անդամների և գործընթացի բոլոր մասնակիցների կողմից, ինչպես նշված է օրինակելի ձևում: Ապա այն հաստատվում է դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից:

Զարգացման բնագավառների առաջնահերթությունների սահմանում

ԱՌԻՊ-ի թիմի կողմից բացահայտված և մատնանշված առաջնահերթություններից կախված՝ սովորողի տվյալ ուստարվա ԱՌԻՊ-ում կարող են հասցեագրվել զարգացման տարբեր բնագավառներ և **թիրախային** հմտություններ: Զարգացման բնագավառների օրինակներ են ակադեմիական, հաղորդակցության, ինքնակազմակերպման, սոցիալական հմտությունների, սոցիալական շփումների, ժամանցի, առաջադրանքների կատարողականության և այլ բնագավառները: Զարգացման բնագավառների թիվը կարող է շատ լինել, և ԱՌԻՊ-ի թիմը պետք է կարողանա ըստ տվյալ տարվա համար որոշված առաջնահերթությունների և նպատակների՝ ընտրել սովորողի համար առաջնային բնագավառները:

Հետագայում աշակերտի ընդհանուր առաջադիմության գնահատման համար այս թիրախային հմտությունները կկիրառվեն նաև որպես գնահատման ցուցանիշներ: Թիրախային հմտությունները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք այն հմտություններն են, որոնք, ըստ էության, սահմանվել էին որպես սովորողի համար կարիքներ (դժվարություններ), օրինակ՝ առաջադրանքին արձագանքելը, ինքնուրույն աշխատանքը կատարելը, մասնակցությունը դասարանային քննարկումներին և այլն:

Սովորողի տվյալ հմտության կատարողականության առկա մակարդակի իմացությունը կարևոր է նաև՝

- նյութերի, դասավանդման ռազմավարությունների և ընթացիկ գնահատումների հարմարեցման համար,
- սովորողի առաջադիմության ընթացիկ գնահատման համար՝ որպես սովորողի ուսումնական ձեռքբերումների ստորին շեմ,
- սովորողի կիսամյակային և տարեկան առաջադիմությունը գնահատելու համար:

ԱՌԻՊ-ի տարեկան նպատակները

Սովորողի ԱՌԻՊ-ի տարեկան նպատակը սահմանվում է ըստ հանրակրթական առարկաների չափորոշիչների և ծրագրերի ու հաշվի է առնում սովորողի

կատարողական առկա մակարդակը: Այդ մակարդակը տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության փուլում արդեն իսկ հայտնի է:

Կարևոր է, որ ԱՌԻՊ-ը մշակող թիմի անդամները համաձայնության գան սովորողի տարեկան նպատակների իրատեսական և իրագործելի քանակի շուրջ, որպեսզի ԱՌԻՊ-ը չդառնա չափազանց մեծածավալ և չափազանց բարդ ու անհնարին չլինի դրա նպատակների ու արդյունքների լրացումը: ԱՌԻՊ-ի էլեկտրոնային օրինակելի ձևում նշված է ընդամենը մեկ առարկայի համար սովորողի տարեկան նպատակի ենթաբաժին: ԱՌԻՊ-ի էլեկտրոնային օրինակում մուտքագրվում է արդեն սևագրած և վերջնականացրած ձևակերպումները, և, ըստ անհատականացված առարկայական ծրագրերի բովանդակային ընտրված բաղադրիչների քանակի՝ ավելացվում են տվյալ բաժնի նոր ենթաբաժիններ:

Սովորողի տարեկան վերջնարդյունքները սահմանվում են՝ հիմք ընդունելով տվյալ առարկայի չափորոշչով սահմանված նպատակները (դասարանի բոլոր սովորողների համար): Այդ նպատակները սովորողի ԱՌԻՊ-ում պետք է պարզեցվեն և հարմարեցվեն այն աստիճան, որ.

- ապահովեն սովորողի անհատական ուսուցման կազմակերպումը և համապատասխանեն ԱՌԻՊ-ի թիմի կողմից մատնանշված առաջնահերթություններին,
- առնչվեն սովորողի առկա դժվարություններին,
- բխեն սովորողի կատարողականության առկա մակարդակից,
- հաշվի առնեն սովորողի նախկին ձեռքբերումները և առաջընթացի արագությունը,
- նշաձող հանդիսանան սովորողի զարգացման համար, միաժամանակ լինեն նաև հասանելի,
- կենտրոնանան բովանդակային այն բաղադրիչների վրա, որոնք կսովորի երեխան, և ոչ այն ծրագրային նյութերի վրա, որոնք կսովորեցնեն ուսուցիչները,
- մատնանշեն, թե համաձայն ԱՌԻՊ-ի ինչ գործողություններ կանի սովորողը (կարողությունները), և ոչ թե նշի այդ ուղղությամբ նրա գործողությունների սահմանափակումները (անկարողությունները),
- լինեն իրատեսական՝ դասավանդման համար հասանելի ժամանակի և ռեսուրսների տեսանկյունից:

Սովորողի ԱՌԻՊ-ով սահմանված տարեկան նպատակների իրատեսական և ողջամիտ չափանիշներ կարող են համարվել հետևյալները.

- որոշակի են. գրված են հստակ, ընկալելի, ոչ խրթին լեզվով,
- չափելի և գնահատելի են. աշակերտի առաջընթացի նկարագրման, ընթացիկ գնահատումների և ամփոփիչ գնահատման հնարավորություն են տալիս,
- հասանելի են. իրատեսական են տվյալ սովորողի համար,

- նպատակահարմար են. հարմարեցված են տվյալ սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին.
- չափորոշիչահենք են, սահմանված են հստակ ժամանակահատվածի համար. կարող են ձեռք բերվել մեկ ուսումնական տարվա ընթացքում:

ԱՌԻՊ ունեցող սովորողը պարտադիր չէ, որ առարկայական բոլոր ծրագրերի մասով հարմարեցված և պարզեցված ծրագրերի կարիք ունենա: Հնարավոր է, որ որոշ առարկաների մասով տվյալ սովորողը ի վիճակի լինի հասնելու «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված նվազագույն պահանջներին և արդյունքներին՝ որոշակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների ապահովման պարագայում: Այդ դեպքում ԱՌԻՊ-ով տվյալ **առարկայի** տարեկան նպատակը չի սահմանվում, և սովորողի համար տվյալ առարկայի տարեկան նպատակն իրականացվում է նույն կարգով, ինչ դասարանի մյուս աշակերտների համար: ԱՌԻՊ-ում տարեկան նպատակները սահմանվում են միայն այն առարկաների մասով, որոնց սովորողը կարող է հասնել միայն իրեն հարմարեցված և պարզեցված ձևաչափով և շրջանակում:

Ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումների՝ խնդիրների սահմանումը

Ուսումնական տարվա ընթացքում սովորողի ձեռքբերումներին օժանդակելու համար նրա տարեկան յուրաքանչյուր նպատակ բաժանվում է ավելի փոքր և առավել իրագործելի քայլերի, որոնք կոչվում են ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումներ՝ խնդիրներ: Սովորաբար այդ խնդիրների իրականացումը պլանավորված է տվյալ առարկայի թեմատիկ պլաններով, որոնց վրա էլ կառուցվում է խնդիրների կամ կարճաժամկետ նպատակադրումների իրականացման շղթան:

Տարվա ընթացքում այս նպատակադրումների ձեռքբերումը պետք է նպաստի և հանգեցնի աշակերտի տարեկան նպատակների՝ վերջնարդյունքների ձեռքբերմանը: Կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումները՝ խնդիրները, պետք նկարագրվեն այնպես, որ մշտադիտարկման ենթարկվեն, լինեն չափելի և գնահատելի: ԱՌԻՊ-ի էլեկտրոնային օրինակելի ձևում նշված «Խնդիրներ (կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումներ)» ըստ առարկայական ծրագրերի տարեկան նպատակների» բաժնում և «Խնդիրների իրականացումն ըստ առարկայական ծրագրերի թեմատիկ պլանների» բաժնում նշված են ընդամենը մեկ առարկայի համար սահմանվող խնդիրների և այդ խնդիրների իրականացման ենթաբաժինները: Մուտքագրողը ԱՌԻՊ-ի էլեկտրոնային օրինակում ավելացնում է «Խնդիրներ» և «Խնդիրների իրականացում» բաժինների նոր ենթաբաժիններ՝ ըստ առարկայական ծրագրերի քանակի:

Կարճաժամկետ ուսումնառության այս նպատակադրումները՝ խնդիրները և դրանց իրականացումը (ըստ տվյալ առարկայի թեմատիկ պլանի) գրանցելիս ԱՌԻՊ-ի թիմը պետք է՝

- մատնանշի այդ խնդիրների իրականացման միջոցով սովորողի տարեկան նպատակի (վերջնարդյունքների) ձեռքբերման մեջ ընդգրկված գլխավոր բաղադրիչները կամ առաջադրանքները.

- դրանք գրի առնելիս կիրառի ողջամիտ չափանիշներ.

- սահմանի այդ կարճաժամկետ արդյունքներին հասնելու ժամկետները,

- սահմանի դասավանդման այն ռազմավարությունները և հարմարեցումները, որոնք օգնելու են սովորողին հասնելու այդ կարճաժամկետ արդյունքներին.

- մատնանշի այն անձին կամ անձանց, ովքեր պատասխանատու են դասավանդման իրականացման կամ գործողության կատարման համար,

- հատկորոշի այն պայմանները, որոնցում աշակերտը պետք է կատարի առաջադրանքը (օրինակ՝ օժանդակությամբ կամ առանց դրա):

Կարճաժամկետ նպատակադրումները՝ խնդիրները, ըստ թեմատիկ պլանի պետք է հասանելի և իրագործելի լինեն ճիշտ այն ժամանակահատվածում, որը սահմանված է դասարանի մյուս աշակերտների համար, որոնց համար ԱՌԻՊ սահմանված չէ: Ուստի կարևոր է, որ մշտադիտարկումների արդյունքում վերանայվեն և փոփոխվեն խնդիրները, եթե հիմնավորվում է դրանց անհրաժեշտությունը:

Կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումները՝ խնդիրները, կարող են դիտարկվել և վերանայվել հետևյալ հարցադրումների օգնությամբ՝ պատասխանելով հարցերին հստակ հիմնավորումներով.

- Արդյոք կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումը հասանելի^օ և իրագործելի^օ է նշված ժամանակահատվածում:

- Արդյո՞ք նշված ժամանակահատվածը ողջամիտ է:

- Արդյոք կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումը հնարավոր^օ է մշտադիտարկել, չափել և գնահատել:

- Արդյոք կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումը ներառո՞ւմ է ուսումնառության պայմանները՝ ստուգում ընթացիկ գնահատման չափանիշները և ձեռքբերման վերջնաժամկետը:

Եթե այս հարցերի պատասխանները վկայում են, որ սովորողը չի հասնում կարճաժամկետ այդ նպատակադրմանը, ապա խորհուրդ է տրվում **վերադիտարկել ու փոխել նպատակադրումը**, այլ ոչ թե երկարաձգել դրան հասնելու ժամանակը:

Այս բաժնի տեղեկատվությունը տրամադրում են դպրոցի տնօրինությունն ու սովորողի ծնողը:

Ազգանուն, անուն, հայրանուն

Ծննդյան վայրը.

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

Սեռը.

իգական

արական

Քաղաքացիությունը.

Բնակության հասցեն

Ուսումնական հաստատությունը

Դասարանը (նշել ուսումնական տարին)

Ծնողների (օրինական ներկայացուցիչների)

անուններն ու հեռախոսահամարները

Արտակարգ իրավիճակների դեպքում կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ:

2. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի ուժեղ կողմեր՝

Սովորողի ուժեղ կողմերն արդեն իսկ բացահայտվել են «Տեղեկատվության հավաքում և տրամադրում» փուլում, երբ թիմը հավաքել և համադրել է բազմաթիվ ու տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները՝ ուսուցչի, սովորողի, ծնողի, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի և այլնի տրամադրած տեղեկատվության հիման վրա: Այն տեղեկատվությունը, որը պետք է ներառվի այս բաժնում, ընտրվում է սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակների, տարեկան նպատակների և խնդիրների հաշվառմամբ: Նշված տեղեկատվությունը, որը ներկայացվում է ուսուցչի, սովորողի, ծնողի, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի և այլնի տրամադրած տեղեկատվության հիման վրա, կարող է վերաբերել երեխայի ակադեմիական հմտություններին, կյանքի և առօրյա կենցաղավարության հմտություններին, ֆիզիկական հմտություններին և վարքագծին և այլն: Այս տեղեկատվությունն այնուհետև կուղղորդի ընտրելու առավել ողջամիտ և ճիշտ ուսուցման և ուսումնառության ռազմավարություններ և նյութերի ու միջավայրի առավել խելամիտ հարմարեցումներ:

2.2 Բնագավառներ, որտեղ դրսևորվում են երեխայի թույլ կողմերը

Սովորողի թույլ կողմերն արդեն իսկ բացահայտվել են «Տեղեկատվության հավաքում և

տրամադրում» փուլում, երբ թիմը հավաքել և համադրել է բազմաթիվ ու տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները՝ ըստ ուսուցչի, սովորողի, ծնողի, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի և այլնի տրամադրած տեղեկատվության հիման վրա և որոնք էլ պետք է գրանցվեն այս բաժնում:

2.3 Ֆունցիաների կատարողականության մակարդակները՝ ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկության.

- *ձայնի և խոսքի*
- *լսողական*
- *տեսողական*
- *ինտելեկտուալ/մտավոր*
- *շարժողական*

Ֆունկցիաների կատարողականության առկա մակարդակների մասին տեղեկատվությունը հավաքվել է «Տեղեկատվության հավաքում և տրամադրում» փուլում, երբ ուսումնասիրվել են սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի առաջին և երկրորդ մակարդակների գնահատման ողջ տեղեկատվությունը: Ֆունկցիաների կատարողականության կամ գործառույթների կատարման այս մակարդակներն էական նշանակություն ունեն աշակերտի համար խելամիտ և չափելի տարեկան նպատակների ու խնդիրների սահմանման, ինչպես նաև ուսումնական նյութերի, դասավանդման ռազմավարությունների և ընթացիկ գնահատումների հարմարեցման եղանակների սահմանման համար:

2.4 Առողջական վիճակի մասին տեղեկություն

Սովորողի վերաբերյալ բժշկական տվյալները կարող են ստացված լինել ծնողներից, նրա հետ աշխատող առողջապահության ոլորտի մասնագետներից: ԱՌԻՊ-ում պահանջվող բժշկական տեղեկությունները պետք է նկարագրեն հետևյալը՝

- *երեխայի ներկա առողջական վիճակը,*
- *առողջական այն խնդիրները կամ հիվանդությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ աշակերտի ուսումնառության և կամ վարքագծի վրա,*

2.5 Հաշմանդամություն

- ունի
- չունի

Խոսքը բժշկասոցիալական փորձաքննության (ԲՄՓ) արդյունքում ճանաչված հաշմանդամության մասին է: Այս տեղեկատվությունը հաճախ անհրաժեշտ է լինում հաշմանդամության ոլորտում իրականացվող տարբեր ուսումնասիրությունների համար, ուստի կարիք կա, որ նման հաշվառում իրականացնի նաև հանրակրթական ուսումնական հաստատությունը: Այս նշումը հնարավորություն կտա իրականացնելու այդ հաշվառումը:

2.6 Սովորողի նախասիրությունները

Սովորողի նախասիրությունները արդեն իսկ բացահայտվել են «Տեղեկատվության հավաքում և տրամադրում» փուլում՝ նրա իսկ կողմից, ինչպես նաև ծնողի տրամադրած տեղեկատվությամբ: Նախասիրությունները գրի առնելիս պետք է հաշվի առնել, որ սրանք կարևոր տեղեկատվություն են՝ ընտրելու նրան առավել հաճելի և հասկանալի դասավանդման ռազմավարություններ, եղանակներ և խթանել նրա մասնակցությունը դասին:

2.7 Ինչպիսի՞ն է իրեն պատկերացնում սովորողը⁷ (նշել այն դպրոցը, որտեղ այս պահին սովորում է երեխան):

Այս բաժինը լրացվում է հնարավորության դեպքում՝ կախված երեխայի տարիքից և ֆունկցիոնալ հնարավորություններից:

Այս տեղեկատվությունը ևս բացահայտվում է «Տեղեկատվության հավաքում և տրամադրում» փուլում: Մեր կրթական պրակտիկայում հաճախ այս տեղեկատվությունը չի հավաքվում և կամ դրան հարկ եղած նշանակություն չի տրվում: Մակայն այն շատ օգտակար է ԱՌԻՊ-ի մշակման համար, որպեսզի ԱՌԻՊ-ը ոչ միայն իրատեսական լինի դպրոցի համար, այլև ԱՌԻՊ-ի պահանջների կատարման ապահովման տեսանկյունից ընդունելի լինի նաև սովորողի կողմից:

7. Հնարավորության դեպքում՝ ըստ աշակերտի ցանկության, կարողության:

2.8 Ինչպիսի՞ն է իր երեխային պատկերացնում ծնողը (նշել այն դպրոցը, որտեղ այս պահին սովորում է երեխան):

Այս տեղեկատվությունը կարևոր է, որպեսզի հայտնի լինի այն տեսլականը, որ ծնողն ունի իր երեխայի համար տվյալ կրթական մակարդակն ավարտելուց հետո: Դա նրան կդարձնի ավելի իրատես և կխթանի ծնողի ողջամիտ և արդյունավետ մասնակցությունը ԱՌԻՊ-ի գործընթացներին: Մա ևս շատ օգտակար տեղեկատվություն է, որով ԱՌԻՊ-ը ընդունելի և գնահատելի պետք է լինի նաև ծնողի կողմից:

3. Սովորողի վերջին գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը

Այս բաժնում լրացվում են, թե՛

ա) ե՞րբ են կատարվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի առաջին և երկրորդ մակարդակի գնահատումները՝ ժամանակագրական կարգով և յուրաքանչյուր գնահատման ամփոփ արդյունքը, օրինակ՝ սովորողն ունի մտավոր ֆունկցիաների միջին աստիճանի խանգարում,

բ) երբ են կատարվել երեխայի կրթական առաջընթացի կիսամյակային և տարեկան

ամփոփիչ գնահատումները (գիտելիք, կարողություններ և հմտություններ) ժամանակագրական կարգով և յուրաքանչյուր գնահատման ամփոփ արդյունքը: Ընդ որում, այս տեղեկությունները լրացվում են շարունակաբար՝ ամբողջ տարվա ընթացքում:

4. Բնագավառներ, որտեղ դրսևորվում են սովորողի ուժեղ կողմերը և կարիքները

Այս բաժնում ամփոփվում, ընդհանուր հանրագումարի են բերվում և հակիրճ շարադրվում ԱՈՒՊ-ի 2.1, 2.3, 2.4 և 2.6 ենթաբաժիններում արդեն նշված տեղեկատվությունը:

5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԿԱԿԱՌՆԵՐԻ (ՆՇԵԼ ԱՅՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՎՅԱԼ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ)

- մայրենի
- հայոց լեզու,
- գրականություն (ավագ դպրոցում՝ հայ գրականություն)
- օտար լեզու.
- ռուսաց լեզու
- մաթեմատիկա.
- հանրահաշիվ
- երկրաչափություն
- ինֆորմատիկա
- բնություն, բնական գիտություններ (ես և շրջակա աշխարհը, բնագիտություն, աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)
- հասարակություն, հասարակական գիտություններ (հայրենագիտություն, հայոց պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, համաշխարհային պատմություն, հասարակագիտություն, Հայաստանի աշխարհագրություն)
- արվեստ (ազգային երգ ու պար, երաժշտություն, կերպարվեստ)
- տեխնոլոգիա.
- ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն (ֆիզկուլտուրա, ՆԶՊ):

6. Ուսումնական առարկաներ, որոնց համար անհրաժեշտ է ԱՈՒՊ

Այս բաժնում նշվում են կոնկրետ այն առարկայական ծրագրերը, որոնց մասով էական

հարմարեցումների, պարզեցումների, փոփոխությունների կարիք կա, և որոնց մասով մշակվում է ԱՌԻՊ-ը:

7. Կրթության կազմակերպման համար անհրաժեշտ հարմարեցումները
Այս բաժնում նշվում են հարմարեցումների ցանկերը ըստ ուսումնական գործընթացի (օրինակ՝ մեթոդներ, առաջադրանքներ, նյութերի տրամադրում և այլն), միջավայրի (օրինակ՝ դասարանում նստելու տեղը, նստարանի տեսակը, լուսավորությունը, հեռավորությունը, անխոչընդոտ տեղաշարժվելու հարմարեցումները, տեսաձայնային նյութեր, խոշոր տառատեսակներ և այլն) և գնահատման գործընթացների (օրինակ՝ գնահատման մեթոդ, մշակված և հարմարեցված առաջադրանքներ, տևողություն և այլն):

8. ԱՌԻՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՑԱՆԿ

Այս բաժնում թիմը կարող է առաջարկել ուսումնական գրականության և ուսումնասօժանդակ նյութերի ցանկ և (կամ) ծրագրեր, որոնք ԱՌԻՊ-ի թիմը կարող է օգտագործել ԱՌԻՊ-ի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման համար:

9. ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ (ՕՐԻՆԱԿ՝ ՏԱՐԲԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ):

ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակներն արդեն սահմանվել են ԱՌԻՊ-ի գործառույթների առաջին փուլում: Դրանք պետք է համառոտ շարադրված մուտքագրել այս ենթաբաժնում: ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները սահմանվում են մի քանի տարվա համար: Օրինակ՝ տարրական դպրոցում սովորող երեխայի համար այն սահմանվում է մշակման պահի դրությամբ մինչև տարրական դպրոցն ավարտելու ժամկետը: Այսինքն՝ այս մասում նշված երկարաժամկետ նպատակները վերաբերում են ոչ միայն տվյալ ուսումնական տարվա համար մշակված ԱՌԻՊ-ին, այլև հաջորդող ուսումնական տարիների ԱՌԻՊ-ներին՝ մինչև սովորողի տարրական դպրոցն ավարտելը:

Սովորողի կրթության երկարաժամկետ նպատակները «Հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջների պարզեցման և հարմարեցման հիման վրա պետք է հաշվի

առնեն ոչ միայն սովորողի ուժեղ կողմերը, այլև նրա թույլ կողմերն ու անհատական նախասիրությունները: Ընդ որում, սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակների քանակն ու բովանդակությունը կարող են էականորեն տարբերվել «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն և տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարանի առարկայական ծրագրերի բովանդակային պահանջներից, քանի որ դրանք հարմարեցվել են տվյալ սովորողի կարողությունների առավելագույն ներուժին:

Ըստ հանրակրթության պետական չափորոշիչների, օրինակ՝ տարրական դպրոցի հիմնական նպատակներն են՝

- * մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը.

- * լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը.

- * աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը.

- * բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը.

- * բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը.

- * միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը:

Այս նպատակների պարզեցումն ու հարմարեցումը տվյալ սովորողի ներուժին կդառնան նրա տարրական կրթության երկարաժամկետ նպատակները:

10. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թիրախային այս կարողություններն ու հմտություններն արդեն սահմանվել են ԱՌԻՊ-ի գործառույթների առաջին փուլում, իսկ այժմ դրանք պետք է համառոտ շարադրված մուտքագրել այս ենթաբաժնում: Կարևոր հիշել, որ դրանք բխում են սովորողի ուսումնառության արդյունքների պլանավորման երկարաժամկետ նպատակներից և սահմանվում են որպես ընդհանրական կարողություններ և հմտություններ: Դրանք ներառում են փոխկապակցված ու փոխլրացնող գիտելիքներ, հմտություններ և արժեքներ, որոնք անհրաժեշտ են սովորողի անձնային կայացման, քաղաքացիական ակտիվության, սոցիալական ինտեգրման և կրթության հաջորդ մակարդակներում հետագա ուսումնառության ու գործունեության համար: Թիրախային հմտությունների սահմանման համար պետք է առարկայական ծրագրերի բովանդակության հարմարեցման հետ մեկտեղ նաև հաշվի առնել «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված տվյալ դպրոցի

(տարրական, հիմնական, միջնակարգ) շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և, հիմք ընդունելով սովորողի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ նպատակները, նրա ուժեղ և թույլ կողմերը, նախասիրությունները, հմտությունների կատարողականության մակարդակը: Այս ուղղությամբ ամբողջ տեղեկատվությունն արդեն հավաքվել է ԱՌԻՊ-ի մշակման առաջին և երկրորդ փուլերում: Առաջնահերթությունների սկզբունքով դրանք պետք է պարզեցվեն և հարմարեցվեն տվյալ սովորողի կարողությունների և հմտությունների զարգացման առավելագույն ներուժին, ինչպես նաև նախասիրություններին և պատկերացումներին:

11. ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Տարեկան նպատակներն արդեն սահմանվել են ԱՌԻՊ-ի գործառույթների երրորդ՝ «ԱՌԻՊ-ի մշակում և մուտքագրում օրինակելի ձևում» փուլում, որոնք պետք է մուտքագրել այս ենթաբաժնում:

Այս ենթաբաժնում պետք է նշվի տվյալ դասարանում ուսուցանվող առարկաների չափորոշիչներով, ծրագրերով ու սովորողի առավելագույն ներուժին համապատասխանեցված տարեկան նպատակները: Բոլոր տարեկան նպատակները հարմարեցվում են սովորողի առավելագույն ներուժին՝ հաշվի առնելով նրա կարողունակության առկա մակարդակը, որն արդեն հայտնի է տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության փուլում:

10.1 ԿԱՐՈՂՈՒՆԱԿՐԹՅԱՆ (ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ) ԱՌԿԱ ՄԱԿԱՐԴԱԿ

(ինչքան գիտի և ինչքան է կարողանում տվյալ առարկայից)

Այս ենթաբաժնում նշվում է տվյալ առարկայի անվանումը, թե սովորողն **ինչքան գիտելիքներ և կարողություններ ունի տվյալ առարկայի բովանդակության շրջանակում:** Այս թիրախային հմտությունները սովորողի հետագա զարգացման համար ելակետային ցուցանիշներ են, որոնց միջոցով հետագայում չափվելու են առաջընթացի աստիճանները: Կատարողականության առկա մակարդակի մասին տեղեկատվությունն արդեն սահմանվել է «ԱՌԻՊ-ի մշակում և մուտքագրում օրինակելի ձևում» փուլում: Դրանք հիմա պետք է մուտքագրել այս ենթաբաժնում:

Պետք է հիշել, որ ճիշտ ճանաչված առկա կարողություններն ու հմտությունները շատ կարևոր են ուսումնական գործընթացի կազմակերպման համար և հանդիսանում են ԱՌԻՊ-ով պլանավորված կրթության տարեկան արդյունքների գնահատման ելակետ:

10.2 ԱՌԱՐԿԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Այստեղ մուտքագրվում են տվյալ առարկայական ծրագրի տարեկան նպատակները, որոնք արդեն պարզեցվել, փոփոխվել և հարմարեցվել են տվյալ սովորողի կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին՝ թե՞ բովանդակային առումով և թե՞ ըստ նպատակների քանակի:

10.3 ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ

Մրանք ակնկալվող կարողությունների և հմտությունների այն շրջանակն են, որոնց պետք է հասնել ուսումնական տարվա ավարտին: Այս կարողություններն ու հմտությունները հանդիսանում են տարեկան նպատակի գնահատման ցուցանիշներ: Իսկ այս կարողությունների ու հմտությունների զարգացման աստիճանի համար, որպես ելակետային ցուցանիշներ են համարվում 10.1 ենթաբաժնում նշված ելակետային կարողությունները և հմտությունները:

Ընդ որում, կատարողականության ակնկալվող մակարդակի կարողություններն ու հմտությունները գնահատվում են կիսամյակների ավարտին և ամփոփվում են ուսումնական տարվա վերջին:

10.4 ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԱՐՈՒՄՆԵՐ

Այս ենթաբաժնում պետք է նշվի առարկայի համար վերևի 10.2 ենթաբաժնում մուտքագրված առարկայի տարեկան նպատակները՝ ըստ հերթական համարների, օրինակ՝ Նպատակ 1, նպատակ 2 և այլն:

Այնուհետև յուրաքանչյուր նպատակի տակ պետք է դրվի դրանից բխող խնդիրները՝ կարճաժամկետ նպատակադրումները համարակալմամբ, օրինակ՝ 1-ին նպատակի համար խնդիրները համարակալվում են՝ Խնդիր 1.1, Խնդիր 1.2 և այլն: ԱՌԻՊ-ի թիմի կողմից ԱՌԻՊ-ի գործառույթների երրորդ՝ «ԱՌԻՊ-ի մշակում և մուտքագրում օրինակելի ձևում» փուլում ըստ նպատակների արդեն սահմանված են խնդիրները՝ կարճաժամկետ նպատակադրումները: Հիմա դրանք պետք է մուտքագրել այստեղ:

Պետք է կրկին հիշել, որ խնդիրները ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումներ են՝ պլանավորված տվյալ առարկայի թեմատիկ պլանով: Տարվա ընթացքում այս նպատակադրումների ձեռքբերումը պետք է նպաստի և հանգեցնի մշակված տարեկան նպատակների՝ սովորողի կողմից իր համար սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումները՝ խնդիրները, պետք է նկարագրվեն այնպես, որ լինեն

10.5 ԽՐԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԻ

ԹԵՄԱ	ԺԱՄ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	ԹԵՄԱՅԻ	ՄԵԹՈԴ
Նշվում է տվյալ թեմայի անվանումը	Քանի՞ ժամ է հատկացված	<p>ԹԵՄԱՅԻ ԱՎԱՐՏԻՆ. ԳԻՏԻ, ԿԱՐՈՂ Է</p> <p>Յուրաքանչյուր թեմայի համար թեմատիկ պլանում արդեն սահմանված են այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք սովորողը կունենա թեման ամփոփելիս: Նույն սկզբունքով այդ ակնկալվող գիտելիքների և կարողությունների ծավալները հարմարեցվում են տվյալ սովորողի կարողությունների ներուժին:</p>	<p>ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ</p> <p>Ե՞րբ է պլանավորված</p>	<p>ՄԵԹՈԴ</p> <p>Ի՞նչ մեթոդ և հարմարեցումներ պետք արվեն թեմայի ամփոփիչ գնահատման ժամանակ:</p>

10. 6 ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Տվյալ առարկայի համար հարմարեցումներ՝ ուսուցման և ուսումնասիրության գործընթացի կազմակերպման, միջավայրի և գնահատումների ընթացքի: Տե՞ս 6-րդ ենթաբաժինը՝ Կրթության կազմակերպման համար անհրաժեշտ հարմարեցումներ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ՄԱԾԱՊ-ՈՒՄ)
 Այս ենթաբաժնի տեղեկատվությունն ամփոփ մուտքագրվում է տվյալ սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանից՝ ՄԱԾԱՊ-ից, որը հանդիսանում է սովորողի ԱՌԻՊ-ի անբաժանելի մաս հանդիսացող հավելված: Այս ամփոփ տեղեկատվությունը նպատակ ունի ապահովելու ՄԱԾԱՊ-ի ներդաշնակությունը ԱՌԻՊ-ով սահմանված խնդիրների, տարեկան և երկարաժամկետ նպատակների և համապատասխան թիրախային հմտությունների հետ: Հենց վերջիններով պետք է պայմանավորված լինեն մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տևողությունը և ծավալները:

13. ԱՌԻՊ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ (ԸՆԹԱՅԻՎ, ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ, ՏԱՐԵԿԱՆ)
 Այս բաժնի տեղեկատվությունը լրացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ նույն ժամանակահատվածում, ինչ նախատեսված է ամբողջ դասարանի համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ
------------------	------------------

14. ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ՀՄՄԱՐ (ԿԱՄ ՏԱՐԲԱԿԱՆԻՑ՝ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ և ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻՑ՝ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ) ԱՌԱՋԱՐԿՆԵՐ և ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐ:

Միջոցառում	Նկարագրություն
<p><i>Այս ենթաբաժնում նշվում են ԱՌԻՊ-ի տարեկան ամփոփիչ գնահատման արդյունքում ուսուցիչների, ծնողի, սովորողի, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների և այլոց առաջարկները հաջորդ տարվա ԱՌԻՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացների հետ կապված: Այն շատ կարևոր տեղեկատվություն է պարունակում այն ուսուցիչների համար, ովքեր սովորողին դեռ չեն ճանաչում:</i></p> <p><i>Այս տեղեկատվությունը կարևոր է նաև մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների համար՝ մշակելու և իրականացնելու սովորողի անցումային պլանները (նշված են ՄԱԾԱՊ-ում):</i></p>	<p><i>Այս բաժնում նկարագրվում է յուրաքանչյուր առաջարկ, և պլանավորվում է դրա իրականացումը:</i></p>

15. ԾՆՈՂԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Սա շատ կարևոր է, որպեսզի ծնողն ի սկզբանե իրատեսական պատկերացում ունենա իր երեխայի ԱՌԻՊ-ի մասին և համաձայն լինի, որ իր երեխայի ԱՌԻՊ-ի երկարաժամկետ և տարեկան նպատակներն ու խնդիրները տարբերվում են նրա դասընկերների համար սահմանված երկարաժամկետ և տարեկան նպատակներից ու խնդիրներից, ինչպես նաև՝ որ նրա կիսամյակային և ամփոփիչ գնահատումներն իրականացվելու են ըստ իր ԱՌԻՊ-ի:

ՓՈՒԼ IV

ԱՌԻՊ-ի իրականացում և գնահատում

ԱՌԻՊ-ը պլանավորվում և իրականացվում են դաս-պլանների միջոցով: Ինչպես դասարանի մյուս աշակերտների, այնպես էլ ԱՌԻՊ-ով սովորող աշակերտի յուրաքանչյուր դասը ուսուցչի կողմից պետք է պլանավորված լինի: Տարբերությունը միայն այն է, որ եթե ընդհանուր դասարանի համար դասի պլանավորումը հիմնված է տվյալ առարկայի թեմատիկ պլանի վրա, ապա ԱՌԻՊ ունեցող սովորողի դասի պլանավորումը բխում իր ԱՌԻՊ-ով հարմարեցված թեմատիկ պլանավորումից: Կարիք չկա դասի պլանը տվյալ սովորողի համար առանձին գրել, սակայն ընդհանուր դաս-պլանում պետք է հստակ երևա, թե ինչպես է պլանավորվել ԱՌԻՊ ունեցող սովորողի մասնակցությունը դասին՝ հիմնված ընդհանուր դասարանի համատեքստում իր ներուժին համապատասխան բովանդակային բաղադրիչների ուսուցման գործընթացների վրա:

Ընդհանրապես ուսուցչի կողմից դասին հանգամանորեն նախապատրաստվելը արդյունավետ դասավանդման կարևոր նախապայմաններից մեկն է: Նա յուրաքանչյուր դասի համար նախօրոք պետք է մշակի դաս-պլանը: Հաճախ է քննարկվում այն անհանգստությունը, որ ուսուցիչների համար դասի պլանավորումը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է, երբ դասարանում կա **ԱՌԻՊ-ով սովորող երեխա**, քանի որ ուսուցիչը մի կողմից պետք է պլանավորի և իրականացնի ընդհանուր դասարանի համար մշակված դասի պլանը և դրա հետ մեկտեղ՝ առանձին էլ պետք է պլանավորի և իրականացնի ԱՌԻՊ-ով սովորողի դասի պլան: Նման անհանգստությունները անհիմն են, քանի որ ուսուցիչը ոչ թե պետք է երկու առանձին դաս-պլան մշակի, այլ իր մշակած դաս-պլանում պետք է նաև հաշվի առնի դասարանում սովորող այն աշակերտներին, որոնց համար առաջադրանքները պետք է առավել անհատականացված և պարզեցված

տրվեն ու կիրառվեն դասավանդման առավել ճկուն մեթոդներ: Այս ամենի մասին նախօրոք հոգալը ուսուցչին հավելյալ վստահություն կհաղորդի, կօգնի դասի բնականոն ընթացքին և ժամանակն արդյունավետ տնօրինելուն:

Ուսուցիչը պետք է ապահովի, որ դասապրոցեսն ընդհանուր լինի բոլոր աշակերտների համար, որ ԱՌԻՊ ունեցող երեխային տրված առաջադրանքները լինեն նույն բովանդակության, բխեն նույն թեմայից, ինչ դասարանի մյուս աշակերտների համար, սակայն դրանք պետք է լինեն պարզեցված և հարմարեցված ԱՌԻՊ-ով սովորող երեխայի ունակություններին: Որքան շատ է ուսուցիչը տարբերակված և երեխայակենտրոն դասավանդման մեթոդներ կիրառում ամբողջ դասարանի համար, այնքան ավելի հեշտ է լինում տրամաբանական կապեր ստեղծել ԱՌԻՊ-ով անհատականացված ծրագրի և դասարանի համար նախատեսված ընդհանուր ծրագրի միջև: Վերջինը խթանում է դասարանում ստեղծել ուսուցման և ուսումնառության միասնական ներառական միջավայր, որտեղ ԱՌԻՊ-ով սովորող աշակերտներն իրենց դասարանի մաս են զգում, այլ ոչ թե իրենց ուսուցումն իրականացվում է այլ բովանդակային առումով տարբեր ծրագրով, որը նրանց մեկուսացնում է համադասարանցիներից:

ԱՌԻՊ-ի իրականացման մշտադիտարկում և գնահատում

ԱՌԻՊ-ի իրականացման ընթացքի մշտադիտարկման հարցում ուսուցիչներին մշտապես աջակցում են ուսուցչի օգնականները: Սովորողի առաջադիմության մշտադիտարկումն էական նշանակություն ունի դասապլանների մշակման, մեթոդների և նոր մոտեցումների ընտրության հարցում: Մշտադիտարկման ընթացքում է, որ կարող է նաև առաջարկություն ներկայացնել ԱՌԻՊ-ի վերանայման համար:

Ինչպես և մյուս աշակերտների դեպքում՝ գնահատման միջոցները, ինչպիսիք են՝ դիտարկումները, սովորողի ուսումնական աշխատանքների նմուշները, մասնակցությունը, դասի ընթացքում ցուցաբերած ակտիվությունը և այլն, օգնում են գնահատել, թե արդյոք ԱՌԻՊ-ով սահմանված տվյալ առարկայական ծրագիրն իրականացվում է ըստ պլանի, և արդյոք սովորողը ցուցաբերում է առաջընթաց: Ուսուցչի օգնականը սովորողի մշտադիտարկման գործընթացում սովորողի, ծնողների, ուսուցչի և թիմի այլ անդամների հետ կանոնավոր խորհրդակցությունների միջոցով հաճախ համակարգողի դեր է կատարում: Ուսուցիչները ԱՌԻՊ-ի իրականացման ընթացքի վերաբերյալ հավաքված տեղեկատվությունը ներկայացնում են ԱՌԻՊ-ը մշակող թիմին երեխայի առաջադիմության մասին: Դրանք ցույց են տալիս նաև ամենօրյա դասավանդման մաս կազմող ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների և ռեսուրսների արդյունավետությունը:

ԱՌԻՊ-ի իրականացման մեջ էական է ծնողների դերը: Նրանք կարող են աջակցել տնային ցանկացած առաջադրանքի կատարմանը՝ ամրապնդելով նոր ուսուցանված գիտելիքն ու հմտությունը: Ծնողի մասնակցությունը հոգեբանական մեծ աջակցություն է երեխային և խրախուսում է նրան հասնելու իր ԱՌԻՊ-ի նպատակներին:

Որպես մշտադիտարկման գործընթացի հետևանք՝ ԱՌԻՊ-ի թիմի անդամները կարող են կարիք ունենալ հանդիպելու՝ քննարկելու համար սովորողի փոփոխվող կարիքները, դժվարությունները և առաջադիմությունը: Այս հանդիպում-քննարկումների թիվը կարող է տարբեր լինել տարբեր սովորողների պարագայում: Բոլոր հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը, առաջարկություններն ու թիմային որոշումները պետք է արձանագրվեն և կցվեն սովորողի ԱՌԻՊ-ին:

ԱՌԻՊ-ի վերանայման նպատակով ԱՌԻՊ-ի թիմը պետք է տարեկան առնվազն երկու անգամ պաշտոնական հանդիպումներ ունենա: Այս հանդիպումների ընթացքում թիմի անդամ մանկավարժները տրամադրում են իրենց կողմից գործադրված ռազմավարությունների և սովորողի առաջադիմության գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը երեխային, նրա ծնողներին և թիմի մյուս անդամներին: Աշակերտը և ծնողներն առաջարկում են իրենց գնահատականը առ այն, թե ինչպես է ծրագիրը խթանում սովորողի զարգացումը և ուսումնառությունը:

Եթե սովորողը ցուցաբերում է դանդաղ առաջընթաց կամ ընդհանրապես չի առաջադիմում, թիմի անդամները կարող են վճռել փոփոխել ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները՝ խնդիրները, դասավանդման ռազմավարությունները, հարմարեցումները: Յուրաքանչյուր խնդրի փոփոխություն պետք է համապատասխանի ԱՌԻՊ-ով սահմանված՝ սովորողի տարեկան նպատակներին: Վերանայված խնդիրները պետք է գրանցվեն ստորև նշված ձևաչափում, հաստատվեն և կցվեն սովորողի ԱՌԻՊ-ին:

ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Վերանայման ամսաթիվ

Վերանայումն իրականացրել են՝ _____

1. (անուն, ազգանուն, ստորագրություն)-----

2. (անուն, ազգանուն, ստորագրություն)-----

3. (անուն, ազգանուն, ստորագրություն)-----

և այլք

1-ին կիսամյակ	Գնահատման մեթոդներ
Նոր խնդիրներ	

2-րդ կիսամյակ		Քնահատման մեթոդներ			
Նոր խնդիրներ					
ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԻ					
ԹԵՄԱ	ԺԱՄ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՎԱՐՏԻՆ, ԳԻՏԻ, ԿԱՐՈՂ Է	ԹԵՄԱՅԻ	ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻԶ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	ՄԵԹՈԴ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼՐԱՑՈՒՑԻԶ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ					
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ			Միջավայրային հարմարեցումներ		
Ծնողի անուն, ազգանուն, ստորագրություն, ամսաթիվ -----					

Ծնողի ստորագրությունը վկայում է, որ ծնողը համաձայն է փոփոխություններին:					

Վերանայման ընթացքում թիմը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- Արդյոք ԱՈՒՊ-ի խնդիրները համապատասխանո՞ւմ են սովորողի կարողությունների և հմտությունների առավելագույն ներուժին:
- Որքանո՞վ արդյունավետ են ընտրված մեթոդները, ուսումնական նյութերը և հարմարեցումները, և արդյոք օգնո՞ւմ են սովորողին հասնել՝ իր համար սահմանված խնդիրների իրականացմանը:
- Ի՞նչ առաջընթաց է գրանցել երեխան, և արդո՞ք այդ առաջընթացի դինամիկան բավարար է, որպեսզի նա հասնի իր ԱՈՒՊ-ի տարեկան նպատակին (կամ նպատակներին):

- Արդյոք ի հայտ եկե՞լ են նոր հանգամանքներ՝ պայմանավորված սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի աստիճանի փոփոխություններով, որոնք անհրաժեշտություն են դարձնում փոփոխություններ կատարել սովորողի ԱՌԻՊ-ում:

- Արդյոք ի հայտ եկած նոր հանգամանքները կարևո՞ր հիմնավորումներ են, որպեսզի սովորողի համար սահմանվեն տարեկան նոր նպատակներ և դրանց ուղղված նոր խնդիրներ:

- Արդյոք նորովի սահմանված տարեկան նպատակներն ու խնդիրները համապատասխանո՞ւմ են սովորողի ուժեղ կողմերին, դժվարություններին ու հետաքրքրություններին:

- Արդյոք սովորողի և նրա ծնողի կարծիքով վերանայված ԱՌԻՊ-ը բավարարո՞ւմ է սովորողի կարիքները:

Բոլոր փոփոխությունները գրանցվում են ԱՌԻՊ-ում: Եթե ԱՌԻՊ-ի վերանայումները հանգեցնում են սովորողի տարեկան նպատակների և խնդիրների փոփոխության, ապա հարկավոր է այն վավերացնել ծնողների ստորագրություններով՝ նշելով ամսաթիվը:

Եթե ԱՌԻՊ-ի թիմի հանդիպումների ժամանակ առաջարկվում են փոփոխել միայն մանկավարժական մոտեցումները և մեթոդները, միջավայրային հարմարեցումները, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման ծավալները, այլ ոչ թե սովորողի տարեկան նպատակներն ու խնդիրները, ապա ծնողը տեղեկացվում է այդ փոփոխությունների մասին, սակայն ծնողի ստորագրության կարիքը այս դեպքում չկա:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ԱՌԻՊ-ի թիմը կազմում է սովորողի ԱՌԻՊ-ի իրականացման կիսամյակային նկարագրական հաշվետվություն՝ հիմնված ընթացիկ գնահատումների և կիսամյակային ամփոփիչ գնահատումների արդյունքների վրա: Կարևոր է իմանալ, որ նույն սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանի (ՄԱԾԱՊ) իրականացման հաշվետվությունը ևս մշակվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ հիմք ընդունելով թե՞ սովորողի ԱՌԻՊ-ի ընթացիկ և կիսամյակային գնահատումների արդյունքները և թե՞ ՄԱԾԱՊ-ով պլանավորված գնահատումների արդյունքները: Այս հաշվետվությունների մեկ օրինակը կցվում է սովորողի ԱՌԻՊ-ին, իսկ մյուս օրինակը՝ տրվում ծնողին:

Ուսումնական տարվա վերջին (կամ եթե սովորողը փոխադրվում է դպրոցի մի մակարդակից հաջորդ մակարդակ).

- ԱՌԻՊ-ի թիմն իրականացնում է ԱՌԻՊ-ի վերանայում, գրանցում է սովորողի առաջադիմությունը տվյալ տարվա ավարտի դրությամբ,

- մշակում է սովորողի անցումային պլանը՝ գրի առնելով հաջորդ տարվա կամ հաջորդ կրթական մակարդակի (օրինակ՝ տարրականից հիմնական դպրոց) համար առաջարկություններ,
- նշում է կարևոր խորհուրդներ ապագայում աշակերտին դասավանդող ուսուցիչներին՝ կապված մեթոդների, ծրագրային և միջավայրային հարմարեցումների հետ,
- համառոտ տեղեկատվություն է ներկայացնում երեխայի հմտությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների մասին:

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

«Այն, ինչ այսօր երեխաները կարող են անել միասին, վաղը կանեն միայնակ»:
Ըն Վիզոտսկի

Վարժություն 3.7

Ակտիվացնող վարժություն «Քառակուսիներ»: Համագործակցային ուսուցումն սկսելու վարժություն:

«Քառակուսիներ»

Սա համագործակցային ուսուցումն սկսելու դասական վարժություն է: Այն կիրառելի է թե՛ մեծահասակների և թե՛ ամենափոքրերի հետ աշխատելիս:

Նպատակը

Սովորողին հնարավորություն տալ համագործակցելու և ցույց տալ համագործակցության հզորությունը:


Նյութերը

Յուրաքանչյուր մասնակցի համար՝ «Քառակուսիների» մեկական քարտ

Ընթացքը

1. Հանձնարարե՛ք մասնակիցներին ինքնուրույն հաշվել քառակուսիների քանակը՝ առանց պատասխանը բարձրաձայն ասելու:
2. Մասնակիցներին բաժանե՛ք խմբերի (3-4 հոգանոց):
3. Նախ խնդրե՛ք խմբերին պլանավորել, թե ինչպես են պատրաստվում աշխատելու (2 րոպե):
4. Ապա հրահանգե՛ք աշխատել և համատեղ գտնել լուծումը և ստեղծել քառակուսիների քանակը հաշվելու մաթեմատիկական ռազմավարություն:
5. Հիշեցրե՛ք նրանց, որ խմբի յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա ներկայացնել իրենց խմբի արդյունքը:

6. Հետո պատահականորեն ընտրե՛ք որևէ մասնակցի, ով կներկայացնի, թե ինչպե՛ս իրենց խումբը գտավ բոլոր քառակուսիները, և ո՛րն էր իրենց ռազմավարությունը: Նա պետք է ցույց տա նաև քառակուսիները: Ներկայացնողն իր խմբի ներկայացուցիչն է, և նրա հաջողությունը վկայում է այն մասին, թե ինչքանով է լավ աշխատել իր խումբը և օգնել յուրաքանչյուրին՝ հասկանալու լուծումը:
7. Մյուսների առաջադրանքն է՝ քննարկել, թե ինչքանո՛վ էր իրենց ռազմավարությունը տարբեր:
8. Ավելի ուշ կարելի է տեսնել նաև այլ խմբերի ռազմավարությունները:
9. Խնդրե՛ք մասնակիցներին ասել իրենց խմբային աշխատանքը բարելավելու համար անհրաժեշտ մի քանի հմտություններ:



Վարժություն 3.8

Մտազրոհ՝ Ուսուցչի անձնային և մասնագիտական որակները

Մասնակիցները պաստառի համապատասխան մասում լրացնում են արդեն մտազրոհի միջոցով ի մի բերված և խմբավորված մտքերը:

Անձնային որակներ	Մասնագիտական որակներ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂ: ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈՂՆԵՐ

Բաշխման նյութ 3.5

Ի՞նչ... Ինչո՞ւ... Ինչպե՞ս (մեթոդ)

Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և սովորողի համագործակցությունը՝ ուղղված ուսումնասության նախանշված արդյունքին:

Ուսուցման մոտեցումների և մեթոդների ընտրությունն առավելապես ուսուցչի խնդիրն է: Ուսուցիչը, որպես կրթական գործընթացի անմիջական կազմակերպիչ, շահագրգռված է ապահովելու ուսման բարձր որակ:

Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը, ի դեմս վաղվա՝ կրթված և հասուն, փոխօգնության պատրաստ, հանդուրժող, կյանքի դժվարին իրավիճակներում կողմնորոշվող և որոշումներ կայացնող քաղաքացու ձևավորումը: Համագործակցային ուսուցման կազմակերպման եղանակի և փոխներգործուն մեթոդների լիարժեք կիրառման դեպքում կարելի է հաջողությամբ հասնել ուսուցման վերոհիշյալ նպատակներին:

«Երբ սովորեցնում ես, սովորում ես կրկնակի»:

Մենեկա

Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն այն չի կարող կամայական բնույթ կրել: Մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ կան: Դրանցից են՝

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը (քանակը) և բարդությունը,
- սովորողների շահագրգռվածությունը,
- սովորողների տարիքն ու աշխատունակությունը,
- ուսումնական ժամաքանակը,
- նախորդ դասերին կիրառված մեթոդները,
- ուսումնական պարապմունքների տիպը և կառուցվածքը,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները,
- սովորողների թիվը դասարանում,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

«Այն, ինչ կարելի է սովորել մեծահասակի կամ հասակակցի օգնությամբ, մի քանիանգամ գերազանցում է մենակ սովորելու հնարավորությունները»:

Լև Վիգոտսկի

Վարժություն 3.9 M-աձև աղյուսակի միջոցով քննարկեք և ամբողջացրեք ԽԻԿ համակարգի (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում) յուրաքանչյուր փուլին համապատասխանող մեթոդները:

Խ	Ի	Կ

Բաշխման նյութ 3.6

Դասի հաջողությունը մեծապես պայմանավորված է դասի ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող մեթոդներով: Այդ մեթոդների ընտրությունը կախված է դասի նպատակից, ուսուցանվող նյութի թեմատիկայից, ինչպես նաև՝ խմբի յուրահատկություններից: Մեթոդները պետք է լինեն ոչ միայն արդյունավետ, այլ նաև՝ գրավիչ:

Մեթոդների ընտրության ժամանակ հարկ է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

- ուսուցման նպատակները, խնդիրները և բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,
- ուսուցման նյութի ընտրությունը և համապատասխանեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կարողություններին,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսումնական ժամաքանակը,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ուսուցման կազմակերպման պայմանները,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Մեթոդներով դասերը վարելու հիմնական քայլերն են՝

- դասի նպատակների հստակ սահմանում,

- սովորելու շահագրգռվածության ապահովում,
- տեղեկատվության մատուցում,
- սովորողների բաժանումը խմբերի կամ անհատական աշխատանքի կազմակերպում,
- ուսուցչի աջակցությամբ սովորողների աշխատանքի կազմակերպում,
- աշխատանքների վերջնական արդյունքի ներկայացում:

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: ԽԻԿ անվանումը եռափուլ համակարգի (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում) փուլերի անվանումների հապավումն է: Այն կիրառվում է ոչ միայն նյութը մատուցելիս, այլև՝ մինչև նյութը հաղորդելը և հաղորդելուց հետո:

ԽԻԿ համակարգն իր բնույթով կիրառելի է ցանկացած լսարանի հետ աշխատելիս: Այն կիրառելի է տարիքային բոլոր խմբերի սովորողների հետ:

Խթանումը ԽԻԿ համակարգի առաջին փուլն է, որի նպատակն է խմբային քննարկման միջոցով պարզել (վեր հանել) սովորողների ունեցած գիտելիքները նոր ներկայացվող նյութի վերաբերյալ: Այն կարելի է իրականացնել, օրինակ, մտազրոհի օգնությամբ, որտեղ ուսուցչի դերը պատասխանները ուղղորդելն է և դրանք գրանցելը:

Խթանման փուլը հետապնդում է երեք հիմնական նպատակ՝

1. բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները,
2. ակտիվացնել սովորողներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,
3. սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռվածություն:

Իմաստի ընկալումը եռափուլ համակարգի երկրորդ աստիճանն է: Այս փուլում հաղորդվում են նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը: Այն կարող է իրականացվել բազմազան ձևերով (տեքստը պատմելու, ցուցադրելու, կարդալու միջոցով նյութը մատուցելու և այլն):

Այս փուլում ևս կարևորվում է ուսուցչի նվազագույն ազդեցությունը սովորելու գործընթացի վրա, միաժամանակ, հետաքրքրությունը պահպանելու նպատակով խրախուսվում է ուսուցման որոշակի մեթոդների կիրառումը: Օրինակ՝ տեքստը կարդալու ժամանակ փոխներգործուն նշանների համակարգի օգտագործումը՝ V - ես սա գիտեմ, - իմ իմացածին հակասում է, + նոր տեղեկատվություն է, ? - անհասկանալի է, շփոթեցնում է, ! - հետաքրքիր է, կարելի է քննարկել: Փոխգործուն նշանների համակարգով մինչև տասը տարեկան երեխաներին դասավանդելիս խորհուրդ է տրվում օգտագործել միայն առաջին երկու նշանները (V - գիտեմ, + չգիտեմ):

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝

1. սովորողի մոտ հետաքրքրության աստիճանի պահպանումը,
2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,
3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կշռադաստումը ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է, որն ուսուցիչները դասավանդման ընթացքում հաճախ անտեսում են: Դասի ընթացքում աշակերտը մտապահում է և լավ հիշում է առաջին և վերջին տպավորությունը: Կշռադաստման փուլում սովորողը յուրացնում է նոր տեղեկատվությունը՝ հարմարեցնելով իր ունեցած գիտելիքներին: Փաստորեն սովորողի մոտ տեղի է ունենում իմացական կառույցի վերաձևավորում: Այս փուլում ևս ուսուցչի դերը նվազագույն է՝ հիմնականում ուղղորդող, հուշող, կարգավորող բնույթի: Այս փուլին նպաստող տարբեր մեթոդների օգտագործումն օգնում է, որ սովորողը՝

- հանրագումարի բերի իր գիտելիքները,
- յուրացնի նոր գիտելիքներ՝ դրանք դարձնելով իր սեփականությունը,
- վերակառուցի իր ունեցած նախկին գիտելիքները նոր ձևով բերած տեղեկատվության հիման վրա:

Կշռադաստման փուլում պետք է իրականացվեն հետևյալ նպատակները. սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, սովորողների հետ ծավալել նոր նյութի վերաբերյալ քննարկում՝ հնարավոր դարձնելով նույն գաղափարը տալ ձևակերպումներով կամ այլ մոտեցումներով, նոր գիտելիքները միաձուլել ունեցածին: ԽԻԿ համակարգը նպաստում է՝

- հանդուրժողականության ձևավորմանը, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը,
- լսելու կարողության զարգացմանը:

Մեթոդներ և հնարներ որոնք հարմար են կիրառել դասի տարբեր փուլերում

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում

- Մտազրոհ,
- Խմբավորում,
- Պրիզմա,
- Մտածիր-գույգ կազմիր-քննարկիր,
- Չնագնդի

Մեթոդներ և հնարներ, որոնք հարմար են կիրառել դասի իմաստի ընկալման փուլում


- T-աձև աղյուսակ,
-

- Հասկացությունների (գաղափարների) քարտեզագրում,
- Վեճի գծապատկեր,
- Փոխներգործուն նշանների համակարգ,
- Համառոտ դասախոսություն,
- Զրույց,
- Խճանկար,
- Խորանարդում,
- Շրջագայություն պատկերասրահում:

Մեթոդներ և հնարներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադաստման փուլում

- Քառաբաժանում,
- T-աձև աղյուսակ,
- Խորանարդում,
- 10-րոպեանոց շարադրանք,
- Հնգյակներ,
- Հասկացությունների քարտեզագրում:

Ամփոփում: Ուսուցման գործընթացի փուլերը



ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր դասի պլանավորման ժամանակ պետք է նախատեսել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի մյուս դասընկերների հետ համատեղ աշխատանքի կազմակերպումը:

Դասը կազմվում է հետևյալ հաջորդականությամբ.

նախ՝ հստակեցվում է ուսուցանվող նյութի կառուցվածքը, բովանդակությունը,
ապա՝ իրականացվում են գործողություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր սովորողի և դասարանի պահանջները:

Շատ հաճախ մենք սովորողի կրթության ճիշտ կազմակերպման համար իրականացնում ենք թիմային աշխատանք, ներառում տարբեր օղակներ, ներդնում ենք մեր բոլոր ռեսուրսները, օգտագործում մեր բոլոր ջանքերը, բայց գրեթե միշտ մոռանում ենք հաշվի առնել այդ օղակի ամենակարևոր անձի՝ սովորողի կարծիքն իր կրթության կազմակերպման վերաբերյալ: Չպետք է անտեսել ինքնագնահատման դերը սովորողի գնահատման գործընթացում: Այն չափազանց կարևոր է սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու համար: Շատ դեպքերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները նույնպես, ինքնուրույն կամ որևէ մեկի օգնությամբ, կարող են պատասխանել (նաև գրավոր) անհրաժեշտ հարցերին: Դա հետագայում հնարավորություն կտա ուսուցչին և սովորողի հետ աշխատող այլ մասնագետներին ավելի լավ ճանաչելու նրան, ծանոթանալու նրա կարողություններին, դժվարություններին, հետաքրքրություններին և կրթությունը կազմակերպելիս հաշվի առնել սովորողի բոլոր առանձնահատկությունները և կարծիքները:

1. Ուսուցիչը դասը պլանավորում է յուրաքանչյուր սովորողի համար:
2. Յուրաքանչյուր սովորող պետք է դասին ունենա լիարժեք մասնակցություն:
3. Ուսուցիչը կրթության հիմնական պատասխանատուն է:
4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դասի պլանավորումը պետք է ներառվի դասարանի ընդհանուր դասի պլանում:

Վարժություն 3.10 Լսարանի ընտրությամբ պլանավորել որևէ թեմայով դաս Բաշխման նյութ 3.6-ի պահանջներով:

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

Բաշխման նյութ 3.7

«Եթե չես պլանավորում անելիքներդ, ուրեմն պլանավորում ես անհաջողությունդ»:

Ռ. Շարմա

Նպատակային և արդյունավետ է համարվում այն դասը, որը նախապես պլանավորված է, և պլանում տեսանելի է, թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողը դասի որ փուլում ի՞նչ կարող է անել, և ինչպե՛ս կարող են նրան աջակցել դասընկերներն ու ուսուցիչը: Չպետք է մոռանալ, որ համադասարանցիները շատ կարևոր դերակատարում ունեն դասընկերներին աջակցելու հարցում:

Այս առաջադրանքը կատարելու համար, խումբը բաժանել փոքր խմբերի (ցանկալի է մինչև 3) և յուրաքանչյուր խմբին առաջարկել ընտրել դասի թեման և պլավորել՝ հաշվի առնելով հետևյալները.

Թեմայի նպատակը կարելի է սահմանել հետահայաց պլանավորման միջոցով: Նախ լսարանին ուղղել հետևյալ հարցը. «Ի՞նչ կուզենայիք, որ սովորողները թեմայի ուսուցման արդյունքում **իմանային, կարողանային և արժևորեին**»: Պաստառին գրել՝

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

- *ՍՈՎՈՐՈՂԸ ԿԻՄԱՆԱ...*
- *ՍՈՎՈՐՈՂԸ ԿԿԱՐՈՂԱՆԱ...*
- *ՍՈՎՈՐՈՂԸ ԿԱՐԺԵՎՈՐԻ (ԿԳԻՏԱԿՑԻ)...*

Վերոնշյալ երեք նպատակներից յուրաքանչյուրի համար նշել դասի թեմայի նպատակադրմանը համահունչ բոլոր գաղափարները: Ուսուցիչը կարող է լսարանի կողմից արդեն հնչեցված գաղափարներին ավելացնել այնպիսիք, որոնք լրացնում և ամբողջացնում են դասավանդվող թեման: Այստեղ կարևոր է այն գիտելիքների և կարողությունների սահմանումը, որոնք նախատեսված են, օրինակ՝ տվյալ դասարանում սովորող մտավոր և խոսքի ֆունկցիաների միջին ծանրության աստիճանի դժվարություններ ունեցող սովորողների համար:

«Սովորողը կարժևորի (կգիտակցի)» ձևակերպման տակ կարելի է գրել, օրինակ՝ «Սովորողը կգիտակցի...»... և այլն:

Դասի նպատակի սահմանման այս մոտեցումը կիրառելիս անհրաժեշտ է լսարանին նախապես չհայտնել, որ նման հարցադրումների գրանցման արդյունքում կարելի է ձևակերպել թեմայի (դասի) նպատակը: Դրա մասին կարելի է հայտնել լսարանին այս աշխատանքից հետո:

Այնուհետև պաստառին անհրաժեշտ է գրել «Դասի կահավորանքը», օրինակ Տվյալ լուսանկարներ, գծապատկեր, քարտեզ, կարճ տեֆիլմ և այլն:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Խթանում (5-7 րոպե)

Դասարանին կարելի է ուղղել բաց և փակ հարցեր, ինչպես նաև օգտագործել տարբեր մեթոդական հնարներ, օրինակ՝ «Խմբավորում» մեթոդական հնարը: Գրատախտակի կենտրոնում գրել առանցքային կամ բանալի բառը, որից հետո գրել այդ բառին առնչվող այլ բառեր կամ բառակապակցություններ, որոնք գծիկով միացվում են առանցքային բառին: Առանցքային բառը պետք է հոգեհարազատ լինի բոլոր սովորողներին:


ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ (20-25 րոպե)

Իմաստի ընկալման փուլում կարելի է օգտագործել «Հարցադրումներ» մեթոդական հնարը: Հնարը կիրառելիս դասարանը բաժանվում է խմբերի: Դասի վերաբերյալ դասագրքում շարադրված բնագիրը հատված առ հատված ընթերցում են: Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո դադար են առնում, ու խմբերը միմյանց հարցեր են տալիս կարդացած հատվածի վերաբերյալ: Ցանկալի է, որ ուսուցիչը ևս լինի որևէ խմբի անդամ: Ուսուցիչն ընդգրկվում է այն խմբում, որի անդամն է թեթև մտավոր խնդիրներ ունեցող սովորողը: Ուսուցիչը կարող է ուղղորդել, խմբի անդամներին տալ այնպիսի հարցեր, որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողը կպատասխանի:

Իմաստի ընկալման փուլում կարելի է օգտագործել «Ապագայի անիվ» մեթոդը:

«Ապագայի անիվ» մեթոդ

Ուսուցիչը պաստառին կամ գրատախտակին գրում է, օրինակ՝ «Ձեր կարծիքով ինչն⁰ և» հարցը և ապա սովորողներին հանձնարարում է մտազրոհի օգնությամբ թվել պատճառները՝ դրանք փոխկապակցելով «ինչն⁰ և» հարցադրումներով: Գաղափարներին քարտեզը ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին է ուղղում հետևյալ հարցը. «Ի՞նչ հետևանքներ ունեցավ... »: Այս ուղղությամբ «ինչն⁰ և» հարցադրմամբ փոխկապակցված գաղափարները քարտեզագրելուց և թեմայի (դասի) վերաբերյալ լրացումներ կատարելուց



հետո անցնել դասի կշռադաստման փուլին, որի ժամանակ սովորողը գալիս է որոշակի եզրահանգումների:

Վարժություն 3.11 Լսարանը բաժանվում է խմբերի ըստ ունկնդիրների մասնագիտական կրթության (դասվարներ, բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչներ, բանասերներ և այլն. Ըստ նպատակահարմարության՝ կախված մասակիցների կազմից կարող են ձևավորվել նաև առարկայական խմբեր). Յուրաքանչյուր խումբ կազմում է մեկ առարկայական դասի պլան՝ հաշվի առնելով կոնկրետ դասարանի օրինակ, որտեղ սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաներ:

Դասը պլանավորելուց հետո յուրաքանչյուր խումբ հնարավորություն ունի 8 րոպե ներկայացնելու այն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս. և ուրիշ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Եր., 2004: էջ 14-19:
2. Դավթյան Մ. և ուրիշ. Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ: Եր., ԱՅՌԵՔՍ, 2002: 310 էջ:
3. Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում: Զեկույց: 11 էջ:
4. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Եր., 2005: «Նորք» գրատուն:
5. Խոսքը ներառման մասին է. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիությունը Հայաստանում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2012: 134 էջ:
6. Խրիմյան Ս., Հովսեփյան Ա. և այլք: Դպրոցի ղեկավարում և կառավարում: Եր., ԱՅՌԵՔՍ, 2005: 129 էջ:
7. ԿԱՐԳ՝ հանրակրթության ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014 թ. հունվարի 21-ի N 37-Ա/Ք հրամանով):

8. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին. Հեշտ ընթերցվող տարբերակ: Եր., 2011: 51 էջ:
9. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների եռօրյա սեմինարի նյութեր: Եր.: 68 էջ:
10. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն):
11. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում:
12. «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 18.02.2016թ. N6 արձանագրային որոշում:
13. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշ. Համագործակցային ուսուցում: Եր., 2005: էջեր 29, 56, 83, 84
14. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ. Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ: Եր., 2010:
15. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս. Օ. Թեստի կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքներ: Եր., 2015:
16. Միքայելյան Օ. ՀՀ հանրակրթությունում ներառված սովորողի ձեռքբերումների գնահատման շուրջ: «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր: Եր., ԵՊՄՀ, 2014: 48-54 էջ:
17. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների բազմամասնագիտական թիմի վերապատրաստման դասընթացների բովանդակային նյութերի փաթեթ: Եր., 2010: 18 ժամ, 102 էջ:
18. Ներառական կրթությունը Հայաստանում: (Հոդվածների ժողովածու): «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, Եր., 2003: 98 էջ:
19. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Վարելլա Գ. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Եր.,

2005: «Նոյա՛ն տաշա՛ն»:

20. Крокер Л., Алгина Дж. Введение в классическую и современную теорию тестов: учебник. – М.: Логос, 2010.
 21. Anderson Prue, Morgan George. Developing Tests and Questionnaires for a National Assessment of Educational Achievement. The World Bank, 2008.
 22. Black P., Wiliam D. Assessment and Classroom Learning, Assessment in Education, March 1998, pp. 7-74.
 23. Black P., Wiliam D. Inside the Black Box: Raising Standards Through Classroom Assessment. Phi Delta Kappan, Vol. 80, No. 2, October 1998, pp. 139-148.
 24. Cunningham George K. Assessment in the Classroom. Taylor & Francis e-Library, 2005.
 25. Gordon Willard Allport. *Personality & social encounter*. (1960). Boston: Beacon Press
 26. Michael F. Giangreco Unterrichtsentwicklung Quick-Guides für Inklusion Teil 2, Lehren und Lernen, Landesinstitut für Schule und Medien, Berlin-Brandenburg, 2010.
 27. Payne D. A., Applied Educational Assessment. Wadsworth Group, Canada, 2003.
 28. Payne, D. A. Applied Educational Assessment. Canada: Wadsworth Group, 2003.
 29. Russell Michael K., Airasian Peter W. Classroom Assessment. McGraw-Hill, NY., 2012.
 30. Shirley Clarke, Unlocking Formative Assessment. Hodder & Stoughton, 2006
 31. www.lisum.berlin.brandenburg.de
-

**«Ներառական կրթություն» ուսումնամեթոդական ձեռնարկը
մշակել են՝**

Մուսաննա Թադևոսյանը

Անահիտ Բախշյանը

Արմեն Հովսեփյանը

Սաթենիկ Հայթյանը

Անահիտ Մուրադյանը

Մարինե Աղաջանյանը

Գայանե Կարապետյանը

Օնիկ Միքայելյանը

Հասմիկ Օհանյանը

Վարդուհի Կատինյանը
